

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՕՖԵԼՅԱ ՄՈՒՇԵՂԻ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2011

Տպագրվում է ՀՀ ՊԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ ք.գ.դ. պրո Լ. Ս. Հովսեփյան
Գրախոս՝ ք. գ. թ. դոցենտ Գ. Ս. Մխիթարյան

Խաչատրյան Օ. Մ. Մովսես Խորենացու «Հայոց պատմության»
բառապաշարի քննություն

Աշխատանքը վերաբերում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության»
բառապաշարի քննությանը: Հատկապես կարևորվել են պատմության բառերի
հաճախականությունը, բառապաշարի բառակազմական առանձնահատկությունները և
համեմատությունը հինգերորդ դարի գրական հուշարձանների հետ:

Գիրքը նախատեսվում է հայ բանասիրությամբ և հայոց լեզվի պատմության հարցերով
հետաքրքրվողներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառերի հաճախականությունը -----

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի
բառակազմական առանձնահատկությունները -----

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի համեմատությունը
5-րդ դարի գրական հուշարձանների բառապաշարի հետ -----

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովսեսու Խորենացու ստեղծագործական ժառանգությունը արդեն 1500 տարի գտնվում է հայ բանասիրության, իսկ վերջին 2-3 հարյուրամյակում նաև համաշխարհային գիտության ուշադրության կենտրոնում: Նրա անվամբ հավաստիորեն մեզ հասած և նրան վերագրվող երկերի քննությամբ զբաղվել են հայ և օտարազգի նշանավոր գիտնականներ՝ բանասերներ, պատմաբաններ, աղբյուրագետներ, փիլիսոփաներ, գրականագետներ, լեզվաբաններ: Սակայն մինչև օրս հրապարակի վրա չկա Խորենացու գլխավոր երկի՝ «Հայոց պատմության» լեզվի, մասնավորապես բառապաշարի ամբողջական քննություն: Նման ուսումնասիրությունը կարևոր նշանակություն կունենա ինչպես V դարի գրական հայերենի նկարագրության, այնպես էլ Խորենացու ստեղծագործության գնահատման, նրա հեղինակային ոճի առանձնահատկությունների բացահայտման տեսակետից: Որևէ երկի բառապաշարի ուսումնասիրությունը կարելի է կատարել տարբեր հայեցակետերից՝ իմաստային, կառուցվածքային, գործառական, ոճական և այլն: Այս բոլոր առումներով Խորենացու «Պատմության» բառապաշարի քննությունը հեռու է բավարար լինելուց, թեև ուսումնասիրողները այս կամ այն չափով անդրադարձել են Խորենացու լեզվին ու ոճին: Նշանակալից գիտական հետաքրքրություն է ներկայացնում Խորենացու օգտագործած

բառապաշարի քննությունը քանակական հետազոտության մեթոդներով, վիճակագրական տվյալների կիրառմամբ, որը կատարվում է առաջին անգամ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ գործածված բոլոր բառային միավորները գործառական բեռնվածության (հաճախականության) և բառակազմական կառուցվածքի տեսակետից՝ բացահայտելով նրանց քանակական բնութագրերը և կառուցվածքային կաղապարները: Այս նպատակի իրագործման համար լուծել ենք հետևյալ կոնկրետ խնդիրները.

- Կազմել ենք ուսումնասիրվող երկի հաճախականության բառարանը.
- Պարզել առավել հաճախական բառերի խոսքիմասային պատկանելությունը և իմաստային դաշտերը.
- Բացահայտել բաղադրյալ բառերի բառակազմական կաղապարները.
- Պարզել բառակազմական կաղապարների հաճախականությունը.
- V դարի կարևորագույն երկերի համեմատությամբ առանձնացրել ենք միայն Խորենացու կողմից կիրառված բառային միավորները.
- Քանակական տվյալներով պարզել Խորենացու և նշված երկերի բառապաշարի մերձավորության աստիճանը:

Մեր ուսումնասիրության մեջ լիակատար ընդգրկմամբ ներկայացրել ենք Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարը, պարզել յուրաքանչյուր բառի (բառային միավորի) հաճախականությունը, առանձնացրել առավել հաճախական բառերը, որոշել նրանց խոսքիմասային պատկանելությունը և իմաստային առանձնահատկությունները, բացահայտել ենք բաղադրյալ բառերի բառակազմական կաղապարները, կատարել այդ կաղապարների իրացումների վիճակագրական հետազոտությունը ինչպես Խորենացու երկում առանձին վերցրած, այնպես էլ V դարի լեզվավիճակի համեմատությամբ: Համատարած ընտրանքի սկզբունքով Խորենացու բառապաշարը համեմել ենք V դարի ինքնուրույն հեղինակներ Կորյունի, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եզնիկի, Եղիշեի, Փարպեցու, ինչպես նաև թարգմանական գրականության հուշարձաններից «Աստվածաշնչի» և Խորենացու անվան հետ կապվող երկու ստեղծագործության՝ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» և «Պիտոյից

գրքի» բառապաշարի հետ: Նույն սկզբունքով պարզել ենք Խորենացու գործածած բառերի արտացոլումը «Նոր հայկազյան բառարանում», ներկայացրել ենք նշված երկերի համեմատությամբ միայն Խորենացու կողմից գործածված բառային միավորներն ու դարձվածքները:

Այս աշխատանքը կարևոր տեսական նշանակություն կունենա լեզվաբանական խնդիրների լուծման մեջ ճշգրիտ մեթոդների կիրառման, հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության և ոճագիտության համար, կնպաստի V դարի լեզվավիճակի ավելի խոր ուսումնասիրությանը, գրական լեզվի մշակման ուղիների, մասնավորապես անհատական բառակերտման և տերմինաշինության հնարավորությունների ու սկզբունքների բացահայտմանը: Բառապաշարի գործառական բեռնվածության և բառակազմական կաղապարների հետազոտման մեջ վիճակագրական տվյալների կիրառումը հնարավորություն կտա հետազայում ավելի ճշգրիտ մեթոդներով լուծելու Խորենացուն վերագրվող երկերի հեղինակային որոշակիացման (ատրիբուցիայի) խնդիրները: Աշխատանքում տեղ գտած նյութը և նրա վերլուծությունը գործնական կիրառություն կգտնի հին հայերենի լեզվական շտեմարանի ստեղծման ժամանակ, ինչպես նաև կօգտագործվի V դարի գրաբարի պատմական բառարանի մեջ: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել բուհերում հայոց լեզվի պատմության, գրաբարի դասավանդման ժամանակ և ոճագիտության ու պատմական բառագիտության հատուկ դասընթացներում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից: Ունի ծանոթագրություններ, գրականության ցանկ և բովանդակություն:

*

* * *

Մովսես Խորենացին հայ մատենագրության պատմության մեջ հայտնի է որպես գիտնական, պատմաբան, քննադատ, աղբյուրագետ, հայերենագետ, որի անունը

տասնյակ դարերով սրբություն սրբոց է եղել հայ ժողովրդի համար: «Տիեզերահռչակյալ քերթող և թարգմանիչ», «պատմահայր», «քերթողահայր», «հայ Չերոդոտոս» և նման այլ տիտղոսներով է որակվել, իսկ եվրոպացի բանասեր Գուտշմիտը նրա գործը արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնությանը առաջիններից մեկն է համարել Սուրբ գրքից հետո:

Մեծ է խորենացու դերը հայոց լեզվի և գրականության, պատմության, գիտության, մշակույթի զարգացման գործում, որը արդյունք է հեղինակի մեծ տաղանդի ու փայլուն կրթության, կայուն համոզմունքի ու աշխարհայացքի, առողջ քննադատության ու հայրենասիրության, աշխատասիրության և նրբաճաշակության:

Խորենացու «Չայոց պատմությունը» մեր ազգին իր անցյալի հետ կապող հնագույն աղբյուրն է, որը հարուստ նյութ է հանդիսացել ապագա ուսումնասիրողների համար, որոնք նրանից փաստեր են վերցրել, դասեր առել՝ հետևելով նրա պատմագրության սկզբունքներին: Խորենացու մասին պահպանվել են կենսագրական կցկտուր տեղեկություններ: Ենթադրվում է, որ նա ծնվել է Տարոն գավառի Խորոնք գյուղում մոտ 410 թ.: Աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին: 20 – 25 տարեկան հասակում մեկնել է Ալեքսանդրիա (Եգիպտոս)՝ կրթությունը շարունակելու: Չմտացել է քերթողական արվեստի, ճարտասանության, քերականության մեջ, խորացրել հունարենի իր իմացությունը: Չայրենիք է վերադարձել 440թ.՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահից հետո: Այդ ժամանակ Չայաստանում նկատվում էին երկու իրարամերժ մտավորական հոսանքներ՝ ասորական և հունական: Մրցությունը ծավալվում էր հիմնականում կրոնական ու մշակութային հողի վրա: Մշակութային հոսանքին պատկանողները կոչվում էին թարգմանիչ կամ քերթող, որոնց գլխավոր ներկայացուցիչներից մեկն է եղել Մովսես Խորենացին:

Ասորական հոսանքն ուժեղ է եղել իր թվով, իսկ հունականը՝ մտավոր բարձր զարգացմամբ: Մովսես Խորենացին բուռն պայքար է մղել ասորական խմբի դեմ: Չնայած նրանց կողմից հալածվել է, կրել զրկանքներ, ապրել աղքատության մեջ, բայց չի ընկճվել, ընդհակառակն, կյանքի վերջին տարիներում մեծ համբավ է ձեռք բերել, փայլել իբրև ամենից հեղինակավոր դեմքը 5-րդ դարի վերջում: Չենց Սահակ

Բագրատունուց հայոց պատմությունը գրելու առաջարկություն ստանալը վերն ասվածի լավագույն ապացույցն է:

Ուսումնասիրողները նշում են, որ Խորենացու գործերը մեզ չեն հասել ամբողջությամբ, շատ գրվածքների անհետ կորել են, մյուսները ոչնչացվել: Հայ բանասիրության մեջ նրան են վերագրվել «Պիտոյից գրքի» և «Պատմութիւն Աղեքսանդի Սակեդոնացւոյ» երկի թարգմանությունը և ինքնուրույն այլ աշխատություններ («Ներբողեան հռիփսիմեանց», «Պատմութիւն հռիփսիմեանց», «Ճառ Վարդավառի», «Թուղթ առ Սահակ Արծրունի»):

Խորենացու ստեղծագործության գլուխգործոցը «Հայոց պատմությունն» է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ծագման ժամանակաշրջանից մինչև իր դարը (428թ. Արշակունիների թագավորության անկումը) ընկած ժամանակահատվածը: Իր երկը գրելիս Խորենացին օգտագործել է ավելի քան 40 աղբյուրներ, որոնցից հատկապես կարևորել է մարաբասյանը և ժողովրդական երգերը: Նա առաջինն ու միակն է եղել, որ արժևորել է ազգային բանահյուսության գանձերը, որոնք անուշադրության էին մատնվել և գնահատվեցին միայն 19-րդ դարի կեսերին:

Խորենացին առաջինն է, որ պատմական գրականության մեջ մտցրել է ժամանակագրություն, քանզի «Ոչ է պատմութիւն ստոյգ, առանց ժամանակագրութեանց» (Բ. ձբ.):

Խորենացու կարծիքով, պատմությունը սոսկ անցքերի դասավորություն չէ, այլ մի գիրք, որտեղ անցքերը պետք է լուսաբանված լինեն, անձերը՝ գնահատված:

Նա պատշաճ վերաբերմունք է տածել պատմական աղբյուրների, պատմական անձանց և առհասարակ ազգի ու նրա պատմության հանդեպ:

Սովսես Խորենացին ամեն ինչից վեր է դասել դպրությունը, արվեստները, մատենագրությունը, ընդհանուր առմամբ՝ լուսավորությունը: Հելլենական քաղաքակրթության, մշակույթի լավագույն կրողն ու տարածողն է եղել՝ հունական դպրոցն ու գիտությունը հակադրելով ասորականին ու պարսկականին:

Սովսես Խորենացին միանգամայն իրավացիորեն գովաբանում է Սահակ Բագրատունուն, որ հետամուտ եղավ ուսման և դպրության ու իրեն առաջարկեց գրել

«Հայոց պատմությունը», գովեստներ է շռայլում նաև Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին, որոնք Հայաստանի լուսավորության մեծ մշակները եղան:

«Երկար ժամանակ ապրելով Ալեքսանդրիայում հունական մշակույթի լազավույն շրջանում, որտեղ շփվում էին իրար հետ Արևելքն ու Արևմուտքը, աշակերտել է նշանավոր մի գիտնականի, որին կոչել է Նոր Պղատոն, ուսումնասիրել է ոչ միայն հունարեն լեզուն, այլև հռետորական արվեստը, եկեղեցական գրականությունը, բանաստեղծությունը, որի արտահայտություններն են հունասիրությունը, հունաբան լեզուն, գեղարվեստական գրական ճաշակը, լայն աշխարհայացքը, մտքի անկախությունը և, բնականաբար, իր մասին բարձր գիտակցությունը՝ համեմատած իրեն ժամանակակից ազգայինների հետ», - գրում է Ստ. Մալխասյանը¹:

Այսպիսով՝ Մովսես Խորենացին արտասահմանում հունական կրթություն ստացած, «եվրոպականացած» եզակի հեղինակ է, որի կրթությունը բազմակողմանիորեն արտահայտվում է նրա պատմության մեջ: Խորենացին ձգտում է մեր լեզուն մշակել ու հասցնել հունարենի զարգացման աստիճանին: Ն. Ակինյանն այսպես է բնութագրել Խորենացու լեզուն. «...մինչ Մովսես ծերության ալիքով ծաղկած, ավելի խոհական ոճով, ավելի պերճաբան լեզվով կջանա արտահայտություն շնորհել յուր մտածունքներուն: Նա տարիների ընթացքին ավելի զարգացուցած է յուր մտավոր պաշարը, ավելի խորացած իմաստասիրության ուսումներու խորքը»²:

Խորենացին ըստ արժանվույն գնահատվել է հայ դասական բանասիրության կողմից և մշտապես եղել է հետազոտողների՝ պատմաբանների, աղբյուրագետների, բանասերների, գրականագետների, արվեստաբանների ուշադրության կենտրոնում:

Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» շուրջ մղվող բանավեճը հարյուր տարուց ավելի է տևել, որին մասնակցել են բազմաթիվ օտարազգի և հայ բանասերներ (Բաումգարտներ, Գելցեր, Գուտշմիտ, Լանգլուա, Յուրբան, Մակլեր, Մառ, հայ գիտնականներից Մ. Աբեղյան, Ն. Ադոնց, Ղ. Ալիշան, Գարագաշյան, Խալաթյան, Այտընյան, Մալխասյան, Պատկանյան, Պարոնյան, Տաշյան և այլն): Այս պայթարը ծավալվել է հիմնականում երեք հարցի շուրջ՝ «Հայոց պատմության» գրության ժամանակը, արժանահավատությունը և նրա աղբյուրները:

Չանդրադառնալով հայ բանասիրության մեջ բազմիցս արժարժված այդ հարցերին, որոնք անմիջաբար չեն առնչվում մեր ուսումնասիրության խնդիրներին ու նպատակներին, նշենք, որ թեև Խորենացու գրական ժառանգությունն ուսումնասիրվել է բազմակողմանիորեն, սակայն նրա լեզուն հատուկ քննության չի ենթարկվել:

Խորենացուն նվիրված աշխատությունների մեջ մենք անշուշտ հանդիպում ենք նաև նրա լեզվին վերաբերող առանձին դիտողությունների, դիպուկ բնորոշումների և գնահատականների: Այսպես, բերենք մի ընդարձակ քաղվածք Ստ. Մալխասյանցի Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940թ. հրատարակության ներածությունից. «Խորենացու լեզուն արվեստական է և բարձր, որով զանազանվում է Փավստոսի և Փարպեցու գրեթե ժողովրդական լեզվից: Նա փայլում է ճոխությամբ, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներդաշնակ դասավորությամբ, կանոնավոր քերականությամբ թե՛ ստուգաբանության և թե՛ շարահյուսության մեջ, չնայելով, որ երբեմն շատ երկար պարբերություններ է գործածում, ոչ մի անգամ խոսքի տրամաբանական կապը չի խզվում, այլ ստացվում է մի բարդ, բազմահարկ և գեղեցիկ դասավորված կառուցվածք: Շաղկապների, կրճատված նախադասությունների նպատակահարմար գործածությամբ ոչ միայն խոսքը պարզ և հասկանալի է դարձնում, այլև ընթերցողին միջոց է տալիս հետևելու հեղինակի մտածողության եղանակին: Նա լեզվի վարպետ է և քերականության ընձեռած բոլոր միջոցները հմտորեն ծառայեցնում է իր մտքերն արտահայտելուն»³:

Խորենացու լեզվին Ստ. Մալխասյանցը անդրադարձել է նաև իր «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատության մեջ հունաբան դպրոցի գործունեության և ժամանակի հարցի քննության կապակցությամբ: Ցույց տալու համար, որ Խորենացին չի կարող լինել 9-րդ դարի հունաբանության ներկայացուցիչ, Մալխասյանցը որպես ապացույց վկայակոչում է «Հայոց պատմության» լեզվի ու ոճի առանձնահատկությունները: «Խորենացու պատմության լեզվի ընդհանուր նկարագիրն է ճոխ և ընտիր հայկաբանություն, որի մեջ տեղ-տեղ ցրվում են հունաբանության տարրեր, ինչպես կանաչ դաշտի վրա գույնզգույն ծաղիկներ, որոնցով դաշտը զարդարվում ու երփներանգ է դառնում, առանց սակայն ընդհանուր կանաչությունը

կորցնելու: Պատմության այն հատվածները, որոնք զերծ են հունաբան տարրերից, և այսպես է նրա մեծագույն մասը, այնքան ընտիր հայերեն են, դասական հայերենի ոգով, որ դժվար է զանազանել հայկաբանության լավագույն տիպարների լեզվից: ... Այսպիսի լեզու 9-րդ դարում փնտրելը զուր աշխատանք է...»⁴:

Խոսելով Խորենացու ստացած կրթության, նրա ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքների մասին՝ Ստ. Մախասյանցը գտնում է, որ պատմիչը «...Ոչ միայն կատարելապես տիրում է քերթողական արվեստին, որը գործ է ածում մեծ հմտությամբ ու գեղարվեստական ճաշակով, ոչ միայն լիովին գիտե հունարենը, որի հետևողությամբ ստեղծում է բազմաթիվ հայերեն բառեր ու բարդություններ և օգտվում է նրա համաձայնական ձևերից, այլև ծանոթ է հելլենական պատմության, բանաստեղծության, դիցաբանության, փիլիսոփայության, որոնցից հարկավոր դեպքում օգտվում է»⁵:

Խորենացին առատորեն, բայց միաժամանակ տեղին է գործածում շաղկապները, որոնցով պարզ ու հասկանալի է դառնում կապը նախադասությունների միջև: Մտքերի հաջորդականությունը պարզ ու տրամաբանական է և հնարավորություն է տալիս հետևելու հեղինակի մտածողության ընթացքին: Նա մեծ լեզվաշինարար է, որը քերականական միջոցների հմուտ գործածությամբ արտահայտում է իր մտքերը: Հունաբանների օրինակով ստեղծել է նախդրավոր շատ բառեր: Նա սիրում է ճարտասանական ձևեր (նմանություն, բաղդատություն, հարցում, բացականչություն կամ բարառություն), որոնց միջոցով նրա խոսքը դառնում է պատկերավոր ու արտահայտիչ:

Թեև տեղ-տեղ Խորենացու կազմած նախադասությունները բարդ են ու երկարաշունչ, այնուամենայնիվ, նրա լեզուն պարզ ու հասկանալի է:

Ստ. Մախասյանցը, համեմատելով Խորենացու լեզուն և ոճը Բուզանդի և Ղ. Փարպեցու լեզվի ու ոճի հետ, գտնում է, որ Խորենացու լեզուն արվեստական է և բարձր, փայլում է ճոխությամբ, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներդաշնակ դասավորությամբ, կանոնավոր քերականությամբ: Թեև երբեմն շատ երկար

պարբերություններ է օգտագործում, սակայն միշտ պահպանում է մտքի տրամաբանական կապը, և ստացվում է մի բարդ, բազմահարկ և գեղեցիկ կառուցվածք:

Խորենացու լեզուն բարձր է գնահատել նաև Մ. Աբեղյանը՝ ասելով. «Եւ նրա ոճը, ինչքան էլ հաճախ զարդարուն ու պերճ է, բայց ընդհանուր առմամբ շատ պարզ, մեկին է, թեթև, շատ կանոնավոր ու դյուրին, միանգամայն ավտորժելի, երբեք չոր ու ցամաք»⁶:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Խորենացին նպատակադրվել է այնպիսի գիրք գրել, որ իր հայրենակիցները հաճախ ու անհագորեն կարդան, իսկ «Այս նպատակին հասնելու համար պետք է ոչ լոկ պատմություն հորինել, այլ բանաստեղծություն գրել, կամ հորինել բանաստեղծական պատմություն»⁷:

Բացի Խորենացու լեզվի և ոճի մասին ընդհանուր դիտողություններից, հետազոտողները կատարել են նաև նրա բառապաշարի ավելի մասնավոր քննություն, փորձեր՝ իրենց այս կամ այն տեսակետը ապացուցելու համար: Այս առումով Խորենացու բառապաշարը դիտարկում է ակադ. Յ. Մանանդյանը իր «Խորենացու առեղծվածի լուծումը» գրքի հավելվածում, որն այդպես էլ վերնագրված է՝ «Խորենացու պատմության բառապաշարը»: Ձգտելով ապացուցել, որ Խորենացին 9-րդ դարի հեղինակ է, Յ. Մանանդյանը նրա գործունեությունը կապում է հունաբան դպրոցի հետ: Վկայակոչելով իր «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928) աշխատությունը, նա գտնում է, որ Խորենացու երկը պարունակում է այնպիսի «հետնագույն բառեր», որոնք չեն հանդիպում հունաբան դպրոցի առաջին և երկրորդ շրջանի հեղինակների գործերում, բայց «սովորական են ութերորդ և իններորդ դարերի մատենագրական երկերում»⁸: Այնուհետև Մանանդյանը բերում է 100 բառ, որոնք այսպես կոչված Պիտոյից – Փիլոնյան խմբի հատուկ բառեր են, և մոտ 80 բառ, որոնք «Կարող են կազմված լինել ավելի ուշ շրջանում»: Դրանցից են՝ **առարկութիւն, արտադատութիւն, արտահալածեն, արտասանութիւն, բաղդատեն, բացափայլեն, գերազանցեն, ստորագրութիւն, վերծանութիւն, պարականոն** և այլն:

Այս տեսակետը սակայն հետագայում մերժվում է և ապացուցվում է Խորենացու 5-րդ դարի հեղինակ լինելը: Իսկ նրա բառապաշարի ընդհանրությունը հունաբան դպրոցին պատկանող այլ հեղինակների բառապաշարի հետ բացատրվում է այն բանով,

որ հունաբան դպրոցը սկսել է գործել շատ ավելի վաղ, քան կարծում էր Յ. Մանանդյանը, այսինքն՝ սկսած դեռևս 5-րդ դարի 2-րդ քառորդից⁹: Բացի այդ, Խորենացին ինքը կազմել է բազմաթիվ բառեր հունաբան դպրոցի ստեղծած բառակազմական կաղապարներով, ինչպես կտեսնենք ստորև Վ. Առաքելյանի աշխատության քննության ժամանակ:

Խորենացու լեզվի ու ոճի մասին առավել մանրամասն ու հանգամանալից հետազոտությունը մինչև օրս մնում է Վ. Առաքելյանի՝ Խորենացուն նվիրված հատվածը «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության»¹⁰ աշխատության մեջ: Ըստ Վ. Առաքելյանի հաշվարկների՝ Խորենացին գործածել է ավելի քան 800 բառ, որոնք իրենից առաջ գրական լեզվի մեջ չեն գործածվել ու զարմանալիորեն այսօր էլ մեր լեզվում լայն տարածում են գտել: Հատկապես հունարենի ազդեցությամբ նրա կազմած բառերից շատերը պահպանել են իրենց կենսունակությունը: Օրինակ՝ **առարկութիւն, առընթեր, արտաճառել, արտասահման, արտասանութիւն, արտափայլել, բաղդատել, գերազանցել** և այլն: Մովսես Խորենացին իբրև ժառանգություն մեզ է թողել՝ պետական, ռազմական, հասարակական այլևայլ փոխհարաբերություններ արտահայտող և մեր գրական լեզվի առանցքը կազմող բազմաթիվ գիտական, պատմագիտական, նկարագրական բառեր: Օրինակ՝ **այրասիրտ, աչագեղ, արժանափառ, բազմաշրջութիւն, բարեզնաց, ընդդիմակայել, խայտակն, ծաղկակալ** և այլն: Խորենացու խոսքը պատկերավոր է, հարուստ չափազանցություններով ու շրջաբանություններով: Խորենացին առաջինն է կիրառել ժողովրդախոսակցական արմատական բառեր, որոնք մինչև այժմ էլ գործածական են գրական լեզվում: Օրինակ՝ **աչիկ, ապշոպ, պատառուած, վառուած** և այլն: Թեև Խորենացին մեծ ազդեցություն է կրել հունարենից, սակայն փոխառյալ բառերը մեծ թիվ չեն կազմում: Օրինակ՝ **ագոն, աթերայ, աթութայ** և այլն: Կրոնակեղեցական բառերը հազվադեպ են: Օրինակ՝ **աստուածաբան, աստուածածին, աստուածառաք, աստուածգիտութիւն** և այլն: Խորենացին գործածել է նաև հնացած բառեր, ասենք՝ **աղխազուր, ախտակցել, ազգաբանել** և այլն:

Խորենացին ունի շարահյուսական յուրատեսակ կառույցների օրինակներ՝ հունարենի կաղապարով: Վ. Առաքելյանը բերում է Ս. Մալխասյանցի դիտարկումները

Խորենացու լեզվում: Նա գրում է, որ ըստ Մալխասյանցի՝ Խորենացին գործածում է հայցական հոլովով ենթակա անորոշ դերբայի կողքին, երկրորդական նախադասությունները հարաբերականի հետ գլխավոր նախադասությունից առաջ է դնում, հունարենի ազդեցությամբ երկրորդական նախադասությունները տարբեր կրճատման է ենթարկում, կրավորական բայերին հատկացնում է ուղիղ խնդիր, անցյալ դերբայը գործածում է իբրև որոշիչ, լրացումներն ու լրացյալները իրարից հեռացնում է այլ բառերով:

Վ. Առաքելյանը ավելացնում է, որ Խորենացին գործածում է ուղղական հոլովով ենթակա անորոշ դերբայի կողքին, հայցական և ուղղական հոլովով ենթականեր՝ նաև անցյալ դերբայի հետ, հունարենի ազդեցություն է համարում ենթակայի և դերբայով արտահայտված ստորոգյալի՝ հոլովով համաձայնությունը, ինչպես և բացառական հոլովով ենթական անորոշ դերբայի հետ: Հունաբանություն է նաև նամակների սկզբում գործածվող ողջույնի ձևը:

Խորենացին ստեղծել է պատկերավոր խոսքի հրաշալի օրինակներ՝ գործածելով հակադրություններ, չափազանցություններ, փոխաբերություններ՝ հաճախ ընդարձակածավալ խոսքի հետ երբեմն իր միտքը հակիրճ ձևակերպելով:

Սովսես Խորենացու բառապաշարի քննությանն անդրադարձել է Հ. Սիմոնյանը «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» աշխատության ծանոթագրություններում և մի շարք հոդվածներում¹¹: Նա գտնում է, որ Աղեքսանդր Մակեդոնացու պատմության 5-րդ դարում կատարված թարգմանության հեղինակը Սովսես Խորենացին է, որ անհերքելի փաստերով ապացուցվում է հայ բանասիրության մեջ: Խորենացու «Հայոց պատմության» աղբյուրներից մեկն էլ եղել է «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը»: «Լեզվական շատ իրողություններ, առաջին անգամ հանդիպելով այս երկու հնագույն հուշարձաններում, հիմք են տալիս ենթադրելու, թե դրանք ստեղծվել են Կեղծ – Կալիսթենեսի երկի թարգմանության ժամանակ Խորենացու կողմից»¹²:

Սրան հակառակ, «Պիտոյից գրքի» իր հրատարակության մեջ Գ. Մուրադյանը, անդրադառնալով հայերեն բնագրի ստեղծման հարցին, նշում է, որ թեև ավանդաբար գրքի թարգմանությունը վերագրվել է Սովսես Խորենացուն, «Սակայն այն գրված է

այնքան խրթին և անկանոն լեզվով, որ հետազոտողները ստիպված են եղել կասկածի ենթարկելու այդ ավանդությունը: «Պիտոյից գիրքը» կրել է իր հունարեն նախօրինակի և հայերեն աղբյուրների ուժեղ ազդեցությունը՝ իր հերթին նախօրինակ և աղբյուր հանդիսանալով բազմաթիվ հեղինակների համար, «Պիտոյից գրքի» հունաբան բառապաշարի մեծ մասը բաղկացած է նախորդ թարգմանություններում ստեղծված նորակազմ բառերից: Այն հայ գրականության առաջին հուշարձանն է, որ գրված է այդօրինակ բառերի և նրանց նմանակությամբ ստեղծված բազմաթիվ նորաբանությունների կիրառությամբ, այդ ուղղությունը հետագայում զարգացել և լայն կիրառություն է գտել, բավական է հիշատակել այնպիսի անուններ, ինչպիսիք են Գրիգոր Նարեկացին և Գրիգոր Մագիստրոսը»¹³:

Այսպիսով, Գ. Մուրադյանը Խորենացու և «Պիտոյից գրքի» բառային զուգահեռությունները բացատրում է միայն վերջինիս ազդեցությամբ պատմիչի լեզվի վրա և ոչ թե երկու աղբյուրների հեղինակների նույնությամբ: Իր հրատարակության համար 1 հավելվածում Գ. Մուրադյանը բերում է «Պիտոյից գրքի» նորաբանությունները Խորենացու «Չայոց պատմության» բնագրում: Դրանք կան ճիշտ նույնն են, կան ունեն բառակազմական և խոսքիմասային որոշ տարբերություններ: Այդ համընկնումներն են՝ **ապագայ, արտասանութիւն, բազմաձեռն, բազմասեր / բազմասերմ, գեղեցկադիմութիւն** (Խորենացունը՝ գեղեցկադիմակ), **խեղդամահ, ծաղկաւետ, կարեկցութիւն** (Խորենացունը՝ ցաւակցիմ), **միջերկրեայ, միայնամարտութիւն, յելուզակ, նորահրաշ, շրջակայ, սիրելի, վերադիտեմ** (Խորենացունը՝ վերադէտ), **փառամուլիմ** (Խորենացունը՝ **փառամուլ, փառամուլութիւն**), **փոխարկութիւն**¹⁴: Ինչպես տեսնում ենք, այստեղ կան ոչ միայն հունաբան դպրոցին հատուկ կազմություններ (**ապագայ, արտասանութիւն, վերադիտեմ** և այլն), այլև սովորական բաղադրություններ՝ գրաբարի բառակազմության օրենքներով:

Խորենացու «Չայոց պատմության» բառապաշարը կան նրա մեջ մտնող որոշակի բառախմբեր հետազոտողներին հետաքրքրել են նաև լեզվաբանական զանազան խնդիրների լուծման կապակցությամբ: Այդ տեսակետից նշանակալից է Գ. Ջահուկյանի «Մովսես Խորենացու «Չայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական

աղբյուրները» հատվածը¹⁵, որտեղ հեղինակը, ի մի բերելով և ստուգաբանական քննության ենթարկելով Խորենացու երկուն հանդիպող բազմաթիվ անձնանուններ, պարզում է նրանց ծագումը, փոխառությունների աղբյուրները, կառուցվածքային, իմաստային և այլ առանձնահատկությունները:

Խորենացու «Հայոց պատմության» հարուստ ու ճոխ բառագանձը, անվրեպ ու ճշգրիտ բառագործածությունները, բազմաթիվ նորաստեղծ բառերն ու ոճերը, ներդաշնակված երկի գեղարվեստական ու պատմագիտական բարձր արժանիքների հետ, հսկայական ազդեցություն են թողել հետագա սերունդների մտքի ու հոգու վրա: Հետազոտողները, բանասերները, գրողները, ընթերցողները բազմիցս անդրադարձել են Խորենացու «Հայոց պատմության» տեքստին, այնտեղից քաղելով իմաստուն մտքեր, թևավոր խոսքեր, ասույթներ, ընտրել դրանք որպես իրենց գործերի բնաբան և այլն: Այս տեսակետից հարկ է հիշատակել Գ. Թոսունյանի կազմած «Մովսես Խորենացու ասույթները»¹⁶ փոքրիկ ժողովածուն, որտեղ արտացոլված են Խորենացու երկի լեզվաոճական հարստության, ճշգրիտ ու պատկերավոր բնութագրումների բնորոշ նմուշները:

*

* *

Հարցի պատմության այս համառոտ շարադրանքից երևում է, որ թեև հետազոտողները այս կամ այն առիթով անդրադարձել են Խորենացու «Հայոց պատմության» լեզվին և մասնավորապես նրա բառապաշարին, սակայն մինչև օրս գոյություն չունի երկի բառապաշարի առանձին մենագրական քննություն, որին և նվիրված է ներկայացվող աշխատանքը:

Քանի որ մեր ուսումնասիրությունը կատարել ենք հիմնականում քանակական հետազոտության՝ վիճակագրական մեթոդներով, ուստի ներկա աշխատությունը հենվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանի վրա, որը մեզ հնարավորություն է տվել բացահայտել ու ներկայացնել երկի բառապաշարի

քանակական բնութագրերը (բոլոր բառագործածությունների ընդհանուր քանակը, օգտագործված բառերի, ավելի ճիշտ՝ բառարանային միավորների թիվը և յուրաքանչյուր միավորի գործածման հաճախականությունը): Այնուհետև պարզել, թե առավել հաճախական բառային միավորները իմաստային ինչ դաշտերի մեջ են մտնում, խոսքիմասային ինչ պատկանելություն ունեն, և որքանով են պայմանավորված երկի ժանրային առանձնահատկություններով:

Հայտնի է, որ քանակական հետազոտությունները լեզվաբանության բնագավառում ինքնանպատակ չեն և ծառայում են լեզվի մասին որակական բնութագրումներ ստանալուն: Այս առումով բառերի հաճախականությունը, ինչպես և այս կամ այն բառի առկա լինելը տվյալ երկում կարող է կարևոր լինել հեղինակի ոճի բնութագրման, լեզվագործածության միայն իրեն բնորոշ առանձնահատկությունների պարզաբանման տեսակետից:

Խորենացու բառապաշարի ինքնատիպությունը և նրա հեղինակային անհատականությունը պարզելու նպատակով նրա գործածած բառերը համեմատել ենք 5-րդ դարի ինքնուրույն մատենագրության կարևորագույն աղբյուրների (Եզնիկ, Բուզանդ, Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշէ, Փարպեցի), ինչպես նաև Աստվածաշնչի համաբարբառի ու Խորենացու անվան հետ կապվող թարգմանական երկու գործերի՝ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» և «Պիտոյից գրքի» բառապաշարի հետ: Բացի այդ, պարզել ենք նաև, թե որքանով են Խորենացու օգտագործած բառերը արտացոլվել Նոր հայկազյան բառարանում:

«Հայոց պատմության» մեջ կիրառված բառային միավորների բառակազմական կառուցվածքի վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու պարզ և բաղադրյալ կառուցվածքների համամասնությունը և բաղադրյալ բառերի բոլոր կառուցվածքային կաղապարները: Համեմատական աղյուսակներով աշխատել ենք ցույց տալ Խորենացու օգտագործած բառապաշարի կառուցվածքային ընդհանրությունները 5-րդ դարի գրաբարի լեզվավիճակի հետ, ինչպես նաև վերը նշված հեղինակների լեզվի հետ համեմատելով՝ բացահայտել նրա անհատական

բառակերտումները, կամ, գոնե, այն բառային միավորները, որոնք հանդիպում են միայն
Խորենացու երկում՝ վկայելով նրա լեզվաստեղծական ավանդի մասին:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄՈՎԱԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՋԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԵՐԻ

ՋԱՇԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանակական մեթոդներով որևէ երկի լեզվի և ոճի ուսումնասիրության հիմնական
խնդիրներից մեկը լեզվական միավորների հաճախականության բացահայտումն է:

Լեզվաբանական հետազոտությունների մեջ վիճակագրական մեթոդների
կիրառության հնարավորությունը բխում է լեզվի կառուցվածքից: Ինչպես գիտենք,
լեզուն միատարր ամբողջություն չէ, այլ բնութագրվում է բաղկացականությամբ (Գ.
Ջահուկյանի տերմինով), այսինքն՝ կազմված է առանձին տարրերից, միավորներից,
որոնք խոսքի մեջ կարող են կրկնվել որոշակի օրինաչափությամբ: Լեզվական
միավորների՝ հնչյունների (գրավոր լեզվում նաև տառերի), վանկերի, ձևույթների,
բառերի այդպիսի կրկնվածության ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու
որոշակի եզրակացությունների նրանց գործածման հաճախականության մասին:
Լեզվական միավորների հաճախականությունը էական հատկանիշ է ինչպես լեզվի
տիպաբանական բնութագրման, այնպես էլ առանձին հեղինակների լեզվի և ոճի
ուսումնասիրության համար:

Վիճակագրական մեթոդները լեզվաբանության մեջ կիրառելու առաջին փորձերը արվել են դեռևս 19-րդ դարի կեսերին: Սկզբնապես դրանք կրել են մասնակի բնույթ և զուտ լեզվաբանական խնդիրներ չեն հետապնդել: Հետագայում ընդլայնվում է լեզվի նկատմամբ քանակական մեթոդների կիրառման բնագավառը, մշակվում են հետազոտական սկզբունքներն ու մեթոդները, բացահայտվում են որոշակի օրենքներ, սահմանվում են վիճակագրական ընդհանրություններ և այլն:

Հայագիտության մեջ հետազոտության ճշգրիտ մեթոդները, մասնավորապես լեզվավիճակագրության մեթոդը կիրառել են Հր. Աճառյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Վ. Առաքելյանը, Ա. Սարգսյանը, Լ. Հովսեփյանը, Բ. Ղազարյանը, Ռ. Ուռուտյանը և շատ ուրիշներ, որոնց այդ բնագավառում կատարած աշխատանքի վերլուծությունը դուրս է մեր նպատակներից: Նշենք միայն, որ քանակական մեթոդներով հետազոտողները ձգտել են պարզել լեզվական միավորների հաճախականությունը, լեզվի վանկերի, բառերի միջին երկարությունը, հայերենի հնչյունական ներդաշնակության աստիճանը, բառակազմական կաղապարների գործառական բեռնվածությունը, երկու գրական տարբերակերում այս կամ այն միավորի տարածվածությունը, ինչպես նաև հայերենի տիպաբանական բնութագրի, լեզվի պատմական փոփոխությունների ընթացքի և ժամանակագրության, բարբառների դասակարգման և այլ հարցեր¹⁷:

Լեզվաբանության մեջ քանակական մեթոդների կիրառման մի առանձին բնագավառ է հաճախականության բառարանների կազմումը: Դրանք այնպիսի բառարաններ են, որտեղ յուրաքանչյուր բառի մոտ տրվում է նրա հաճախականության ցուցիչը: Այն կարող է լինել ինչպես պարզապես բացարձակ թվական, այնպես էլ դուրս բերվել հատուկ վիճակագրական բանաձևերի օգնությամբ, արտացոլելով տոկոսային համամասնությունը, ընտրանքի հետ ունեցած հարաբերությունը և այլն: Բառերը դասավորվում են ոչ թե այբբենական կարգով, այլ ըստ նվազող հաճախականության, որ հնարավորություն է տալիս պարզելու բառաշարքում տվյալ բառի գրաված դիրքի և նրա հաճախականության ցուցիչի միջև եղած հարաբերակցությունը:

Մինչև օրս աշխարհում կազմվել են հաճախականության հարյուրավոր բառարաններ, որոնք ունեն տարբեր բնույթ, կազմության սկզբունքներ ու նպատակներ: Սրանց մեջ կարելի է առանձնացնել ընդհանուր լեզվական, լեզվագործածության որևէ բնագավառի (գեղարվեստական գրականության լեզու, գիտության լեզու, խոսակցական լեզու և այլն) և առանձին հեղինակների լեզուն կամ որևէ երկի բառապաշարն արտացոլող հաճախականության բառարաններ:

Հայագիտության մեջ վիճակագրական սկզբունքով բառապաշարի ներկայացման առաջին փորձ կարելի է համարել 1848 թ. Ջոյուռնիայում լույս տեսած «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից նորոյ կտակարանի» բառարանը, որտեղ այբբենական կարգով տրված բառերի մոտ բերվում են նրանց բոլոր գործածությունները: Հաջորդ նույն տիպի աշխատանքն է 1895թ. Երուսաղեմում հրատարակված՝ Թ. Աստվածատրյանի «Համաբարբառ հին և նոր կտակարանաց» բառարանը: Սրանք բուն իմաստով հաճախականության բառարաններ չեն, քանի որ բառերը այստեղ բերվում են այբբենական կարգով և ոչ թե ըստ նվազող հաճախականության և քանակական տվյալներ չեն պարունակում¹⁸, սակայն արժեքավոր են նրանով, որ բերում են տվյալ երկում հանդիպող բոլոր բառային միավորներն ու վկայությունները՝ տարերային կերպով կիրառելով այսպես կոչված համատարած ընտրանքի սկզբունքը և հնարավորություն տալով հետագա հաշվումների:

Արդեն մեր ժամանակներում քանակական հաշվումների հետ են կապված Խ. Կանայանի կողմից Ավ. Իսահակյանի «Աբու – Լալա Մահարի» պոեմի բառապաշարի քննությունը¹⁹, Վ. Առաքելյանի «Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները» գրքի մատենակից բառարանը²⁰: Չեխ հայագետ Լ. Մոտալովան վիճակագրական քննության է ենթարկել Իսահակյանի «Լիլիթ» պատմվածքի բառապաշարը, իսկ 1964թ. կազմել է դարձյալ «Աբու – Լալա Մահարի» պոեմի հաճախականության բառարանը: Այստեղ նույնպես բառերը դասավորված են ըստ այբբենական կարգի և ոչ թե ըստ հաճախականության, և նշված չէ կոնկրետ հաճախականությունը, այլ յուրաքանչյուր սուրահում տվյալ բառի գործածության քանակը¹²:

Վիճակագրության որոշ տարրեր են պարունակում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած՝ հայ հին մատենագրության երկերի բնագրային համաբարբառները, որտեղ յուրաքանչյուր բառ բերվում է տվյալ երկուն հանդիպող իր բոլոր վկայություններով, իսկ վերջում տրվում են վիճակագրական տվյալներ բառագործածությունների ընդհանուր քանակի, բառարանային բառերի քանակի և մեկ անգամ գործածված բառերի քանակի մասին: Սակայն սրանք նույնպես բուն իմաստով հաճախականության բառարաններ չեն:

Կարելի է ասել, որ հայագիտության մեջ ժամանակակից սկզբունքներով կազմված ընդհանուր բնույթի հաճախականության բառարանի առաջին փորձը Բ. Կ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան»²² է, իսկ առանձին հեղինակի երկի բառապաշարին նվիրված գործը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեր կազմած հաճախականության բառարանը: Այս երկու բառարաններն էլ նվիրված են լեզվի բառապաշարի քանակական չափերի ուսումնասիրությանը, սակայն միմյանցից տարբերվում են ինչպես լեզվի զարգացման տարբեր ժամանակաշրջանների արտացոլմամբ (գրաբար և աշխարհաբար), այնպես էլ նյութի ընդգրկմամբ (մեկ հեղինակ և լեզվի ամբողջական ընդգրկում): Տարբեր են նաև նյութի ընտրության սկզբունքները: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրել է Խորենացու պատմական երկուն գործածված յուրաքանչյուր բառի (բառային միավորի, դարձվածքի) հաճախականությունը, և քանի որ մենք գործ ունենք մեկ հեղինակի գործի հետ, առաջնորդվում ենք համատարած ընտրանքի սկզբունքով, այսինքն՝ աչքի ենք առել Խորենացու բոլոր բառագործածությունները, մինչդեռ Բ. Ղազարյանի բառարանը հենվում է գործածության տարբեր ոլորտներից ընտրած որոշակի թվով բառագործածություն պարունակող բնագրերի վրա և արտացոլում է բառերի հաճախականությունը թե՛ ընդհանրապես ժամանակակից գրական արևելահայերենում, թե՛ այդ լեզվի գործառնական տարբեր բնագավառներում (ընտրված է 11 բնագավառ):

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանի հիմքում ընկած են երկի 1913 թ. Թիֆլիսի (Տփղիս) հրատարակությունը և նրա հիման վրա 1975 թ. մեր կազմած համաբարբառը: Բառացանկի ընտրության մեջ կարելի է նշել

միայն մեկ տարբերություն. համաբարբառ բառարանի մեջ լեզվաքերականական ձևերը ավելի մանրամասն արտահայտելու միտումով բերվում են որոշ բայերի կամ հարադրությունների ոչ միայն անորոշ, այլև մյուս դերբայներով հանդիպող ձևերը (ինչպես ասենք՝ զմտաւ ածել, զմտաւ ածեալ), մինչդեռ հաճախականության բառարանում դրանք բերվում են միայն անորոշ դերբայի ձևով: Անցյալ, ապառնի դերբայները բերվում են միայն այն դեպքերում, երբ տեղի է ունեցել խոսքիմասային փոխանցում՝ վերածում գոյականի կամ ածականի (այդ մասին տես ստորև):

Մեր կազմած՝ Խորենացու «Պատմության» բառապաշարի հաճախականության բառարանը բաղկացած է ներածությունից, որտեղ նկարագրվում են բառարանի կազմության հիմնական սկզբունքները, և երկու՝ հաճախականության նվազող և այբբենական բառացանկերից: Երկու բառացանկերում էլ յուրաքանչյուր բառի դիմաց տրվում է նրա հաճախականության ցուցիչը, այսինքն՝ քանի անգամ է տվյալ բառային միավորը հանդիպում Խորենացու երկուն: Նվազող հաճախականության բառացանկի մեջ ևս միևնույն հաճախականությունն ունեցող բառերը դասավորված են այբբենական կարգով: Բառային միավորների առանձնացումը և ներկայացումը, ինչպես ասվեց, կատարվել են հիմնականում նույն սկզբունքներով, որոնցով առաջնորդվել ենք «Հայոց պատմության» բնագրային համաբարբառը կազմելիս: Իբրև առանձին բառային միավորներ են դիտվել կայուն բառակապակցությունները և բաղադրյալ հատուկ անունները, ինչպես՝

<i>ակնարկութիւն առնել</i>	1
<i>աստի և անտի</i>	1
<i>աստուածային գիր</i>	1
<i>Արեաց երկիր</i>	1
<i>Արիստոն Փեղղացի</i>	1
<i>Աւգոստոս Թեոդոս</i>	3
<i>Աւգոստոս Կոստանդոս</i>	2
<i>Բարդուղիմէոս առաքեալ</i>	1
<i>Բարզափրան Ռշտունի</i>	2

Կայուն բառակապակցութիւնների և բաղադրյալ հատուկ անունների երկրորդ (երրորդ) բաղադրիչները հաշվարկված են նաև որպէս առանձին միավորներ և բերված են իրենց տեղում ըստ հաճախականության և այբբենական հերթականության:

Բառարանում բոլոր բառերը զետեղված են ուղիղ ձևով, այսինքն՝ անունները եզակի ուղղական հոլովով, իսկ բայերը՝ անորոշ դերբայի ձևով, Օրինակ՝

<i>աշխարհ</i>	194
<i>գտանել</i>	110
<i>թագաւոր</i>	189
<i>կարգել</i>	91
<i>հրամայել</i>	10

Չամանունները բերվում են իբրև ինքնուրույն գլխաբառեր, ընդ որում փակագծերում տրվում են դրանց իմաստները.

<i>ալիք (մագ)</i>	2
<i>ալիք (կոհակ)</i>	1
<i>ակն (աչք)</i>	10
<i>ակն (թանկագին քար)</i>	2
<i>ակն (աղբյուր)</i>	4
<i>այր (մարդ)</i>	152
<i>այր (քարայր)</i>	14
<i>հաւ (պապ)</i>	3
<i>հաւ (թռչուն)</i>	2

Նույն սկզբունքով են ներկայացվում նաև համանուն հատուկ անունները, որոնց կողքին՝ փակագծերում, նշվում է անձնանուն կամ տեղանուն: Օրինակ՝

<i>Աղեքսանդր (անձնանուն)</i>	4
------------------------------	---

<i>Աղեքսանդր (տեղանուն)</i>	3
<i>Աղեքսանդրիայ (անձնանուն)</i>	2
<i>Աղեքսանդրիայ (տեղանուն)</i>	1
<i>Ամասիա (անձնանուն)</i>	5
<i>Ամասիա (տեղանուն)</i>	2

Բառարանում քերականական նշումներ սովորաբար չեն տրվում, բացի մի քանի դեպքերից, որոնք հանգում են հետևյալին.

ա) միևնույն բառի տարբեր խոսքիմասային արժեքների դեպքում`

<i>ազատ (գոյ.)</i>	2
<i>ազատ (ած.)</i>	2
<i>ամուր (գոյ.)</i>	15
<i>ամուր (ած.)</i>	4
<i>այլ (շաղկապ)</i>	251
<i>այլ (դերանուն)</i>	153
<i>առաջ (նախադր.)</i>	7
<i>առաջ (մկբ.)</i>	4
<i>իւր (անձնական դերանուն)</i>	205
<i>իւր (ստացական դերանուն)</i>	268

բ) Միևնույն բառի` որպես հատուկ և հասարակ անուն հանդես գալու դեպքում մեծ մասամբ նշվում է միայն հատուկ անունը, սակավ դեպքերում` նաև հասարակ անունը`

<i>աղեքսանդրացի (հաս. անուն)</i>	1
<i>Աղեքսանդրացի (հատուկ անուն)</i>	2
<i>արեգակն</i>	1
<i>Արեգակն (հատուկ գ.)</i>	3
<i>արձան</i>	9
<i>Արձան (հատուկ գ.)</i>	1
<i>արմատ</i>	4
<i>Արմատ (հատուկ գ.)</i>	1

<i>աւետիք</i>	1
<i>Աւետիք (հատուկ գ.)</i>	1
<i>բազուկ</i>	2
<i>Բազուկ (հատուկ գ.)</i>	1
<i>որդի</i>	255
<i>Որդի (հատուկ գ.)</i>	2

գ) Նախդիրների՝ տարբեր հոլովների հետ կիրառվելու դեպքում՝

<i>առ (նախդիր տր. հոլ.)</i>	48
<i>առ (նախդիր հայց. հոլ.)</i>	245
<i>առ (նախդիր բաց. հոլ.)</i>	1
<i>առ (նախդիր գործ. հոլ.)</i>	67
<i>զ (նախդիր տր. հոլ.)</i>	1
<i>զ (նախդիր հայց. հոլ.)</i>	4350
<i>զ (նախդիր հայց. հոլ. կապակց.)</i>	149
<i>զ (նախդիր բացառ. հոլ.)</i>	91
<i>զ (նախդիր գործ. հոլ.)</i>	87
<i>զ (իրբև ցուցիչ)</i>	9
<i>ընդ (նախդիր սեռ. հոլ.)</i>	146
<i>ընդ (նախդիր բացառ. հոլ.)</i>	1
<i>ընդ (նախդիր գործ. հոլ.)</i>	41

Խոսքիմասային անցում ունեցող բառաձևերը ցանկերում բերված են որպես առանձին միավորներ, սովորաբար առանց քերականական նշումների: Օրինակ՝

<i>այպանելի</i>	1
<i>անուանող</i>	1
<i>անցեալ</i>	34
<i>առաքեալ (գոյ.)</i>	23
<i>արհամարհելի</i>	1

գրող	1
հանդերձեալ	2
նախասացեալ	2

Խորենացու «Չայոց պատմության» մեր օգտագործած հրատարակության (Թիֆլիս, 1913) 9-րդ էջում զետեղված՝ «բազում արք անուանիք և իմաստութեան պարապեալք ի Յունաց աշխարհէն՝ հոգացան ոչ իմայն զգիրս ... յեղուլ ի յոյն բան ... այլ և ... ուրեք ուրեք գտեալ, աշխատութեամբ հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ. առ Ք և զԹ. առ Փ, և զԿ. առ Ե, և զԸ. առ Թ.» նախադասության ընդգծված տառերը բառարանում չեն ընդգրկվել նրանց իմաստի անորոշության պատճառով:

Բառարանում գլխաբառերը տրվում են փոքրատառով, բացի հատուկ անուններից, որոնք, բնականաբար, բերվում են մեծատառով:

Չաճախականության բառարանը ծառայել է որպէս ներկա ուսումնասիրության տվյալների հենք ոչ միայն Խորենացու բառապաշարի վերաբերյալ քանակական մի շարք բնութագրեր ստանալու, այլև բառապաշարը տարբեր սկզբունքներով դասակարգելու, բառերի իմաստային ու կառուցվածքային առանձնահատկություններն ուսումնասիրելու տեսակետից:

Ըստ հաճախականության բառարանի տվյալների՝ Մովսես Խորենացու «Չայոց պատմության» բառագործածությունների թիվն է 56445, որը բաշխվում է բառային միավորների վրա խիստ անհավասարաչափ: Այս առումով հետաքրքրական է պարզել առավել հաճախական բառերի խոսքիմասային պատկանելությունը և իմաստային դաշտերը, որոնց պատկանում են տվյալ բառային միավորները:

Ամենահաճախական բառն է և շաղկապը, որը հանդիպում է 4550 գործածությամբ, այնուհետև՝ զ նախդիրը հայցական հոլովի հետ 4350 գործածությամբ: Եթե վերջինիս ավելացնենք նաև զ նախդրի գործածությունը տրական (1), բացառական (91) և գործիական (87) հոլովների հետ, ինչպես նաև զանազան բառակապակցություններում (149) և իբրև ցուցիչ (9), ապա զ նախդրի ընդհանուր հաճախականությունը՝ 4687, կգերազանցի և շաղկապի հաճախականությանը: Երրորդ տեղում է ի նախդիրը, որի գործածությունը տրականում (524), հայցական (1657), բացառական (1278) հոլովների

հետ և զանազան բառակապակցություններում (507) հասնում է 3966-ի: Նշենք, որ բառարանում վերը նշված ընդհանուր հաճախականությունները չեն բերվում, այլ նախդիրների գործածությունը տարբեր հոլովների հետ տրվում է յուրաքանչյուրն իր տեղում ըստ հաճախականության կարգի: Այդ վերաբերում է նաև նախդիրների գործածությանը բառակապակցությունների մեջ: Հազարից ավելի հաճախականություն ունեն երկու բառ՝ որ հարաբերական դերանունը՝ 1323 և երրորդ դեմքի նա անձնական դերանունը՝ 1044: 6-րդ դիրքից բառերի հաճախականությունը միանգամից զգալիորեն նվազում է՝ ոչ ժխտական մասնիկն ունի 539 գործածություն, **լինել** բայը՝ 487, առաջին դեմքի **ես** անձնական դերանունը՝ 433, **եմ** էական բայը՝ 413, **ասել** բայը՝ 341, **զի** շաղկապը՝ 332, **այս** ցուցական դերանունը՝ 324 և, որ շատ հատկանշական է, **Հայք** տեղանունը՝ 301:

301-ից մինչև 100 հաճախականություն ունեն 75 բառ, որոնց զգալի մասը սպասարկու բառեր են և դերանուններ: Օրինակ՝ նախդիրներ և նախադրություններ՝ **առ, ընդ, ըստ, ի վերայ, հանդերձ, յաղագս, ց, շաղկապներ՝ բայց, եթե, թե, իսկ, վասն, քանզի, այլ, դերանուններ՝ ամենայն, այն, դու, ինչ, ինքն, իւր, նոյն, ոմն, որք, սա** և այլն:

Ինչպես տեսնում ենք, առավել հաճախական բառերը մեծ մասամբ պատկանում են այսպես կոչված սպասարկու խոսքի մասերի թվին, որոնք զուրկ են նյութական իմաստից: Սրանց հետ միասին առավել հաճախական բառերի մեջ են մտնում անձնական, ցուցական, անորոշ, որոշյալ և մի շարք դերանուններ և **լինել** բայը, որը նյութական իմաստ ունենալուց բացի հաճախ հանդես է գալիս օժանդակ բայի դերում կամ որպես հանգույց: Բուն նյութական իմաստ ունեցող բառերից այս խմբում հանդիպում է միայն **ասել** բայը: Նշված բառերի հաճախականությունը ընդհանրապես բարձր է լեզվի մեջ և՛ անհատական բառագործածության, և՛ երկի ժանրային առանձնահատկությունների տեսակետից բնութագրական չէ: Այս առումով թերևս առանձնանում է **ասել** բայը, որը որպես ամենագործածական ասացական բայ ներմուծում է ուրիշի ուղղակի և՛ անուղղակի խոսքը՝ աշխուժություն, և՛ շարժում հաղորդելով շարադրանքին, հատկապես պատմողական բնույթի ստեղծագործություններում:

Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից հաճախականությունների նշված խմբի մեջ են մտնում **ուներ** (193), **տալ** (186), **առնուլ** (183), **առներ** (167), **գալ** (155), **կոչել** (138), **հասանել** (125), **թագաւորել** (117), **գտանել** (110), **դառնալ** (109), **հրամայել** (109), **թողուլ** (106), **անուանել** (105) բայերը, որոնք հիմնականում ընդհանրապես խոսքում հանդիպող ամենագործածական բայերից են, իսկ մի քանիսի բարձր հաճախականությունը բացատրվում է խորենացու երկի ժանրային առանձնահատկություններով, ինչպես՝ **անուանել**, **թագաւորել**, **կոչել**, **հրամայել**, և այլն, որոնք մտնում են երկրի քաղաքական կյանքի և պատմական իրադարձությունների հետ կապված հասկացություններ արտահայտող իմաստային դաշտերի մեջ: Նույնը կարելի է ասել նաև այս խմբի մեջ մտնող գոյականների և ածականների մասին, որոնք մի կողմից ընդհանուր գործածական բառեր են՝ **ամ** (192), **բազում** (191), **անուն** (162), **այր** «տղամարդ» (152), **բան** (132), **մեծ** (127), **հայր** (124), **ժամանակ** (118), **գործ** (114), **տեղի** (100) և այլն, իսկ մյուս կողմից՝ ժողովրդի պատմության տվյալ ժամանակաշրջանին, քաղաքական, վարչատնտեսական, ռազմական բնագավառներին պատկանող բառեր՝ **ազգ** (234), **զօր** (223), **արքայ** (196), **աշխարհ** (194), **թագաւոր** (189), **նախարար** (125), **կողմն** (124), **պատերազմ** (123), **թագաւորութիւն** (122), **քաղաք** (122) և այլն: Այստեղ պետք է նշել նաև այդ ժամանակաշրջանին վերաբերող ժողովուրդների անուններ, տեղանուններ և անձնանուններ՝ **Պարսք** (148), **Արտաշէս** (162), **Արշակ** (145), **Շապուհ** (109), **Խոսրով** (106):

98-ից մինչև 10 նվազող հաճախականություն ունեն 676 բառային միավորներ: Այս խմբի մեջ ևս սպասարկու բառերի թիվը զգալի է, քանի որ դրանք մեծ մասամբ ամենահաճախական բառերն են, որոնց մասին ասվեց վերևում: Այս խմբում հանդիպում են հետևյալ սպասարկու բառերը, դերանուններն ու մակբայները (համապատասխան հաճախականություններով), **նախադրությունները՝ քան** (93), **մինչև** (85), **ի մեջ** (47), **ի ձեռն** (45), **իբրև** (44), **զկնի** (40), **յառաջ քան** (26), **առանց** (25), **առաջի** (22), **փոխանակ** (22), **բայց** (18), **շուրջ** (13), **զհետ** (12), **շաղկապներ՝ ևս** (68), **կամ** (59), **այլև** (51), **մինչև** (46), **նաև** (44), **ապա** (39), **իբրև** (33), **սակայն** (25), մակբայներ և եղանակավորող բառեր՝ **միայն** (78), **այժմ** (55), **յոյժ** (46), **առաւել** (39), **իսկ** (36), **արդարև** (30), **իբր** (30), **արդեօք**

(28), անդ (27), սաստիկ (25) և այլն: Հաճախականությունների այս խմբում հանդիպող բայերից են՝ երկրպագել (11), զմտաւ ածել (11), ըմբռնել (11), հարկել (11), ձգել (11), յարձակել (11), յափշտակել (11), յուսալ (11), նստել (11), սիրել (11), գրգռել (10), զարդարել (10), լուծանել (10), հասուցանել (10), մեծարել (10), յարմարել (10), յերկարել (10), յիշատակել (10), պատել (10), պատրաստել (10), փոխանորդել (10) և այլն:

Լիիմաստ խոսքի մասերից հաճախականության այս խմբի մեջ են մտնում մոտ 240 գոյականներ և 150 բայեր, ընդ որում, եթե 99-ից մինչև 50 հաճախականություն ունեցող բառերի մեջ գոյականներն ու բայերը գրեթե հավասար են (համապատասխանաբար 23 և 21), ապա ավելի ցածր՝ 49-ից 10 հաճախականություն ունեցողների մեջ գերակշռում են գոյականները (210-ից ավելի, իսկ բայերը՝ մոտ 130):

Այս խմբի գոյականները նույնպես հիմնականում առօրյա խոսքում կիրառվող ամենագործածական միավորներն են, ինչպես՝ եղբայր (85), ձեռն (77), կին (76), ար (75), անձն (67), մանուկ (59), տուն (57), մասն (51), կամք (41), գանձ (35), դուստր (35), իր (35), պապ (35), մարդ (29), զաւակ (28), ծնունդ (28), յիշատակ (28), տէր (28), քոյր (28), լեզու (27), խորհրուրդ (27), զարմ (25), մարմին (25), որս (25), ցեղ (25), բնակութիւն (24), դուռն (24), զրոյցք (24), ջուր (24), ճանապարհ (24), արեգակն (22), գլուխ (22), կեանք (21), քար (21) և այլն:

Հարկ է նշել, որ շատ են նաև այն բառերը, որոնց գործածությունը պայմանավորած է խորենացու երկի թեմատիկայով: Դրանք են երկրի քաղաքական պատմությանը, վարչատարածական բաժանմանը, աշխարհագրական տեղանքին, երկրի կառավարմանը, ռազմական գործին, կրոնին ու մշակութին վերաբերող բառերը, ինչպես՝ Աստուած (83), լեռն (82), երկիր (77), թուղթ (66), հրաման (63), իշխանութիւն (57), զաւառ (56), գէտ (55), պատմութիւն (55), կարգ (53), կայսր (52), բազմութիւն (50), գունդ (49), եպիսկոպոս (47), սահման (46), ծով (39), նահապետ (39), իշխան (38), պատիւ (38), տէրութիւն (38), արևելք (36), դաշտ (36), հիւսիսի (36), մատեան (35), աշակերտ (33), նախարարութիւն (33), խաղաղութիւն (33), արևմուտք (30), առասպել (29), արքունիք (28), մարտ (28), եզր (27), ժառանգութիւն (25), գիրք (24), սպարապետ (24), անուն (23), խռովութիւն (23), թշնամի (22), մեհեան (22), դաստակերտ (21),

ասպետ (20), հաւատք (20), շինուած (20), պարիսպ (19), դիւան (19), միաբանութիւն (18), յաղթութիւն (18), նահատակութիւն (18) և այլն:

Նույնը կարելի է ասել և բայերի մասին: Ընդհանուր գործածական ամենահաճախական բայերից են՝ տեսանել (85), լսել (83), գնալ (78), կալ (75), երթալ (74), շինել (73), ծնանել (70), գիտել (68), ածել (67), մեռանել (65), անցանել (56), բնակել (56), խնդրել (54), ելանել (53), կամել (50), պահել (48), խորհել (46), հաւատալ (46), բերել (42) և այլն: «Չայոց պատմության» թեմատիկայով պայմանավորված առաքել (98), կարգել (91), պատմել (74), շինել (73), գրել (65), սպանանել (63), հաստատել (60), անցանել (56), բնակել (56), խնդրել (54), կացուցանել (34), թագաւորեցուցանել (33), սատակել (31), տիրել (27), կոտորել (26), յաղթել (24), ուսանել (23), նուաճել (22), հրաման տալ (18), պատերազմել (18), ընդդիմանալ (16), ապստամբել (15) և այլն:

Այս խմբի մեջ են մտնում նաև բազմաթիվ հատուկ անուններ՝ պատմական գործիչների անձնանուններ, նախարարական տոհմանուններ, երկրների, քաղաքների տեղանուններ, ինչպես նաև ժողովուրդների և ցեղերի անվանումներ, որոնց խորեմացին անդրադառնում է իր պատմության ընթացքում: Դրանցից են՝ Յոյնք (93), Տրդատ (89), Սահակ (77), Տիգրան (70), Աբգար (69), Արտաշիր (69), Զոռնայեցիք (64), Երուանդ (57), Տիրան (55), Մեսրոպ (44), Մեծն Սահակ (43), Վաղարշակ (42), Ներսէս (39), Աժդահակ (37), Դերովիէս (37), Շամիրամ (37), Արտաւազդ (35), Գրիգոր (35), Դայկ (34), Բէլ (31), Սանատրուկ (30), Քրիստոս (30), Գնէլ (29), Ասորեստան (28), Նինոս (26), Կեսարիա (24), Միջագետք (24), Ալանք (23), Բիւզանդիոն (23), Երուսաղէմ (23), աշխարհի Դայոց (22), Արմաւիր (23), Արշակունիք (22), Թէոդոս (22), Պարսք (22), սուրբ Գրիգոր (22), Ասորիք (21), Մարք (21), Միհրդատ (21), Արամ (20), Վարդան (20), Արշամ (19), Եղեսիա (19), Կոստանդիանոս (19), Կրիստոս (19), Դիւրկանոս (19), Պահլաւ (19), Արգամ (18), Յուլիանոս (18), Վրթանէս (17), Աղուանք (16), Ասորեստանեայք (16), Զոռն (16), Վիրք (16), Մեհրուժան (15), Պարթևք (15), Վռամ (15), Աղէքսանդր (14), Այրարատ (14), Յուսիկ (14), Աբրահամ (13), Արամանեակ (13), Արիստակէս (13), Բագրատունիք (13), Մակեդոնացիք (13), Մանաճիիր (13), Սլկունիք (13), Ամատունիք (12), Անտոնիոս (12),

Արշակունի (12), Արշալիր (12), Բագարատ (12), Գեղամ (12), մեծն Վրթանես (12), Նինուէ (12), Տարօն (12), Տիգրանակերտ (12), Տիգրանուհի (12), Անտիոք (11), Արտաշատ (10), Աւգոստոս (10), Եգիպտացիք (10) և այլն:

Հաջորդ` 9-2 հաճախականություն ունեցող բառերի ընդհանուր քանակն է 1553: Այս բառերը արդեն դժվար է որոշակի խմբավորումների բաժանել հաճախականության և իմաստագործառական արժեքի հարաբերակցության տեսակետից:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում խորենացու «Հայոց պատմության» մեջ մեկ անգամ գործածված բառերը, որոնց թիվը ըստ «հաճախականության բառարանի» տվյալների 3584 է: Այս բառերից հատկապես նրանք, որոնք գործածված չեն 5-րդ դարի մյուս հեղինակների կողմից, խորենացու լեզվի բնորոշ առանձնահատկությունն են ներկայացնում: Եւ եթե ուսումնասիրությունները պարզում են, որ այդ բառերից որոշ միավորներ գործածվել են այլ երկերում, որոնք վերագրվել են Մովսես խորենացուն, ապա դա կարող է տվյալ երկի հեղինակային պատկանելությունը պարզելու լրացուցիչ կարևոր կռվան հանդիսանալ: Այս մասին ավելի մանրամասն խոսվում է երրորդ գլխում` խորենացու և 5-րդ դարի հեղինակների բառապաշարի համեմատական քննության կապակցությամբ:

Հաճախականության բառարանի տվյալները կարող են նպաստել նաև բանասիրական, պատմական, աղբյուրագիտական այլևայլ խնդիրների պարզաբանմանը: Կարևոր է նշել, որ բառերի հաճախականությունը տվյալ հեղինակի համար բնութագրական է ոճական տեսակետից, այս կամ այն բառի գերակշիռ գործածությունը խոսում է հեղինակի նախասիրությունների, լեզվագործածության սկզբունքների և ոճական առանձնահատկությունների մասին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի ուսումնասիրությունը ըստ բառակազմական առանձնահատկությունների կատարելիս առաջնորդվել ենք Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն»²³ մենագրության տեսական սկզբունքներով, ինչպես նաև Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը»²⁴ գրքում առաջ քաշված կաղապարային նկարագրության սկզբունքներով և պայմանական նշաններով:

Քննությունը ցույց է տալիս, որ Խորենացու լեզվում կիրառվել են բոլոր հիմնական բառակազմական կաղապարները, որոնք հատուկ էին 5-րդ դարի գրաբարին: Սակայն հետաքրքիր է պարզել նաև, թե կաղապարների քանակական բաշխման տեսակետից ինչպիսի անհատական առանձնահատկություններ ունի Խորենացու լեզուն, և որքանով է այն արտացոլում նշված ժամանակաշրջանի ընդհանուր օրինաչափությունները: Նշենք նաև, որ բառակազմական քննության ենք ենթարկում միայն հասարակ անունները: Խորենացու երկուն գործածված 1602 հատուկ անունները դուրս են մնում մեր հետազոտ հաշվարկումներից: Մնացած 5418 բառերից 1169-ը պարզ արմատական կազմություններ են:

Բառային միավորները՝ ըստ բառակազմական առանձնահատկությունների, բաժանվում են վերլուծական ու համադրական կառույցների: Վերլուծական կառույցները հանդես են գալիս որպես բայական և անվանական հարադրություններ: Իսկ համադրական կառույցները՝ որպես բարդ և ածանցավոր բառեր: Բարդ ածանցավոր կազմությունները ըստ բառերի բառակազմական պատմության բաշխվում են բարդերի և ածանցավորների մեջ: Եթե բառակազմական վերջին քայլը հիմքերի կցումն է (անկախ նրանից, պարզ են նրանք թե ածանցավոր), կաղապարը մտնում է բարդերի շարքը. օրինակ՝ **ուսումնասեր** բառում տեղի է ունեցել **ուսումն** ածանցավոր հիմքի կցումը **սեր** պարզ բաղադրիչին, հետևաբար ամբողջ կազմությունը քննվել է բարդությունների շարքում: Իսկ **արդարադատապես** բառում բառակազմական վերջին քայլը **-ապես** ածանցի կցումն է **արդարադատ** բարդ հիմքին: Ուստի բառը դասվում է ածանցավորների շարքին: Բայերը միշտ հանդես են գալիս որպես բաղադրյալ կազմություններ, անորոշ դերբայի վերաջավորությունները միաժամանակ կարող են կատարել թե՛ քերականական, թե՛ բառակազմական մասնիկի դեր: Ելնելով բայերի կազմության առանձնահատկություններից՝ նրանց կաղապարները մենք ներկայացնում ենք առանձին: Հիմնականում նրանք ածանցավոր կազմություններ են:

Բառերի բառակազմական կաղապարները ներկայացնելիս հետևում ենք «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ ընդունված պայմանական նշանների համակարգին՝

S - հիմք

\bar{S} – հնչյունափոխված հիմք

S^f - քերականական ձևավորում ունեցող հիմք

SS – կրկնվող հիմքեր

a - ածանց

\bar{a} – հնչյունափոխված ածանց

j – հոդակապ

c – հոդակապի դերում հանդես եկող շաղկապ

p – հոդակապի դերում հանդես եկող նախդիր

Պայմանական նշանների դասավորությունը արտացոլում է տվյալ բառի մեջ մտնող բաղադրիչների գծային հաջորդականությունը²⁵:

Այժմ ներկայացնենք «Հայոց պատմության» մեջ գործածված բաղադրյալ բառերը ավելի մանրամասն, ըստ առանձին կաղապարների:

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համադրական բարդությունների մեջ գերակշռող են հոդակապավոր կառույցները: Պարզ երկբաղադրիչ կաղապարների մեջ դրանք ավելի քան երեք անգամ գերազանցում են անհոդակապ ձևերին, ընդ որում, Խորենացու երկուս հանդիպում են հիմքերի ձևավորման բոլոր տարատեսակները:

1. «Մաքուր» անհնչյունափոխ հիմքերով բարդություններ SjS կաղապարով, օրինակ՝ **արքայանիստ, բանաստեղծ, դաշտաձև, եղբայրասեր, համբաւաբեր, համաբաւաբեր, միաբան** և այլն:

Այս կաղապարի ենթակաղապարներն են հետևյալ տեսակները.

ա) Առաջին բաղադրիչը ենթարկվել է շեշտից կախված հնչյունափոխության՝ $\bar{S}jS$ կաղապարով. օրինակ՝ **բազմածեռն** (արմատը՝ բազում), **զուգահաւասար** (արմատը՝ զոյգ), **լեռնակողմն** (արմատը՝ լեռն), **լծադիր** (արմատը՝ լուծ), **կիսակտուր** (արմատը՝ կէս), **հնախօս** (արմատը՝ հին), **հովտաձև** (արմատը՝ հովիտ), **մատենագիր** (արմատը՝ մատեան), **յունասեր** (արմատը՝ յոյն), **օգտակար** (արմատը՝ օգուտ) և այլն:

բ) Առաջին հիմքի հնչյունափոխական տարբերակներից է հիմքի վերջին ի հնչյունի ձուլումը հոդակապին՝ $\bar{h} + a > \bar{h}$, որն արտացոլվում է $\bar{S}j^{\bar{h}}S$ կաղապարով: Որպես առաջին հիմք մեծ մասամբ հանդես են եկել **բարի** և **ոսկի** բառարմատները՝ **բարեբախտ, բարեգեղ, բարեգործ, բարեխառն, բարեխօս, բարեկամ, բարեհամ,**

բարեձև, բարեյար, բարեյարմար, ոսկեգօծ, ոսկեթել, ոսկեսւր: Մեկական օրինակ վկայված են **աղի, գերի, գինի, հոգի** արմատներով՝ **աղեբեկ, գերեկից, գինեբեր, հոգեմարտ:**

գ) Առաջին բաղադրիչը ունի քերականական ձևավորում (S^fjS). այս ենթակաղապարով խորենացու երկուսն վկայված է ընդամենը 5 բառ՝ **ականակիտ, առնապատկեր, տանուտեր**, որտեղ առաջին բաղադրիչը ունի եզակի սեռական հոլովածն, **բարեացապարտ**՝ առաջին բաղադրիչի հոգնակի սեռական հոլովածնով և **ընթերցասւր**, որտեղ առաջին բաղադրիչը հիմք է և ձևով համընկնում է անցյալ կատարյալի հիմքին:

դ) Ավելի շատ են երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորում ունեցող հիմքերով բարդությունները (SjS^f): Հիմնականում դրանք բայական հիմքեր են, որ համընկնում են անցյալ կատարյալի հիմքին: Վկայված օրինակների մեծ մասում առկա են հետևյալ հիմքերը. **կալ՝ բազեակալ, գործակալ, ինքնակալ, կողմնակալ, շնորհակալ, սահմանակալ, տեղակալ, տիեզերակալ. գնաց՝ աւղագնաց, բոկագնաց, գաղտագնաց, ծովագնաց:** Մեկական օրինակով վկայված են. **կաց՝ դատարկակաց, կեաց՝ երկայնակեաց, հայեաց՝ ծովահայեաց, բարձ՝ բեռնաբարձ:** Բուն հրամայականի եզակի թվին համընկնող հիմքով՝ **դիր՝ թագադիր, մեղադիր, տար՝ ընծայատար:** Պատճառական հիմքով՝ **կառոյց՝ նաւակառոյց:**

ե) Երկու բաղադրիչների քերականական ձևավորումով (S^fjS^f) հանդիպում է ընդամենը 2 օրինակ, բայական հիմքերը համընկնում են կատարյալի հիմքին՝ **եկամուտ**, իսկ անվանական հիմքը՝ հոգնակի հայցականին, որն իր հերթին ենթարկվել է հնչյունափոխության՝ **կենսատու:**

զ) Վկայված են մի շարք օրինակներ առաջին բաղադրիչի հնչյունափոխությամբ և երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորմամբ՝ **ծաղկակալ, կուսակալ, յաւետախաղաց, շրջակայ, անդնդալիր** (մաքուր բայարմատ), **դժնահայեաց**, առաջին հիմքի և հոդակապի հնչյունափոխությամբ՝ **բարեգնաց, մետասան:**

ե) Հիմքերի կրկնությամբ (SjS) հանդիպում են **բարձրաբերձ, մեծամեծ և չարաչար** բառերը, ընդ որում, առաջին օրինակում կրկնվող հիմքերը հնչյունապես տարբերվում են:

SjS հիմնակաղապարի մեջ են մտնում և այն կազմությունները, որտեղ առաջին կամ երկրորդ բաղադրիչը, կամ երկուսն էլ ածանցավոր են: Խորենացու երկուսն էլ կայված են բազմաթիվ օրինակներ հետևյալ մասնավոր ենթակաղապարներով.

ա) (Sa)jS - առաջին բաղադրիչը վերջածանցավոր կազմություն է: Ընդ որում, կարող է տեղի ունենալ ինչպես առաջին արմատական բաղադրիչի, այնպես էլ ածանցի շեշտափոխական հնչյունափոխություն: Շարադրանքը չձանրաբեռնելու նպատակով ստորև բերվող օրինակներում հիմքերի տարբեր ձևավորում ունեցող ենթակաղապարները չենք առանձնացնում: Վկայված օրինակների մեջ հանդիպում են բազմազան ածանցներ՝ **արժանահաւատ, արժանափառ, գեղեցկանիստ, թագաւորակից, թագաւորանիստ, իմաստասէր, խորհրդակից, հայրենասէր, հեծելազօր, միայնակեաց, միջնաբերդ, մուլեխինդ, ուժգնասիրտ, ուսումնասէր, չորրորդապետ, սակաւակեաց, սաստկակառոյց, սննդակից, վերնագիր, վերնատուն** և այլն:

բ) [(Sa)ā]jS - այս ենթակաղապարով (առաջին բաղադրիչը երկու վերջածանցով) «Հայոց պատմության» մեջ գործածված է ընդամենը չորս բառ՝ **աղտեղասէր (աղտ-եղ-ի), հետևակազնաց, հետևակազօր, հետևակամարտ:**

գ) [(Sa)a]ajS - այս ենթակաղապարով (առաջին բաղադրիչը երեք վերջածանցով՝ **ներ-ք-ին-ի**), վկայված է ընդամենը մեկ բառ՝ **ներքինապետ:** Վերջին ի ածանցը հնչյունափոխության հետևանքով դուրս է ընկել և վերականգնվում է կաղապարում:

դ) (aS)jS սակավաթիվ են նաև առաջին նախածանցավոր բաղադրիչով բաղադրությունները: Որպես նախածանց այստեղ հանդես են գալիս ընդ և **յ(հ)** նախդիրները, որոնք սերտաճել են բառին՝ **ընդդիմակաց, ընդդիմափառ, յառաջադէմ, յառաջախաղաց, յառաջամասն:**

ե) Sj(Sa) - երկրորդ բաղադրիչի վերջածանցավոր կազմությամբ ձևերը ավելի շատ են՝ **անուանակոչութիւն, աշտարակաշինութիւն, արձանագրութիւն,**

բազմաբիւրաւոր, գազանամարտիկ, ինքնահաճոյ, խարազնազգեստ, մարապարսացի, մեծահասակ և այլն:

զ) $S_j [(Sa)a]$ - երկու վերջածանց ունեցող երկրորդ բաղադրիչով գործածվել է ընդամենը մեկ բառ՝ **յարահետևող**:

է) $(S\bar{a})j(Sa)$ - առաջին և երկրորդ վերջածանցավոր բաղադրիչներով վկայված է **ծիրանազգեստ** բառը, ընդ որում, առաջին բաղադրիչի ի ածանցը (**ծիրանի**) այս բառում ևս շեշտափոխական հնչյունափոխության հետևանքով դուրս է ընկել և վերականգնվում է կաղապարում:

Հոդակապավոր բարդություններից «Հայոց պատմության» մեջ քիչ թվով գործածվել են նաև այնպիսի կազմություններ, որտեղ հոդակապի դերում հանդես է գալիս և շաղկապը: Վկայված չորս օրինակներից երեքը գոյականներ են, իսկ մեկը՝ թվական:

ScS - **այրևծի, եթնևտասն**,

$S^f c S^f$ – **տուրևառ** (բայական հիմքերի հրամայականի ձևերով),

$Sc(Sa)$ - **ելևմուտք** (երկրորդ բաղադրիչը վերջածանցավոր):

Երեք արմատական բաղադրիչ ունեցող հոդակապավոր բարդությունները «Հայոց պատմության» մեջ սահմանափակ գործածություն ունեն: Վկայված մի քանի օրինակներում արմատներից (հիմքերից) երկուսը իրար են միանում առանց հոդակապի, իսկ երրորդը՝ բառակազմական վերջին քայլում՝ հոդակապով: Երկու դեպքում անհոդակապ միացությունները կրկնավորներ են՝ **բարբառ, խողխող**:

Նշված տիպի (երեք արմատական բաղադրիչով) կազմությունները ներկայացվում են հետևյալ ենթակաղապարներով.

$(SS)jS$ - **արեգակնաճեն, արեգակնատես**,

$\bar{S}j(SS)$ - **բազմաբարբառ, բազմախողխող** (առաջին արմատը հնչյունափոխված),

$[(S\bar{a})S]jS^f$ - առաջին բաղադրիչը վերջածանցով, որը հանդես է գալիս հնչյունափոխված ձևերով, իսկ վերջին բաղադրիչն ունի քերականական ձևավորում՝ **յատկանձնակաց**:

Ինչպես նշեցինք, անհողակապ բարդությունները ավելի քան երեք անգամ պակաս են հողակապավորներից, սակայն նրանք ևս զգալի թիվ են կազմում Խորենացու երկում և ունեն ենթակաղապարների տարբեր տեսակներ:

2. Ամենից ավելի տարածված է SS հիմնական կաղապարը՝ «մաքուր» անհնչյունափոխ հիմքերով, օրինակ՝ **այնժամ, այնչափ, աշխարհաւեր, աստուածորդի, գետեզր, երկարոգի, երկբերան, ողջանդամ, ոտնկռիւ, պայծառերես, սուտանուն, քարանձաւ և այլն:**

Այս հիմնակաղապարի ենթակաղապարները նույնպես տարբերվում են հիմքերի հնչյունափոխությամբ և քերականական ձևավորմամբ: Հանդիպում են հետևյալ տեսակները.

ա) \overline{SS} ենթակաղապարում հնչյունափոխված է առաջին բաղադրիչը. օրինակ՝ **բազմարուեստ** (արմատը՝ բազում), **դայեկորդի** (արմատը՝ դայեակ), **դիպաղեղն** (արմատը՝ դէպ), **լեռնոտն** (արմատը՝ լեռոն), **լրտես** (արմատը՝ լուր), **կարմրայտ** (արմատը՝ կարմիր), **ջրհեղեղ** (արմատը՝ ջուր), **ստնդի** (արմատը՝ ստին), **փղոսկր** (արմատը՝ փիղ) և այլն:

բ) S^fS - ենթակաղապարում առաջին բաղադրիչն ունի քերականական ձևավորում, ընդ որում, դրանք բոլորն էլ գոյականի սեռական հոլովածներ են՝ **արեանառու, դիւցազն, եղբօրորդի, հորեղբայր, մեղուակն, քեռայր, քեռորդի**, և միայն մի դեպքում բայի հրամայական ձևը՝ **գրեթէ:**

գ) SS^f - երկրորդ բաղադրիչի քերականական ձևավորմամբ Խորենացու երկում վկայված են հիմնականում բայական հիմքերով կազմություններ: Դրանք կատարյալի հիմքերն են՝ **արար - գահարար, խոյրարար, շղոմարար, սպասարար, ընկէց - զէնընկէց, հրընկէց, ընթաց - ձիընթաց, տու - ձեռնտու**, և հրամայականի ձևով՝ **դիր - ունկնդիր**: Երկրորդ բաղադրիչի անվանական հիմքերով հանդիպում են միայն **երկոտասան, երեքտասան, հնգետասան** թվականները՝ **տասն-տասան** քերականական ձևով:

դ) $\overline{SS^f}$ - այս ենթակաղապարում առաջին հիմքը հնչյունափոխված է, իսկ երկրորդը ունի քերականական ձևավորում՝ **բարերար, բքարար, զինատեսաց, ժուժկալ, ստնդիայ, ստնտու**:

ե) $S^f S^f$ կաղապարով՝ երկու բաղադրիչն էլ ունեն քերականական ձևավորում՝ գործիական հոլովով կա ընդամենը երկու բառ՝ **այսուհետև, այնուհետև**:

զ) SS բաղադրիչների կրկնությամբ գործածվել են հետևյալ բառերը՝ **բարբառ, կասկած, կարկառ, ծործոր, պեսպես**:

Ինչպես հողակապավոր, այնպես էլ անհողակապ բարդությունների բաղադրիչները կարող են լինել ածանցավոր հիմքեր: Խորենացու երկուն օգտագործվել են դրանց հետևյալ տեսակները.

ա) $(aS)S^f$ առաջին բաղադրիչի նախածանցավոր կազմությամբ վկայված է **զօրհանապազ** բառը:

բ) $(aS)S^f$ առաջին բաղադրիչը նախածանցավոր է, իսկ երկրորդը ունի քերականական ձևավորում՝ **անհարթարար**:

գ) $(Sa)S^f$ փոքր-ինչ ավելի շատ են վերջածանցավոր առաջին բաղադրիչով կազմությունները: Հանդիպում են հետևյալ օրինակները՝ **գեղեցկաղեղն, գեղեցկոտն, թագաւորազն, կենցաղօգուտ, կոպտարանձն**:

դ) $(Sa)S^{ff}$ առաջին բաղադրիչը վերջածանցավոր է, իսկ երկրորդն ունի քերականական ձևավորում. օրինակներն են՝ **առաջիկայ, իրաւարար, ուսումնատեսց**:

ե) $S(Sa)$ երկրորդ բաղադրիչի վերջածանցավոր կազմությամբ բարդությունները համեմատաբար ավելի տարածված են՝ **ամենիմաստ, արևելք, արևմուտք, արուեստգիտութիւն, բազմօրինակ, գինարբու, դիւազգի, կարկտածու** (առաջին արմատահիմքը հնչյունափոխված է) **ճարտասան, մեծիմաստ, նոյնգունակ, վիպասան, տարփածու, տիկտեսակ, քաջազգի**:

զ) $S(S^f a)$ երկրորդ բաղադրիչի արմատահիմքը քերականորեն ձևավորված է հետևյալ օրինակներում՝ **աւանդառու, եղեմնարկու, ձայնարկու, կաշառառու, յուզարկու, նախասացեալ**:

է) $S[(Sa)]a$ վերջին բաղադրիչը երկու վերջածանցով՝ **չորեքժամանակեան, դժոխեւլանելի, երկրպագելի**:

Վկայված են նաև մեկական օրինակ, երբ երկու բաղադրիչներն էլ ածանցավոր են: Դրանք են՝

ը) $(a\bar{S})(Sa)$ յուղարկումն, որտեղ նաև հնչյունափոխված է առաջին ուղի արմատը:

թ) $(aS)(S^f a)$ յառաջասացումն, որտեղ երկրորդ արմատական բաղադրիչը ունի քերականական ձևավորում:

ժ) $(Sa)(Sa)$ վատթարագգի օրինակում երկու բաղադրիչն էլ վերջածանցավոր են, նույն կաղապարով խորհրդածու բառում հնչյունափոխված է առաջին բաղադրիչի ուրղ ածանցը:

Ինչպես տեսնում ենք, թեև ածանցավոր բաղադրիչներով անհոդակապ բարդությունների կաղապարները բազմազան են, սակայն խորենացու երկում վկայված օրինակները սակավաթիվ են, հաճախ սահմանափակվում են միայն մեկ բառով:

Առանց հոդակապի երեք արմատական հիմքերի կցումով խորենացին գործածել է երեքտասանամեայ բառը, որի կաղապարն է $SS^f(Sa)$, երկրորդ արմատական բաղադրիչը քերականական ձևավորում ունի, իսկ երրորդը վերջածանցավոր է:

Ինչպես տեսնում ենք խորենացու «Չայոց պատմության» մեջ կիրառություն են գտել համադրական բարդությունների և՛ հոդակապավոր, և՛ անհոդակապ տեսակները՝ իրենց բազմազան ենթակաղապարներով:

ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ

ՆԱԽԱԾԱՆՑՈՒՄ

Խորենացու լեզվում արտացոլվել է 5-րդ դարի գրաբարի և ընդհանրապես հայերենի բառակազմության այն առանձնահատկությունը, ըստ որի նախածանցումը զգալիորեն զիջում է վերջածանցմանը, ինչպես բառերի ընդհանուր թվով, այնպես էլ կաղապարների բազմազանությամբ: Եվ իսկապես, «Չայոց պատմության» մեջ մենք հանդիպում ենք 175 նախածանցավոր բառ ի տարբերություն վերջածանցավորների 1613 քանակի:

Ներկայացնենք խորենացու բառապաշարի նախածանցավոր կազմությունները ըստ առանձին կաղապարների: Ամենից ավելի օրինակներ վկայված են պարզագույն՝

մեկ նախածանց + արմատ (հիմք) կաղապարով: Ընդ որում բացարձակ գերակշռություն ունեն ժխտական ան- նախածանցով կազմությունները: Մյուս նախածանցներով գործածված են սակավաթիվ բառեր: Հետաքրքրական է նշել, որ Խորենացու լեզվում շատ են հունարան դպրոցի ստեղծած նախածանցներով կազմությունները, և սա նույնպես խոսում է այն մասին, որ Խորենացին մեծ տուրք չի տվել հունարանությանը իր ստեղծագործություններում:

Ստորև բերվում են քննվող սկզբնաղբյուրի մեջ հանդիպող նախածանցավոր բառերն ըստ առանձին նախածանցների aS հիմնակաղապարով և նրա ենթակաղապարներով:

aS- մեկ նախածանցով կազմություններ (սկզբում նշում ենք ժխտականով կազմությունները).

ան- անանց, անբաւ, անբնակ, անդադար, աներկիւղ, անխռով, անկարգ, անհանճար, անյայտ, անողորմ, անոճ, անչափ, անպարապ, անվեհեր, անօգուտ և այլն:

ապ(ա) - ապաժոյժ, ապերախտ, ապուշ

տ - տգէտ, տկար

արք - փոխառնյալ նախածանցով վկայված է միայն մեկ բառ՝ **արքեպիսկոպոս**:

Որոշ բառեր կազմված են այսպես կոչված նախդիր-նախածանցներով. **առ, գ, ընդ, ի(յ)**:

առ - առաւել, առընթեր, առողջ

գ - նախդրի սերտաճումով կիրառված է **գիետ** բառը և՛ որպես նախադրություն, և՛ մակբայ:

ընդ - ընդարձակ, ընդհանուր, ընդհատ, ընդոստ

ի (յ) նախդրով վկայված են **իսկիզբն, յապայ, յառաջ, յերկար** բառերը, որտեղ **ի(յ)** նախդրի իմաստը (ինչպես և նախորդ օրինակում **գ** նախդրի իմաստը) մթազնել է, և նախածանցները առանձնացվում են միայն ձևականորեն:

Հունարան դպրոցի ստեղծած նախածանցներից այս կաղապարով վկայված են ընդհաննը հետևյալ օրինակները (մյուսները տես aJS կաղապարի տակ).

համ – համազն, համանուն

հոմ – հոմանուն

aS^f ենթակաղապարով, որտեղ հիմքը ունի քերականական ձևավորում, օրինակները միայն չորսն են. ընդ որում երկու դեպքում ունենք անվանական հիմք (գոյականի սեռական հոլովածևով՝ **ան-** նախածանցով՝ **անկողին**, **առ-** նախածանցով՝ **առանձին**, իսկ երկու դեպքում առկա է բայական հիմքը (անցյալ կատարյալի հիմքի ձևով) **ան-** նախածանցով՝ **անդարձ**, **անմոռաց**:

ajS կաղապարով կազմված բառերում նախածանցը կցվում է հիմքին **ա** հոդակապով. դրանք հունաբան դպրոցի ստեղծած նախածանցներով բառերն են.

զեր(ա) – զերապայծառ

համ(ա) – համաթիւ, համամայր, համամիտ, համապատիւ, համատի, համատոհմ

պար(ա) – պարականոն

ստոր(ա) – ստորագիր

շար(ա) – շարագիր

Խորենացու երկում կան զգալի թվով բառեր, որոնցում նախածանցը կցվում է վերջածանցավոր հիմքին a(Sa) կաղապարով. դրանք բացարձակ մեծամասնությամբ ժխտական **ան-** նախածանցով կազմված բառերն են, մյուս նախածանցներով կան միայն եզակի օրինակներ.

ա- ակամայ (ա փոխառյալ ածանցն առանձնացվում է **կամայ** բառի համեմատությամբ).

առ - առանցք

ան - անազգի, անասուն, անարժան, անբարի, անժամանակ, անիրաւ, անլսող, անխորհուրդ, անկեղծաւոր, անհանգիստ, անհաւաստի, անհնարաւոր, անհոգոդ, անձանձրոյթ, աննախանձոտ, անուճող, անուսումն:

Այս նախածանցով կան նաև մի քանի կազմություններ՝ արմատական հիմքի հնչյունափոխությամբ՝ **անընտրող, աննշան, աննշանակ, անպիտան**

համ – համազգի

հոմ – հոմիշխան

Երկու նախածանցով Խորենացին գործածել է ընդամենը երկու բառ՝ **յանխնայ** և **յանկարծ** մակբայները $a(aS)$ կաղապարով, որտեղ առաջին նախածանցի դերում հանդես է եկել **ի(յ)** սերտաճած նախդիրը:

$aj(Sa)$ կաղապարով վերջածանցավոր հիմքը կցվում է նախածանցին **ա** հոդակապի միջոցով (օրինակներում հնչյունափոխված հիմքերը չենք առանձնացնում).

արտ(ա) - արտադատութիւն

համ(ա) – համաբարոյ, համաբնակ, համախորհուրդ, համանմանակ

մակ(ա) – մակագրութիւն

վեր(ա) – վերահասու

$a[(Sa)a]$ կաղապարով կազմված բառերում նախածանցը կցվում է երկու վերջածանց ունեցող հիմքերին: Մեծ մասամբ դրանք անորոշ դերբայի **ել/ալ** վերջավորություններով և **-ի** ածանցով ձևավորված հիմքեր են, այլ ածանցներով կան եզակի կազմություններ. որպես նախածանց բոլոր դեպքերում հանդես է գալիս **ան-** ժխտականը:

Վկայված են հետևյալ օրինակները՝ **անբաղձալի, անդառնալի, անխզելի, անխոնարհելի, անկարելի, անհասանելի, անհաւատալի, անմատչելի, անշրջելի, անպարտելի, անտանելի, անքթթելի**, ինչպես նաև՝ **անաճելութիւն, անառաջնորդ, անհաստատուն:**

Նախածանցավոր ամենաբարդ կաղապարները պարունակում են երեք ածանցով ձևավորված հիմքեր. մի դեպքում երեքն էլ վերջածանցներ են՝ $a\{[(Sa)a]a\}$ - **անյիշատակելի**, մյուս դեպքում՝ հիմքն ունի մեկ նախածանց և երկու վերջածանց՝ $a\{[a(Sa)]a\}$ - **անըմբռնելի:**

Խորենացու երկուն կան սակավաթիվ օրինակներ, երբ նախածանցը կցվում է բարդ հիմքին, ընդ որում վերջինս կարող է լինել ինչպես հոդակապով, այնպես էլ առանց հոդակապի: Հոդակապավոր բարդ հիմքերով ունենք $a(SjS)$ կաղապարը՝ **անծեռագործ, անմաքրասէր:** Երբեմն բարդության բաղադրիչներից մեկը կարող է իր հերթին ունենալ որևէ ածանց՝ **անիմաստասէր**՝ $a[(Sa)jS]$ կամ ամբողջ բարդությանը կցված է վերջածանց՝ **անմիաբանութիւն**՝ $a[(SjS)a]$: Այս վերջին բառը կարելի է մեկնաբանել և որպես

վերջածանցավոր կազմություն [a(SjS)]a կաղապարով, որտեղ վերջին քայլը **-ութին** վերջածանցի կցումն է:

Անհողակապ բարդ հիմքերով վկայված են հետևյալ օրինակները՝ a(SS) կաղապարով՝ **անթլատ, անժուժկալ, անկասկած, յայնժամ, յորժամ**, մի դեպքում անհողակապ բարդության բաղադրիչներից երկրորդը ունի վերջածանցներ՝ **անակնունելի՝ aS[(Sa)a]**.

Բաղադրյալ բառերի ամենամեծ խումբը, ինչպես և պետք էր սպասել, կազմում են վերջածանցավոր բառերը: Միայն Sa պարզագույն կաղապարում Խորենացու երկուս գործածված է 1043 բառ: Բացի սրանցից, կան նաև մեկից ավելի վերջածանց ունեցող բառեր, ինչպես նաև բարդ կամ նախածանցավոր հիմքերից կազմված վերջածանցավոր բաղադրություններ՝ տարբեր կաղապարներով:

Մեկ վերջածանցով Sa կաղապարում հիմքը, ինչպես և մնացած դեպքերում, կարող է լինել մաքուր, հնչյունափոխված և քերականորեն ձևավորված, այսինքն՝ հանդես է գալիս հնարավոր բոլոր տարբերակներով: Վերջածանցները նույնպես խիստ բազմազան են: Խորենացին գործածել է 5-րդ դարում գոյություն ունեցող գրեթե բոլոր վերջածանցներով կազմություններ: Այդ վերջածանցների մեջ կան և՛ մեծ հաճախականություն ունեցողներ (ինչպես **ական՝ ազգական, գաղթական, ակ՝ աւերակ, գետակ, արար՝ եղբայրարար, ային՝ գիշերային, դաշտային, ութին՝ ճարտարութին, խաղաղութին, ումն՝ ուսումն, ագոյն՝ մօտագոյն, յստակագոյն և այլն**) և թե՛ ոչ գործուն կամ եզակի ածանցներ (ինչպես՝ **ելին՝ ամենելին, ար՝ մուլար, արդար, օն՝ պաշտօն, իւլ՝ երկիւղ, իստ՝ հանգիստ և այլն**): Ավելորդ ենք համարում բերել օրինակներ բոլոր վերջածանցներով, որոնց ընդհանուր թիվը անցնում է 180-ից: Նշենք միայն մի շարք բնորոշ օրինակներ հնչյունափոխված և քերականորեն ձևավորված հիմքերով:

Տa - բոյս - բուսումն, գերի - գերութին, գէս - գիսակ, գէտ - գիտութին, գլուխ - գլխանոց, գլխաւոր, դպիր - դպրոց, դպրութին, լեառն – լեռնական, լեռնային, ոսկի – ոսկեղէն, այստեղ պետք է նշել նաև մի շարք հատված հիմքերով կազմություններ՝ եթովպիա - եթովպացի, Լիւդիա - լիւդիական:

Չայնավորով սկսվող որոշ ածանցներից առաջ հիմքի վերջի ի ձայնավորը ձուլվելով ածանցի ա ձայնավորին, տալիս է ի + ա- ե հնչյունափոխությունը: Այդ բառերի կառուցվածքն արտացոլվում է $\bar{S}a$ կաղապարով՝ **ալեւոր, այգեստան, գինեւէտ, հոգեւոր, պատանեակ, տարեկան:**

S^fa – քերականական ձևավորում ունեցող հիմքերը տարբեր բնույթի են, դրանք կարող են լինել անվանական կամ բայական: Բայականների մեջ ամենից հաճախականն է կատարյալի հիմքին համընկնող ձևը՝ **ախտացեալ, առումն, ասացուած, արարած, դառնացող, եղական, ընթացք, ընթերցումն, ընկեցիկ, կալանք, մնացորդ, ուրացութիւն, ստացական** և այլն: Ավելի քիչ են պատճառական բայահիմքերին համընկնող ձևերը՝ **դիեցումն, յիշեցուցանող, յորդորեցուցիչ, սառուցեալ** և այլն: Նշենք ի դեպ, որ այս տեսակի հիմքերի հետ զուգորդվում են հիմնականում **եալ, իչ, ող, ումն** ածանցները, որոնք դերբայակերտ կամ բայանվանակերտ արժեք ունեն: Սրանց մեջ հանդիպում են նաև հնչյունափոխված հիմքով ձևեր՝ **սնուցող:**

Երկու բառ հորեմացու երկուն կազմված են անորոշ դերբայի հիմքից՝ **գալուստ** և **լալիւն**, իսկ մեկ բառ՝ հրամայականի հիմքից՝ **տուրք:** Ներկայի սոսկածանցավոր հիմքերից են կազմվել **թռիչք, թռչուն** բառերը: Անվանական հիմքերի քերականական ձևավորումը հիմնականում հանդես է գալիս սեռական-տրական հոլովածևով՝ **անուամի, աստեղեայ, գեղջուկ, դրանիկ, եզերումն, եղջերու, եւթանասուն, կայսերական, մօրաբար, սերմանաւոր, տանիք, տուրնջենային**, հոգնակի ուղղական հոլովածև ունեն **մարդկային, մարդկութիւն** բառերի հիմքերը: **Մեզէն** բառում դերանվանական հիմքը համընկնում է տրական հոլովածևին, իսկ **հարսամիք** - ի հիմքը առանձին հոլովածև չէ, այլ հանդես է գալիս թեք հոլովների կազմում (**հարսն, հարսին, հարսունք, հարսանց**): Հոգնակի սեռական-տրականին են համընկնում **երկիցս, երիցս, չորիցս** բառերի թվականական հիմքերը, եթե անշուշտ **իցս** մասնիկը չդիտենք որպես սերտաճած ածանց: Երկու վերջածանցով կազմությունները (Sa)^a կաղապարով, նույնպես զգալի քանակ են ներկայացնում: «Հայոց պատմության» մեջ վկայված են 332 այդպիսի բառեր: Հետաքրքրական է նշել, որ դրանցից գրեթե մեկ երրորդում որպես երկրորդ վերջածանց կիրառվում է **-ութիւն** գոյականակերտ ածանցը՝ տալով հիմքին վերացականության,

գործողության կամ հավաքականության իմաստ: Նրան նախորդող ածանցները տարբեր բնույթ և գործառույթ ունեն: Ինչպես հայտնի է, **ութիւն** ածանցը ամենահաճախական ածանցն է եղել հայերենի զարգացման բոլոր փուլերում և գործառական սահմանափակություն գրեթե չի ունեցել: Ամենից ավելի հաճախ **-ութիւն** ածանցը Խորենացին զուգորդում է **աւոր**-ի հետ՝ **ահաւորութիւն, բռնաւորութիւն, գործաւորութիւն, դաշնաւորութիւն, եկաւորութիւն, թագաւորութիւն, կարգաւորութիւն, կեղծաւորութիւն, հնարաւորութիւն, մերծաւորութիւն, մտաւորութիւն, սպասաւորութիւն** և այլն: Մյուս վերջաածանցների հետ զուգորդությունները սակավաթիվ են՝ **-ական՝ ազգականութիւն, խոհականութիւն, պատուականութիւն, սեպհականութիւն, ան՝ իշխանութիւն, ակ՝ խառնակութիւն, ող՝ աջողութիւն** և այլն: Վկայված են **-ութիւն** ածանցի զուգորդությունները ավելի քան քառասուն այլ վերջածանցների հետ:

Հաճախականության տեսակետից երկրորդ տեղում է ածականակերտ **-ական** ածանցը, որը նույնպես գործածվում է բազմաթիվ այլ վերջածանցների զուգորդությամբ, օրինակ՝ **ազնուական, աւետարանական, թագաւորական, ծննդական, կոչնական, համբերողական, յաւիտենական, նախնական, պատերազմողական, փախստական, փրկչական** և այլն:

Երրորդ տեղում է ի ածանցը, որը բայի անորոշ դերբայից կազմում է ածականներ՝ **ատելի, բասրելի, գարշելի, գովելի, ըղծալի, ըմպելի, ճաշակելի, ողորմելի, ուտելի, պանծալի, պաշտելի, սիրելի, տեսանելի** և այլն:

Նույն հիմքերից **ի + ք (իք)** սերտաճած բաղադրյալ ածանցով կազմվել են զգալի թվով գոյականներ՝ **ըմպելիք, լուալիք, լսելիք, սպառնալիք, սքանչելիք, տեսանելիք** և այլն: Եթե **ի** և **ք** մասնիկները դիտենք ինքնուրույն ածանցներ, ապա նշված բառերը կդասվեն եռածանց կաղապարին:

Մյուս ածանցներից որպես երկրորդ վերջածանց առավել հաճախական են **ապէս՝ արդարապէս, արժանապէս, գեղեցկապէս, թագաւորապէս, կատարելապէս, սաստկապէս, վայելչապէս** և այլն, **ագոյն՝ գեղեցկագոյն, ընչեղագոյն, կատարելագոյն, հարստագոյն, ուժգնագոյն, պատուականագոյն** և այլն, **աւոր՝ արժանաւոր, կարևոր, հովանաւոր, միայնաւոր, մշտնջենաւոր, պիտանաւոր, աբար՝ արդարաբար, արիաբար,**

առաքելաբար, գեղեցկաբար, խորհրդաբար, և այլն, ումն՝ բաժանումն, կանգնումն, կործանումն, նորոգումն, քակտումն և այլն: Բավական գործածվել է նաև մակբայակերտ ս ածանցը, որն ավելանալով ազոյն վերջածանցով ածականների վրա՝ դրանք փոխակերպում է մակբայների, ինչպես՝ թուլագոյնս, լաւագոյնս, խորագոյնս, յանդգնագոյնս, նմանագոյնս, պերճագոյնս, ստուգագոյնս և այլն:

Մնացած ածանցներով նույնպես կազմվում են բազմազան զուգորդություններ, սակայն դրանց հաճախականությունը խորենացու երկուս խիստ փոքր է, հաճախ վկայված ընդամենը մեկ երկու օրինակով, ինչպես՝ առաքելուհի, կարճառօտիւ, միայնակ, պարսկային, պիտանացու և այլն:

Երեք վերջածանցով կազմությունները՝ [(Sa)a]a կաղապարով, ուսումնասիրվող հուշարձանում բազմաթիվ չեն: Այս սակավաթիվ բաղադրություններում նույնպես վերջին քայլը հիմնականում ամենահաճախական -ութին և -ազոյն ածանցների կցումն է, ընդ որում, դրանց նախորդող ածանցները անհրաժեշտության դեպքում ենթարկվել են շեշտափոխական հնչյունափոխության և կարող են նույնիսկ երևան չգալ վերջնական տեսքում՝ ինչպես՝ աղտեղութին (աղտ-եղ-ի-ութիւ), առաջնորդութին (առաջ-ին...), իմաստնագոյնս (իմ-աստ-ուն...), խորհրդականութին (խորի-ուրդ...), ծննդականութին (ծն-ունդ...), կարևորագոյն (կար-ի-աւոր...), մոլեգնութին (մոլ-ի-ա-գին...), սաստկագոյնս (սաստ-իկ...), ինչպես նաև առանց հնչյունափոխության՝ հաստատագոյնս, ներքսագոյն:

Մեկական բառ վկայված է ային և ի վերջնադիր ածանցներով՝ ստորնակային, ներքինի:

Բավական մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնցում վերջածանցը կցվում է արդեն որևէ նախածանց ունեցող հիմքին: Այս դեպքում թե՛ նախածանցների և թե՛ վերջածանցների մեջ կան առավելագույն հաճախականություն ունեցող միավորներ:

Նախածանցների մեջ դա ժխտական ան- նախածանցն է, իսկ վերջածանցների մեջ -ութին-ը, որոնք զուգորդվում են ինչպես միմյանց, այնպես էլ այլ վերջածանցների ու նախածանցների հետ: Ստորև բերում ենք (aS)a կաղապարով օրինակները ըստ նախածանցների ու վերջածանցների տարբեր զուգորդությունների:

ան - աբար՝ անարգաբար, աներկիւղաբար, անզգուշաբար, անժուժաբար,
անխլաբար, անյայտաբար, անյապաղաբար, անպաճուճաբար

ան - ական՝ անանցական

ան - անք՝ անարգանք

ան - ապէս՝ անզբաղապէս, անկարգապէս

ան - ի՝ անմարդի

ան - ին՝ անհնարին

ան - ութին՝ անաստուածութիւն, անբանութիւն, անբաւութիւն, անբերութիւն,
անգթութիւն, անզգամութիւն, անժուժութիւն, անլիութիւն, անխաղաղութիւն,
անկատարութիւն, անկարգութիւն, անհասութիւն, անհաւասարութիւն, անհնարութիւն,
անմահութիւն, անմտութիւն, անյուսութիւն, անսայթաքութիւն, անփառութիւն,
անօրէնութիւն:

առ - ագոյն՝ առաւելագոյն, առողջագոյն

առ - ական՝ առանձնական

առ - եալ՝ առաւելեալ

առ - ին՝ առտնին

առ - ութին՝ առարկութիւն, առաւելութիւն, առողջութիւն

ընդ - ագոյն՝ ընդարձակագոյն

ընդ - ութին՝ ընդարձակութիւն, ընդդիմութիւն

համ - այն՝ համանգամայն

հան (համ) - ումն՝ հանդիպումն

յ - ագոյն՝ յանկագոյն, յառաջագոյն

յ - ակ՝ յելուզակ

յ - աւոր՝ յանցաւոր

յ - ն՝ յառաջն

յ - որդ՝ յաւելորդ

յ - ուած՝ յաւելուած, յօրինուած

յ - ութին՝ յերկարութիւն

յ - ումն՝ յաւելումն

տ - ազոյն՝ տօգեղագոյն

տ - ի՝ տմարդի

տ - ութիւն՝ տօգիտութիւն, տքնութիւն

Նախածանցավերջածանցավոր կազմութիւնների մեջ են մտնում նաև հունարան դպրոցի ստեղծած նախածանցներավոր բառերը, որոնք խորենացու երկուն գործածված են խիստ չափավոր, չկան արհեստական կառուցվածքներ: Հանդիպում են հետևյալ օրինակները ըստ առանձին ածանցների.

(ajS)a

գեր - գերազանցօրէն

շար - շարագրութիւն, շարադրութիւն

ստոր - ստորագրութիւն

վեր - վերաբանութիւն, վերածնութիւն

տար - տարակուսանք, տարապարտուց

Կան որոշ թվով կառուցվածքներ, որոնք պարունակում են երեք ածանցներ՝ տարբեր զուգորդություններով, ինչպես՝

[a(aS)]a - յանկարծակի, յանկարծօրէն, յանպէտս

[a(Sa)]a - անարժանաբար, աներևութաբար, անընդունելութիւն, անիշխանութիւն, անհաստատութիւն, առանձնական, առաւելագոյն, արտասանութիւն, յաջողուած, յաջողութիւն, յարքունուստ, յերկարագոյնս

[(aS)a]a - անպիտանութիւն, յապայսն

Չորս ածանցով գործածվել են $a[(Sa)a]a$ կաղապարով **անսիրելութիւն** և $\{[a(Sa)]a\}a$ կաղապարով **յաջողակաբար** բառերը:

Խորենացու «Հայոց պատմության» մեջ կիրառված են մեծ թվով վերջածանցներով բառեր, որոնց մեջ ածանցը կցվել է արդեն բարդ երկրորդական հիմքին, ընդ որում այդ բարդությունները կարող են լինել ինչպես հոդակապով (SjS կաղապարով), այնպես էլ առանց հոդակապի (SS կաղապարով): Մեկ օրինակում հոդակապի դերում հանդես է եկել և շաղկապը՝ **երթևեկութիւն**՝ (ScS)a: Առաջին երկու

կաղապարները վերջածանցավոր բաղադրություններում հանդիպում են գրեթե հավասարապես: Նույնը չենք կարող ասել տարբեր ածանցների հաճախականության մասին: Նշված տիպի բառերում բացարձակ գերակշռություն ունի **-ութիւն** ածանցը, որով կազմվել են մոտ 150 բառ, մյուս ածանցներով կազմությունները անհամեմատ քիչ են, յուրաքանչյուրով ամենաշատը մոտ մեկ տասնյակ: Բերենք օրինակներ առանձին ածանցներով ըստ հոդակապավոր և անհոդակապ բարդ հիմքերի (հիմքի բաղադրիչների ձևավորման առանձնահատկությունները չենք նշում).

(SjS)a.

-աբար՝ այլաբանաբար

-ագոյն՝ բարեբախտագոյն, խորամանկագոյն, հրաշափառագոյն, օգտակարագոյն

-ական՝ տանուտիրական

-անք՝ արհամարհանք, խելագարանք, մեղադրանք

-ապէս՝ չափաբերապէս

-եայ՝ որձաքարեայ

-երորդ՝ մետասաներորդ

-ի՝ բազմադիմի, մեկուսի, միաշաբաթի, վատակերպի

-իկ՝ բարեբաստիկ, լեռնակեցիկ, հրաշատեսիկ, քաջատոհմիկ

-իւ՝ մանրախուզիւ

-ող՝ վերահայեցող

-ոյն՝ միահաղոյն

-ութիւն՝ աստուածաբանութիւն, եպիսկոպոսապետութիւն, երկրագործութիւն,

ողջախոհութիւն, չարափառութիւն և այլն:

(SS)a

-աբար՝ այլազգաբար, հագներգաբար

-ակ՝ արեգակնակ

-ական՝ դիւցազնական, մտածական, ողբերգական

-այն՝ միանգամայն

-արան՝ ձիարձակարան

-եակ՝ քսանամեակ

-եան՝ արևելեան, արևմտեան, երեքթևեան, երեքտակեան, երեքքարեան, եօթնպարսպեան

-եայ՝ երեքօրեայ, երկլուսնեայ, լեռնոտնեայ, ծովեզերեայ, ճենագնեայ, մերագնեայ, միջօրեայ, տասնամեայ

-ի՝ այնպիսի, երեքանկիւնի, երկդիմի, երկթերթի, երկսայրի, որպիսի

-իկ՝ քաջընթացիկ

-ուչ՝ տնկալուչ

-ութիւն՝ ակնարկութիւն, ակնկալութիւն, դիւցազնութիւն, երկայնմտութիւն, երկրպագութիւն, մտածութիւն, յայտարարութիւն, վրէժխնդրութիւն և այլն:

Խորենացին գործածում է նաև մի շարք վերջածանցավոր կազմութիւններ, որտեղ վերջածանցը կցվել է անհոդակապ կրկնավոր հիմքերին՝ աղտաղտուկ, գրգռութիւն, բամբասանք, խողխողումն, կասկածանք, չարչարանք, ջախջախումն, վաղվաղակի:

Կան վերջածանցավոր կազմութիւններ ավելի բարդ կառուցվածքային կաղապարներով, երբ հիմքերը պարունակում են թե՛ արմատական ձևույթներ, թե՛ ածանցներ: Սրանց մեջ ամենից ավելի հաճախական են այն դեպքերը, որտեղ առաջին արմատական բաղադրիչը ստանում է վերջածանց: Կաղապարն ունի հետևյալ տեսքը՝ [(Sa)jS]a: Այստեղ ևս ամենագործածական ածանցն է -ութիւն-ը. օրինակներ՝

-ագոյն՝ աջողածեռնագոյն,

-ապէս՝ արդարադատապէս,

-ութիւն՝ ժամանակագրութիւն, իշխանութիւն, խորհրդակցութիւն, ծննդաբանութիւն, կարեկցութիւն, կենդանագրութիւն, կենցաղավարութիւն, կռահահարութիւն, համառօտասիրութիւն, միայնակեցութիւն, միայնամարտութիւն, ուսումնասիրութիւն, սքանչելագործութիւն:

Մյուս կառուցվածքային կաղապարներով՝ ածանցների և արմատների այլևայլ դասավորությամբ, վկայված են սակավաթիվ օրինակներ. այսպես՝

[(SjS)a]a՝ արհամարհելի

[[̄]Sj(Sā)]a` բարեվայելչութիւն

{[a(Sa) j]S}a` յաջողածեռնութիւն

[(Sa)j]S)a` ընդդիմակացութիւն, յառաջադիմութիւն, յառաջատեսութիւն

[a(SjS)]a` անընչասիրաբար

Անհողակապ բարդ հիմքով և ածանցներով գործածված են հետևյալ բառերը`

[a(SS)]a` անկասկածաբար

[a(SS)]a` յորջորջումն

(SS^fā)a` վերակացութիւն (վերա-կաց-ու-ութիւն)

Վերջածանցավոր կազմութիւնների մեջ ուրույն տեղ են գրավում բայերը: Դրանք հայերենի միակ խոսքի մասն են, որ միշտ ունեն քերականական ձևավորում: Անորոշ դերբայի վերջավորութիւնը (համապատասխան լծորդ ձայնավորներով) այստեղ հանդես է գալիս միաժամանակ թե՛ քերականական, թե՛ բառակազմական մասնիկի դերում: Խորենացու երկուն գործածված բայերը բառակազմական տեսակետից զգալի հետաքրքրություն են ներկայացնում: Մի կողմ թողնելով այն բայերը, որոնք միայն բայարմատից և անորոշ դերբայի վերջավորութիւն են կազմված` քննենք այն կազմութիւնները, որտեղ անորոշ դերբայի վերջավորութեանը նախորդող մասը բառակազմական տեսակետից բաղադրյալ է: Այստեղ կարելի է առանձնացնել մի քանի կաղապար, որոնք հիմնականում բաժանվում են երկու խմբի` 1. բայական վերջավորութեանը նախորդող մասը բարդութիւն է և 2. բայական վերջավորութեանը նախորդող մասը ածանցավոր կազմութիւն է: Առաջին խմբի բայերի մեջ առանձնացվում են հողակապով և անհողակապ բարդութիւնները (SjS)a և (SS)a կաղապարներով, ինչպես` բարեխօսել, գործակցել, դատապարտել, զօրավարել, ձեռնադրել, ճակատագրել, միաբանել, վատասրտել, փոխատրել, փորագրել և այլն: Անհողակապներից` ակնածել, ակնարկել, դիւրածել, երկմտել, երկրպագել, թևածել, թևարկել, փոխարկել, քարկոծել և այլն: Նշված կաղապարներով հանդիպում են և կրկնված սկզբնահիմքերով կառույցներ, հիմնականում անհողակապ միացութիւնների մեջ` արծարծել, բաղբաղել, բարբառել, գրգռել, խողխողել, կայկայել, կասկածել,

չարչարել, փայփայել, քայքայել և այլն. հողակապավոր կրկնավորներից վկայված է **զանազանել** բայը:

Բարդությունների բաղադրիչներից որևէ մեկը կարող է իր հերթին լինել ածանցավոր կազմություն [(Sa)jS]a կաղապարով: Վկայված օրինակները բազմաթիվ չեն: Յետաքրքրական է նաև նշել, որ այս կառուցվածքն ունեցող բայերի մեջ ածանցները նույնպես պատկանում են ոչ գործուն կամ հազվադեպ ածանցների թվին, ինչպես օրինակ՝ **անակ՝ փոխանակաբանել, աղ՝ կենցաղավարել, աստ՝ իմաստասիրել, ունդ՝ ծննդաբանել, կին՝ կրկնագրել**:

Նախածանցավոր բաղադրիչներով կազմություններից հանդիպում են j նախածանցով **յառաջաբերել**, իսկ ընդ նախածանցով **ընդդիմաբանել** և **ընդդիմակայել** բայերը՝ [(aS)jS]a կաղապարով, ինչպես նաև **յառաջասել** բայը [(aS)S]a կաղապարով:

Երկրորդ խմբի (բայական վերջավորությունից առաջ գտնվող մասի ածանցավոր կազմությամբ) բայերի մեջ իրենց հերթին առանձնացվում են նախածանցավոր և վերջածանցավոր հիմք ունեցողները: Նախածանցավոր կազմությունների մասին պետք է ասել, որ սրանք մեծ մասամբ պարունակում են հունաբան դպրոցի կողմից ստեղծված նախածանցները, որոնք սկզբնապես ստեղծվել են հատկապես հունարենի բայերի պատճենմամբ, իսկ հետագայում տարածվել են նաև այլ խոսքի մասերի վրա: Բացի նշված ածանցներից, հանդիպում են և նախկին նախդիր-նախածանցներով կազմություններ, որոնք ավանդական էին հին հայերենի համար: Նախ բերենք այս վերջին տիպի բայերի օրինակները՝ համապատասխան նախդիր-նախածանցներով.

առ - առաւելուլ

զ - զետեղել, զչարել

ընդ - (հնչյունափոխված՝ ըն, ըմ) – ընդարծակել, ընդունել, ընդվզել, ընծեռել, ըմբերանել, ըմբռնել

յ - յանձնել, յանցուցանել (պատճառական բայ), յառաջել, յաւելուլ, յերկարել, յօրինել:

Յ նախդիրը մի դեպքում հանդիպում է կրկնավոր հիմքից առաջ՝ **յորջորջել**: Պետք է ասել, որ այս տիպի կազմություններում նախածանցները հաճախ սերտաճել են հիմքին, և բառակազմական իմաստը միշտ չէ, որ հստակ գիտակցվում է:

Երկու նախդիր – նախածանց պարունակող հիմքով գործածվել են **առընդունել** և **առիկողել** բայերը:

ԱՆ- ժխտական նախածանցով հանդիպում են **անամօթել**, **անարգել**, **անհետել** կազմությունները: **Անմիաբանել** բայում ժխտական նախածանցը կցվել է հոդակապավոր բարդություն ներկայացնող հիմքին: Ավելի շատ չեն և հունաբան դպրոցի ստեղծած նախածանցներով կազմված բայերը (**ajS**)**a** կաղապարով (նախածանցը արմատին է կցվում **ա** հոդակապի միջոցով): Խորենացու երկում վկայված են կազմություններ հետևյալ նախածանցներով.

արտ - **արտահալածել**, **արտաճառել**, **արտասահմանել**, **արտափայլել**

գեր - **գերազանցել**

ընթ – **ընթադրել**

հակ – **հակամիտել**

համ – **համակամել**

նախ – **նախակարգել**

շար – **շարագրել**, **շարադասել**, **շարայարել**

պար – **պարածածկել**, (նաև՝ **պարածածկեցուցանել**), **պարայածել**

վեր – **վերագրել**

տար – **տարակուսել**

Առանց հոդակապի արմատին է կցվում **բաղ** նախածանցը **բաղդատել** բայում՝ (**aS**)**a** կաղապարով:

Ինչպես տեսնում ենք, Խորենացին մեծ տուրք չի տվել հունաբանությանը և գերծ է մնացել նրանց ստեղծած արիեստական կառուցվածքներից:

Ավելի շատ են այն օրինակները, որտեղ բայական վերջավորությանը նախորդող մասը վերջածանցավոր կազմություն է: Այստեղ կարող են հանդես գալ ամենատարբեր վերջածանցներ: «Հայոց պատմության» մեջ գործածված օրինակներում նկատելիորեն

առանձնանում է -աւոր ածանցը, որը հանդես է գալիս զգալի թվով բայերի մեջ՝ բնաւորել, գօտելորել, երաշխաւորել, թագաւորել (նաև թագաւորեցուցանել), լուսաւորել, կրօնաւորել, հարկաւորել, մերձաւորել, միաւորել, ուղեւորել, վիրաւորել, տպաւորել, փառաւորել և այլն: Մյուս ածանցները հանդիպում են շատ ավելի քիչ, մեծ մասամբ մեկական օրինակներում:

Նշենք դրանցից մի քանիսը՝

ակ - բնակել, խառնակել, նշանակել

արէն - փոխարինել

ագիւն - զայրագնել

անակ - փոխանակել

ար - զարդարել, մեծարել, յարդարել

որդ - ճանապարհորդել և այլն:

Բուն բայական կերպածանցներով նույնպես վկայված են օրինակներ.

տ - պառակտել, փետտել, քակտել

ոտ – խոցոտել

չ - զատչել

Եվ վերջապես, բայակազմության քննությունը ամբողջացնելու համար պետք է նշել երկու վերջածանցով մի քանի կազմություններ, որոնք հանդիպում են խորենացու երկում՝

ան + աւոր - արժանաւորել

ան + որդ - փոխանորդել

աստ + ուն – իմաստնանալ

ել + ակ – հետևակել

ի + ագիւն – մոլեգնել

ին + որդ - առաջնորդել

եղ + ի - աղտեղանալ (աղտ - եղ - ի - անալ)

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի մեջ պատկառելի տեղ են գրավում բառակազմական վերլուծական կառույցները: Ինչպես գիտենք, բառակազմության վերլուծական տիպի ժամանակ ստեղծվում են բառային մեկ միավորի արժեք ունեցող կառույցներ, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց որոշ ձևական և իմաստային ինքնուրույնությունը (շեշտի պահպանում, բաղադրիչների անջատ գրություն և այլն):

Բառակազմության վերլուծական տիպին պատկանող միավորները հայագիտության մեջ ընդունված է կոչել հարադրություններ, ընդ որում, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության դրանք սովորաբար բաժանվում են բայական և անվանական (ավելի ճիշտ կլիներ ասել ոչ բայական) հարադրությունների: Ինչպես հայոց լեզվում ընդհանրապես, այնպես էլ Խորենացու երկում անհամեմատ ավելի հաճախական են բայական հարադրությունները: Բայական հարադրությունների բաղադրիչներից մեկը բայ է, իսկ մյուսը որևէ այլ խոսքի մաս (պայմանականորեն կոչում են անվանական, թեև որոշ դեպքերում կարող են հանդես գալ և այլ՝ սպասարկու խոսքի մասեր): Որպես բայական հարադիր առավելապես գործածվում են **առնել** և **լինել** բայերը, որոնցով Խորենացու երկում հանդիպում են մի քանի տասնյակ կազմություններ: Բերենք մի շարք օրինակներ՝ **ազդ առնել**, **ակնարկութիւն առնել**, **աշխատ առնել**, **ապաստան առնել**, **ապաւէն առնել**, **առաջի առնել**, **ասպատակ առնել**, **արժանի առնել**, **կին առնել**, **կոծ առնել**, **հալածական առնել**, **հարկ առնել**, **հրծիգ առնել**, **ծերբակալ առնել**, **մարտ առնել** և այլն. **լինել** բայով՝ **ականատես լինել**, **ակնակառոյց լինել**, **անձնատուր լինել**, **աշխատ լինել**, **լուռ լինել**, **լսող լինել**, **խարդաւանակ լինել**, **խափան լինել**, **հեղձամահ լինել**, **հետահաս լինել**, **հնազանդ լինել**, **հրկէզ լինել**, **ծեռնտու լինել**, **մարթ լինել**, **միջամուխ լինել** և այլն:

Ըստ գործածման հաճախականության հարադրավոր բայերի մեջ հաջորդ տեղում է **տալ** բայը: Խորենացու երկում վկայված են նշված բայով հետևյալ հարադրությունները. **թոյլ տալ**, **խոյս տալ**, **խրատ տալ**, **հրաման տալ**, **ծեռն տալ** (**ծեռս**

տալ), ճակատ տալ, պատասխանի տալ, պատուէր տալ, սատարս տալ, տեղի տալ. տալ բայի առաջադաս դիրքով՝ տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրէժ:

Մյուս բայերով վկայված կազմությունները քանակով զիջում են վերը նշվածներին, թեև ի հայտ են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և բավական լայն զուգորդելիություն. ինչպես օրինակ՝ **ակն ածել, ակն ունել, աշխատութիւն կրել, առաջի արկանել, առաջի դնել, բուռն հարկանել, գայթակղութիւն արկանել, գերի ածել, գերի վարել, դադարումն առնուլ, դարան գործել, զօր յարուցանել, թագ կապել, թափուր մնալ, թեկն ածել, խնամ տանել, կասկած ունել, կին առնուլ, հալածական արկանել, հանգիստ առնուլ, հոգ տանել, ծայն արկանել, ճախր առնուլ, ճաշ գործել, մարտ դնել և այլն:**

Ինչ վերաբերում է բայական հարադրությունների բաղադրիչների շարադասությանը, ապա պետք է ասել, որ բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև Խորենացին հաճախ գործածում է և նախադաս բայերով հարադրություններ, ինչպես՝ **առնել աշխարհագիր, առնել արժանի, առնել բաշխումն, առնել ընդունելութիւն, առնել հարցումն, առնել քննութիւն, առնուլ սկիզբն, դնել ունկն, կապել թագ, հարկանել սպասաւորութիւն, ունել պահ, ունել պատճառ, տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրէժ և այլն:**

Խորենացու երկում, ինչպես և ընդհանրապես գրաբարում բայական հարադրությունները ներկայացված են կառուցվածքային տարբեր կաղապարներով: Մենք նկատի ունենք անվանական (ոչ բայական) մասի զանազան արտահայտությունները: Դրանք կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի և ունենալ նաև համապատասխան քերականական ձևավորում: Այդ ձևավորումը անունների դեպքում հանգում է տարբեր թեք հոլովների և նախդրավոր կազմությունների: Անշուշտ հարադրությունների ճնշող մեծամասնության մեջ անվանական հարադիրը հանդես է գալիս ուղիղ ձևով (ուղիղ ձև ենք համարում նաև եզակի հայցական հոլովածևը առանց գ նախդրի, քանի որ հոլովական իմաստը շատ դեպքերում մթագնած է): Թեք հոլովածևերը սովորաբար ձևավորված են լինում տարբեր նախդիրներով: Պետք է ասել, որ հոլովածևերի կիրառության մեջ նկատելի է

քանակական մեծ անհավասարություն: Բացարձակ գերակշռություն ունի հայցական հոլովը տարբեր նախդիրներով, իսկ մյուս հոլովաձևերը անհամեմատ սակավ են հանդես գալիս:

Բերենք Սովսես Խորենացու երկուն կիրառված բայական հարադրությունների կառուցվածքային կաղապարները՝ ըստ տարբեր հոլովաձևերի և նախդիրների:

1. Անվանական հարադրի տրական հոլովաձև

ա) առանց նախդրի՝ սրոյ մատնել

բ) ընդ նախդրով՝ առնել ընդ անձին

գ) ի(յ) նախդրով՝ (որոշ դեպքերում այս կառուցվածքը ձեռք է բերում ներգոյական հոլովի արժեք)՝ յանձին ունել, յաւարի առնուլ, յինքեան կալ, ի բանտի դնել, ի գինուջ զեղխել, ի դիմի հարկանել, ի թագստեան լինել, ի խիթի լինել, ի կասկածի լինել, ի հիացման լինել, ի մտի դնել, ի պահեստի լինել. բայական հարադրի նախադաս դիրքով՝ դնել ի բանտի, դնել ի մտի, կալ ի հանդարտութեան, ունել ի մտի:

2. Անվանական հարադրի հայցական հոլովաձև

ա) առանց նախդրի՝ հոգնակի թվով՝ արշաւանս առնել, աւուրս առնել, թիկունս առնել, թիկունս դարձուցանել, խնդիրս առնել, խօսս առնել, ձեռս տալ, միտս ունել, պատճառս տալ, պաղատանս մատուցանել, պատրանս մատուցանել, սատարս տալ, փախստեայս արկանել, բայական հարադրի նախադաս դիրքով՝ առնել բարիս, առնել հարսանիս, գործել չարիս, հարկանել փողս.

բ) առ նախդրով՝ եզակի թվով՝ առ ձեռն ունել, առ ոչինչ համարել

առ նախդրով՝ հոգնակի թվով՝ առ սուտս ունել

գ) գ նախդրով՝ եզակի թվով՝ զբողոք բառնալ, զհոգին աւանդել, զմուտն առնել, զփորձ առնուլ. բայական հարադրի նախադաս դիրքով՝ ամբառնալ զձեռն, առնել զհաշտութիւն, աւանդել զհոգին, խնդրել զվրէժ, խնդրել զքէն, մատուցանել զահն, պահել զակն, փչել զոգի.

զ նախդրով՝ հոգնակի թվով՝ վճարել զկեանս, վճարել զկենցաղս:

դ) ընդ նախդրով՝ ընդ առաջ գնալ, ընդ առաջ ելանել, ընդ առաջ լինել, ընդ կրունկն դառնալ, ընդ մէջ անկանել, ընդ մէջ անցանել, ընդ ցից հանել:

ե) ի (յ) նախդրով՝ եզակի թվով՝ ի բուռն ածել (առնուլ, արկանել), ի գերութիւն ըմբռնել (վարել), ի գործ արկանել, ի խաչ ելանել, ի կատար հասանել, ի կատարումն աւարտել, ի կարգ ընկենուլ, ի հաշտութիւն ածել, ի հասակ հասանել, ի հաւանութիւն գալ, ի ձեռն առնուլ (գալ, մատնել, տալ), ի ճանապարհ ելանել, ի միտ առնուլ, ի մոռացումն գալ, ի յանգ ելանել, ի շեշտումն անկանել, ի չափ հասանել, ի չու արկանել, ի պատրաստութիւն մատնել, ի սատարութիւն ունել, ի սուտ հանել, ի վերն հասանել, ի տապակի կացուցանել, ի փախուստ դառնալ (դարձուցանել, յորդորել, շրջել), յաղերս անկանել, յանկ ելանել, յանձն առնել (առնուլ), ապուշ դառնալ, յաւեր դարձուցանել, յոտն կալ, յուղարկ երթալ, յուղղութիւն ածել: Բայական անդամի նախադաս դիրքով ածել ի կատարումն, առնուլ յանձն, գալ յուղղութիւն, ելանել ի խնդիր, թափել յինքն, վարել ի գերութիւն:

Ի (յ) նախդրով՝ հոգնակի թվով՝ ի զարմանս ածել, ի թիկունս ընկենուլ (հասանել), ի լսելիս հասանել, ի կալանս ըմբռնել, ի հակառակս մտանել, ի կամս թողուլ, ի կասկածանս անկանել, ի ձեռս անկանել (տալ), ի միտս գալ (հասանել, ունել), ի չքմեղս լինել, յակճիռս կալ, յարբունս հասանել, յարտասուս արկանել, յիրեարս գալ: Բայական հարադրի նախադաս դիրքով՝ արկանել (տալ) ի ձեռս:

3. Անվանական հարադրի բացառական հոլովածև

Ի նախդրով՝ եզակի թվով՝ ի քնոյն լինել. բայական հարադրի նախադաս դիրքով՝ փոխել յաշխարհես, վճարել (լուծանել) ի կենցաղոյս,

ի նախդրով՝ հոգնակի թվով՝ լուծանել ի կենաց:

4. Անվանական հարադրի գործիական հոլովածև

ա) առանց նախդրի՝ խեթիւ հայել. բայական անդամի նախադաս դիրքով՝ ածել սուսերաւ, անցանել բանիւ, անցանել խրատու

ընդ նախդրով՝ ընդ ակամբ հայել, ընդ հարկաւ առնել (արկանել), բայական անդամի նախադաս դիրքով՝ հարկանել ընդ հարկաւ, մտանել ընդ հարկաւ:

գ նախդրով՝ զմտաւ ածել (նաև՝ ածել զմտաւ):

Բայական հարադրությունների մեջ ոչ բայական բաղադրիչներ կարող են լինել ոչ միայն անվանական խոսքի մասերը (գոյական, ածական, նաև դերանուն), այլև մակբայները:

Խորենացու երկուն վկայված են մակբայական հարադրով բազմաթիվ օրինակներ, ինչպես՝ առաջի դնել (արկանել), արտաքս ընկենուլ (սահմանել), զհետ երթալ (ընթանալ, լինել, կրթել, մտանել, յղել, ընդդեմ դիպել (երթալ կալ), մօտ հասանել, յանդիման բերել (կացուցանել). բայական հարադրի նախադաս դիրքով՝ արկանել առաջի, գալ զհետ, ելանել արտաքս, կալ ընդդեմ:

Սակայն ավելի շատ են այն կազմությունները, որտեղ մակբայական հարադիրը ձևավորված է ի(յ) նախդրով և տարածական իմաստ ունեցող բառով: Դրանք են՝

ի բաց ածել (բառնալ, գալ, գնալ, դառնալ, դարձուցանել, դնել, ընկենուլ, թողուլ, կալ, կտրել, հատել, մերկանալ, պուղել, վարել, տալ, քեցել). բայական հարադիր նախադաս դիրքով՝ առնուլ (թողուլ, կոչել) ի բաց

ի դէպ ելանել.

ի մէջ անցանել (արկանել, բերել), նաև՝ գալ ի մէջ.

ի մօտ հասանել.

ի ներքս ածել (անկանել, ընթանալ, մտանել).

ի վայր բերել (իջուցանել, կործանել). ի վերայ բերել (դնել, հասանել), նաև բայական հարադրի նախադաս դիրքով՝ գալ (դիմել, ելանել, խաղալ, հասանել, յառնել) ի վերայ:

յառաջ անցնել (մատուցանել, վարել):

Խորենացու երկուն կիրառված են նաև եռանդամ (մեկ դեպքում քառանդամ)) բայական հարադրություններ, որոնք փաստորեն դարձվածի արժեք ունեն: Այս հարադրություններում ոչ բայական անդամները միմյանց նկատմամբ գտնվում են հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական հարաբերության մեջ, ինչպես՝ առնել թիկունս օգնականութեան, խոյզ խնդրոյ առնել, հեղումն արեան առնել, մտաց լծակալ կշռել, յարբունս հասակի հասանել, չափ դնել բանի. իսկ բայական անդամի հետ արտահայտում են զանազան խնդրային և պարագայական հարաբերություններ՝ մեծ

մասամբ նախդրավոր կառույցներով ձևավորված. բերենք վկայված օրինակները՝ այդ զարամբ ելանել, արկանել զանձս ի ջանս, զոգի ի բաց դնել, կործան յերկիր զարկուցանել, ուշ ի կուրծս անկանել, պատճառս ի վերայ դնել (յուզել), պէտ յանձին ունել, ցիր դիաթաւալ կացուցանել, փոյթ յանձին ունել, փոյթ ընդ փոյթ լինել: Քառանդամ բայական հարադրությունն է՝ **խոյզ խնդրոյ առաջի արկանել:**

Անվանական, ավելի ճիշտ ոչ բայական հարադրությունները գրեթե կիսով չափ պակաս են բայականներից:

Բաղադրյալ բառերի այս տեսակը գրաբարում ընդհանրապես շատ տարածված չէ, այդ մասին է վկայում նաև Խորենացու բառապաշարի քննությունը: Այնուամենայնիվ, թեև ոչ մեծ քանակությամբ, մեր ուսումնասիրած սկզբնաղբյուրներում հանդիպում են և՛ անունների (դերանունների), և՛ այլ խոսքի մասերի հարադրությամբ կազմված միավորներ՝ զուգորդելիության տարբեր դրսևորումներով:

Շաղկապով բաղադրված անվանական հարադրություններից «Հայոց պատմության» մեջ վկայված են հետևյալ կազմությունները՝ **ել և մուտ (ելք և մուտք)**՝ զոյականներով, **ցան և ցիր**՝ ածականներով, **նախ և առաջին**՝ թվականով, **աստի և անտի**՝ մակբայներով, կամ շաղկապով և մակբայներով՝ **կամայ կամ ակամայ:**

Հարադրավոր կազմությամբ մակբայներ կազմվել են նաև նախդիրների միջոցով: Խորենացու երկում հանդիպում ենք միայն ի նախդրով մի քանի բաղադրությունների՝ **գեր ի վերոյ, վերուստ ի վայր (ի վերուստ ի վայր), փոքր ի շատ:** Նախդիրների օգնությամբ կազմված բաղադրությունները հիմնականում կրկնավորներն են, որոնց մասին կխոսենք ստորև:

Մովսես Խորենացու կողմից գործածված ոչ բայական հարադրությունների մեծագույն մասը կազմում են վերլուծական կազմություն ունեցող դերանուններն ու դերանվանական մակբայները: Դերանուններից այս տիպի բաղադրությունների մեջ ամենից ավելի գործածական են անորոշ, հարցահարաբերական և ժխտական, ավելի սակավ՝ որոշյալ և ցուցական դերանունները: Բերենք վկայված դերանունները՝ խմբավորված ըստ առաջին բաղադրիչի՝

ամենայն ինչ, ամենայն ոք

այլ իմն, այլ ինչ, այլ ոմն, այլ ոք

այս ինչ, այս ինքն

իւրաքանչիւր ոք,

մի ոմն, մի ոք

նոյն ինքն

ո ոք

ոչ մի, ոչ ոք

ով ոք

որ ինչ

Ժխտական ոչ բաղադրիչով կան նաև եռանդամ կազմութիւններ՝ **ոչ այլ ինչ, ոչ այլ ոք, ոչ մի ոք**: Հետաքրքրական է նշել, որ հաճախականութեան բառարանի տվյալներով նշված դերանուններից ամենամեծ ցուցիչն ունի **որ ինչ** անորոշը՝ 85, իսկ երկրորդ տեղում է **ոչ ոք** ժխտականը՝ 28: Մնացած դերանուններն ունեն 1-ից մինչև 10-ը հաճախականություն:

Դերանունները մասնակցում են նաև բաղադրյալ մակբայների կազմությանը: Մյուս բաղադրիչը կարող է լինել մակբայ, ածական կամ դերանվանական մակբայ, ինչպես՝ **դոյզն ինչ, նոյն ժամայն, նոյն հետայն, սակաւ ինչ, փոքր ինչ, փոքր մի, ոչ ժխտական մասնիկով՝ ոչ ամենևին, ոչ այնչափ, նաև եռաբաղադրիչ՝ ոչ այնչափ ինչ, ոչ աւելի ինչ, ի (յ) նախդրով և գոյականով՝ յոչ կամաց**: Ոչ ժխտական մասնիկով մակբայներ են կազմված նաև մի շարք ածականների և մակբայների զուգորդությամբ՝ **ոչ առաւել, ոչ արդեօք, ոչ աւելի, ոչ երբէք, ոչ ուստեք, ոչ ուրեք**:

Վերլուծական կառուցվածք ունեցող մակբայները կարող են իրենցից ներկայացնել նաև նախդիրների կապակցությունների տարբեր հոլովների հետ: Այսինքն՝ այս մակբայներն առաջացել են գոյականների տարբեր քերականական ձևերից: Պետք է նշել նաև, որ նախդիրները կարող են հանդես գալ ոչ միայն անվանական խոսքի մասերի տարբեր հոլովաձևերի հետ, այլ նաև մակբայների հետ, որոնք, բնականաբար, հոլովական ձևավորում չեն կարող ունենալ: Մովսես Խորենացու երկում վկայված և հաճախականութեան բառարանում որպես առանձին գլխաբառ ներկայացված են նշված

տիպի մակբայներ **առ, ընդ, ըստ, ի (յ)** նախդիրներով, որոնց զուգորդությունները տարբեր հոլովածների հետ ներկայացնում ենք ստորև:

Առ նախդիրը հայցական հոլովածի հետ՝ **առ հասարակ, առ ձեռն**. մակբայների հետ՝ **առ ընթեր, առ ժամայն, առ յապայ,**

ընդ նախդիրը հայցական հոլովածի և մակբայների հետ՝ **ընդ առաջ, ընդ բնան, ընդ խաբս, ընդ հուսայ, ընդ մէջ, ընդ վայր**

ըստ նախդիրը տրական հոլովածի հետ՝ **ըստ այնմ, ըստ այսմ, ըստ պատեհի**.

ի նախդիրը տրական հոլովածի հետ՝ **ի միջի, ի միջոցի**.

ի նախդիրը հայցական հոլովածի հետ, եզակի թվով՝ **ի բաց, ի դէպ, ի ծածուկ, ի համար, ի ձեռն, ի ճահ, ի մէջ, ի միջոց, ի սպառ, ի սպաս, ի տեղի, ի վայր, ի վեր, մակբայների հետ՝ ի հետի, ի միասին, ի ներքս, ի ներքսագոյն, ի վերայ**.

ի նախդիրը հայցական հոլովածի հետ, հոգնակի թվով՝ **ի գաղտնիս, ի դուրս, ի թռիչս, ի պատճառս, ի պէտս**.

ի նախդիրը բացառական հոլովածի հետ, եզակի թվով՝ **ի լրոյն, ի հարկէ, ի միջոյ, ի մօտոյ, ի ներքոյ, ի սկզբանէ, ի վերոյ**.

ի նախդիրը բացառական հոլովածի հետ, հոգնակի թվով՝ **ի կամաց, ի ձեռաց, մակբայների հետ՝ ի ներքուստ, ի վաղնջուց, ի վերուստ, ի տարապարտուց**.

Գործածված է և երեք նախդիր պարունակող **զառ ի վայր** մակբայը:

Մակբայների կազմության արդյունավետ եղանակ է և կրկնումը, որը մի շարք օրինակներով վկայված է Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» մէջ, ընդ որում հանդիպում են ինչպէս ազատ բաղադրիչներով, այնպէս էլ շաղկապներով և նախդիրներով միավորված բաղադրիչներով կրկնավորներ: Խորենացու երկում հանդիպում ենք նաև տարբեր խոսքի մասերի պատկանող և տարբեր հոլովածն ունեցող բառերի կրկնությամբ կազմված մակբայներ: Այսպէս, **ազատ** բաղադրիչների կրկնությամբ՝

ընտիր ընտիր, փոքր փոքր (ածականներ)

մի մի, երեք երեք (թվականներ)

այգուն այգուն, ուրեք ուրեք, ստէպ ստէպ (մակբայներ)

ամի ամի, տեղեաց տեղեաց (գոյականների թեք հոլովածներ)

ուներք ուներք (դերանվան թեք հոլովածներ)

ուր ուրեմն (հարադիրների տարբեր ձևավորմամբ)

Շաղկապներով միավորված բաղադրիչների կրկնությամբ վկայված են միայն **իսկ** և **իսկ, քան** նախադրությամբ՝ **առաւել քան զառաւել, եւս քան զեւս** օրինակները:

Ավելի շատ օրինակներ են վկայված նախդիրներով միավորված բաղադրիչների կրկնությամբ:

առ նախդրով՝ **ճակատ առ ճակատ**

ընդ նախդրով՝ **հուպ ընդ հուպ, նոյն ընդ նոյն, փոյթ ընդ փոյթ**, բաղադրիչների տարբեր հոլովածներով՝ **այլ ընդ այլոյ**.

ըստ նախդրով (բաղադրիչների տարբեր հոլովածներով)՝ **օր ըստ օրէ**.

ի նախդրով՝ **խառն ի խուռն**, բաղադրիչների տարբեր հոլովածներով՝ **բացէ ի բաց, կարծ ի կարծոյ, հանգոյց ի հանգուցէ, տեղ ի տեղուջէ**:

Որոշ դեպքերում նախդիրը դրվում է կրկնվող բաղադրիչներից առաջ՝ **առ փոքր փոքր, ընդ ժամանակս ժամանակս**:

Կրկնավորներին են մոտենում իմաստային մերձավորություն կամ հակադարձ իմաստ ունեցող բաղադրիչների հարադրությունները՝ **այսր անդր, բոլորով ամենևինք, պէս գունակ**: Վերլուծական կազմություն ունեն նաև մի շարք մակբայներ, որոնք բաղադրվել են **ևս** շաղկապով, **քան, յետ** (հետէ) նախադրություններով. **ինչպես՝ առաւել ևս, աւելի ևս, այլ ևս, դեռ ևս, և ևս, ոչ ևս, չև ևս, աւելի քան, յառաջ քան, նախ քան, յետ որոյ, յայսմ հետէ, յորմէ հետէ**:

Նմանատիպ կառուցվածք կարելի է տեսնել և որոշ եղանակականների մեջ, որոնք բաղադրված են զանազան սպասարկու խոսքի մասերից կամ քարացած քերականական ձևերից՝ **գրեա թէ, դոյնպէս և, եւ եթ, միայն զի, միայն թէ, մինչև անգամ, ոչ միայն**:

Խորենացու բառապաշարում առկա են նաև վերլուծական կազմության բազմաթիվ շաղկապներ, որոնցից մի քանիսը բնորոշվում են բավական բարձր հաճախականությամբ: Եվ այդ հասկանալի է, քանի որ շաղկապները ինքնին

պատկանում են լեզվի ամենահաճախական սպասարկու խոսքի մասերի թվին: Ստորև բերում ենք խորենացու երկուսն վկայված բաղադրյալ (հարադրավոր) կազմության շաղկապները՝ նշելով նրանց հաճախականության ցուցիչը:

այլ և	51
ապա և	9
ապա թե	2
եթե ոչ	7
թե և	9
թեպես և	37
իբր զի	1
իբր թե	15
կամ թե	11
մանաւանդ զի	8
մանաւանդ թե	5
մինչ դեռ	7
մինչ զի	2
որպես զի	20
որպես թե	17
ուստի և	10
վասն զի	20
քան թե	11

Սակավ գործածությամբ վկայված են նաև երեք հարադիրներից կազմված վերլուծական շաղկապներ. **ապա թե ոչ // ապա եթե ոչ, այս ինքն թե // այս ինքն եթե:**

Անվանական վերլուծական կազմությունների շարքում պետք է առանձնացնել նաև բաղադրյալ թվականները, որոնք բավական հաճախ գործածվել են «Հայոց պատմության» մեջ:

Հանդիպում են հիմնականում քանակական թվականներ, իսկ դասականներից անհամեմատ պակաս օրինակներ: Խորենացու երկուն վկայված են բաղադրյալ թվականների հետևյալ տեսակները

ա) 10-ից մինչև 20-ը ընկած թվականներից միայն՝ ինն և տասն, իսկ դասականներից միայն՝ եօթն և տասներորդ:

բ) 21-ից մինչև 99-ի սահմաններում տասնավորի և միավորի բաղադրությամբ վկայված են ավելի շատ թվով օրինակներ՝ բաղիյուսական կազմությունների ձևով. **քսան և մի, քսան և երկու, քսան և երեք, քսան և հինգ, քսան և վեց, երեսուն և մի, երեսուն և երեք, երեսուն և չորք, քառասուն և մի, քառասուն և երկու, քառասուն և վեց, քառասուն և ութ, յիսուն և մի, յիսուն և երեք, յիսուն և հինգ, յիսուն և վեց, եօթանասուն և ինն, ութսուն և ութ**: Այս խմբի թվականներից դասականներն ունեն կառուցվածքային երկու տարբերակ՝ առաջինի դեպքում դասականների **-(ե) րորդ** ածանցը ստանում են միայն վերջին բաղադրիչները (դրանք են՝ **քսան և չորրորդ, քսան և իններորդ, քառասուն և վեցերորդ, քառասուն և եօթներորդ, քառասուն և իններորդ, յիսուն և երրորդ, յիսուն և չորրորդ**), երկրորդ տարբերակի դեպքում ածանցը ստանում են և՛ առաջին, և՛ երկրորդ բաղադրիչները (**քսաներորդ առաջնորդ, քսաներորդ և երկրորդ, քսաներորդ և չորրորդ**):

գ) **Հարիւր** բառի և տասնյակների բաղադրությամբ վկայված են հետևյալ օրինակները՝ **հարիւր և քսան, հարիւր և երեսուն, հարիւր և յիսուն, հարիւր և եօթանասուն, հարիւր և իննսուն**

դ) 200-ից բարձր թվականներից հանդիպում են՝ **երկերիւր և հինգ, երկերիւր և երեսուն**, որտեղ առաջին բաղադրիչը կցական բարդություն է՝ **հարիւր** հիմքի հատումով: Այս խմբում եռաբաղադրիչ կազմություն ունի **երեք հարիւր և ութետասն** թվականը, որտեղ վերջին բաղադրիչը կցական բարդություն է:

ե) Միավորների բաղադրությունը **հարիւր, հազար և բիւր** բառերի հետ հանդիպում է հետևյալ օրինակներում՝ **հինգ հարիւր, եւթն հարիւր, երկու հազար, վեց հազար, երկու բիւր, չորք բիւրք**: Երկու դեպքում միավորները գործածված են վերջադաս՝ **բիւր մի, բիւր հինգ**: Սրանք բոլորը հարադրություններ են: **Հնգետասան հազար և երկուտասան բիւր** կազմությունների մեջ առաջին բաղադրիչները կցական բարդություններ են:

զ) Եռաբաղադրիչ կազմություններ են **հարիւր երեսուն և երեք, հարիւր երեսուն և չորք, հարիւր երեսուն և հինգ, հարիւր վաթսուն և երկու, հարիւր վաթսուն և հինգ, հարիւր ութսուն և ութ՝** հարյուրավոր, տասնավոր և միավոր հաջորդականությամբ: Եռաբաղադրիչ կազմությունների մեջ վկայված է և **երեսուն և վեց հազար** օրինակը՝ տասնավոր + միավոր + հազարավոր կաղապարով:

է) Քառաբաղադրիչ կազմություն ունի միայն **չորք բիւրք և երկու հազար** օրինակը:

ը) Կոտորակային թվականներից կիրառված է միայն **երկու և կես** բաղադրությունը: Խորենացու «Չայոց պատմության» մեջ գործածված բաղադրյալ թվականների ընդհանուր քանակն է 58: Պետք է նաև նշել, որ սրանց հաճախականությունը նույնպես բարձր չէ, հիմնականում՝ 1 կամ 2: Երեք անգամ գործածված են միայն **եօթն և տասներորդ, քսան և մի, քսան և երկու, հարիւր վաթսուն և հինգ** թվականները:

Ինչպես արդեն նշել ենք, թե՛ Սովսես Խորենացու «Չայոց պատմության» համաբարբառում, թե՛ հաճախականության բառարանի մեջ առանձնացված և ինքնուրույն գլխաբառերով ներկայացված են մեր հեղինակի օգտագործած կայուն կապակցությունները, որոնք առանձին բառային միավորների արժեք ունեն: Դրանք բաժանել ենք երկու խմբի: Ավելի ստվար խումբ են կազմում անվանողական արժեք ունեցող գոյականական կապակցությունները, որոնց բաղադրիչների միջև գոյություն ունեն որոշիչ որոշյալի և հատկացուցիչ հատկացյալի շարահյուսական հարաբերություններ: Բաղադրիչների խոսքիմասային արժեքից ելնելով՝ կարելի է դրանք դասակարգել առանձին կաղապարներով, ընդ որում յուրաքանչյուր կաղապար ըստ գերադաս անդամի նախադաս կամ հետադաս դիրքի կարող է ունենալ երկու իրացում:

Ստորև ներկայացնում ենք հաճախականության բառարանում առանձնացված կայուն կապակցությունները ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների, նրանց խոսքիմասային պատկանելության և գերադաս անդամի դիրքի (բաղադրիչների եզակի կամ հոգնակի թվերը չենք առանձնացնում):

1. Որոշիչ որոշյալ հարաբերություն

Ա + Գ կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝

անդուռն բերան

աստուածային բան

արքունական դուռն

աւետարանական բան

հայ բան

հայ լեզու

հայերէն խօսք

հայկական լեզու

հայկական խօսք

հասարակ օր

փրկական փայտ

քրիստոնէութեան ուսումն

Գ + Ա կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝

բան աստուածային

դիւան արքունի

դուռն արքունի

լեզու ասորի

լեզու հայկական

խօսք հայկական

մօր մեծ

օր հասարակ

Գ + Դ կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝

օրինակ զայս

օրինակ իմն

2. Հատկացուցիչ հատկացյալի հարաբերություն

Գ ուղղ. հ. + Գ սեռ. հ. կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝

արևմուտք հարաւոյ

արևմուտք հիւսիսոյ
արքայ արքայից
բերան սրոյ
դեղ մահու
դիպուած բախտի
կապ սիրոյ
կատարունն կենաց
կարգ բանի
մուտք արեգական
մուտք արևու
չափ հասակի

Գ սեռ. հ. + Գ ուղղ. հ. կաղապարով, գերադաս անդամը վերջադաս՝

առասպելաց առասպել
արքայից արքայ
արեան ծով
արեան կցորդ
թագուհեաց թագուհի
թուելեաց երգ
Չայոց պատմութիւն
հոգւոյն աչք
նիկոմիդացւոց քաղաք

Գ + Թ սեռ. հ. կաղապարով, գերադաս անդամը նախադաս՝

թուղթ հնգից:

Երկրորդ, ավելի փոքր խմբի մեջ մտնող կայուն կապակցութիւնները անվանողական արժեք չունեն և նախադասութեան մեջ հանդես են գալիս անբողջութեամբ վերցված՝ պարագայական կամ խնդրային պաշտոններով: Այդ կապակցութիւններն են՝

ամենայն սրտիւ

առ այնու ժամանակաւ

ի բաց ընկեցիկ

ի խորոց սրտի

ի խորութիւն սրտի

ի ծածուկս սրտին

ի միում աւուրց

ի քթել ական

յառաջ կոյս

յետուստ կողմանէ

Որոշ վերապահութեամբ կայուն կապակցութիւններ ձեռք կարելի է դասել վասն, սակս, աղագաւ նախադրութիւններ զուգորդումները որոշ դերանուններ հետ՝ վասն այնր, վասն այնորիկ, վասն այսր, վասն այսորիկ, վասն որոյ, յայն սակս, էր աղագաւ:

Պետք է նաև նշել, որ կայուն բառակապակցութիւնները մենք այստեղ քննում ենք, քանի որ դրանք ներկայացված են հաճախականութեան բառարանում որպէս բառային մեկ միավորի արժեք ունեցող բաղադրութիւններ: Սակայն իրականում դրանք չեն վերաբերում բուն բառակազմութեանը, այլ միջանկյալ դիրք են գրավում բառակազմական և շարահյուսական իրողութիւնների միջև:

Խորենացու երկում գործածված բառերի կառուցվածքային առանձնահատկութիւնների քննութիւնը ավարտենք՝ բերելով թվային տվյալներ, որոնք ցույց են տալիս բառակազմական հիմնական տեսակների գործածման համամասնութիւնը, այլ խոսքով՝ դրանցից յուրաքանչյուրի գործառական բեռնվածութիւնը:

Ստորև (տե՛ս աղյուսակ 1) ներկայացնում ենք «Հայոց պատմութեան» բառապաշարի քանակական բնութագրերը բացարձակ թվերով և տոկոսային հարաբերութեամբ:

Աղյուսակ 1

		Համադրական կազմութիւններ	Վերլուծական կազմութիւններ	
--	--	---------------------------------	----------------------------------	--

Տեսակը Քանակը	Պարզ բառեր	Բարդ ու- թյուններ	Ածանցավոր բառեր		Բայ եր	Բայական հարադր ու- թյուններ	Ոչ բայական հարադր ու- թյուններ	Կայուն կապակց ու- թյուններ	Ընդամ ենը
			Նախ ած.	Վերջ ած.					
Թիվը	1169	590	175	1613	102 1	480	314	56	5418
%-ը	21,6	10,9	3,2	29,8	18,8	8,9	5,8	1,0	100

Ինչպես տեսնում ենք, աղյուսակում առանձնացված են բայերը որպես առանձին խումբ: Բայերի առանձնացումը այլ խոսքի մասերից պատճառաբանված է երկու տեսակետից: Նախ, նրանց բառակազմական առանձնահատկություններով: Համադրական կազմությունների մեջ նրանք առանձնանում են որպես քերականորեն ձևավորված միավորներ, որոնց վերջավորությունը ունի և՛ ձևաբանական, և՛ բառակազմական արժեք, ինչպես նշում են հայերենի բառակազմության հետազոտողները (Մ. Աբեղյան, Է. Աղայան և ուրիշներ): Իսկ վերլուծական կազմություններն ինքնին բաժանվում են բայական և անվանական, ավելի լայն առումով՝ ոչ բայական հարադրությունների: Մյուս կողմից, բայերի կիրառման քանակը պարզելը հետաքրքրական է նաև տվյալ երկի ոճական առանձնահատկությունները գնահատելու տեսակետից: Պ. Պողոսյանը «խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ» աշխատության մեջ նշում է, որ «անհատ գրողների լեզվական գործածության սուբյեկտիվ ցուցանիշներով էլ կարելի է դատել նրանց անհատական ոճերի մասին»²⁶: Մասնավորապես նա բերում է վիճակագրական տվյալներ հեղինակների կողմից բայերի գործածության հաճախականության վերաբերյալ և հանգում այն եզրակացության, որ «շնորհիվ այն բանի, որ բայն արտահայտում է գործողության գաղափար, առարկաների հարաբերություններ, այն խոսքին տալիս է շարժունություն, կյանք ու կենդանություն»²⁷: Այս տեսակետից կարող ենք ասել, որ Խորենացու երկում գործածված բայերը ամբողջ բառապաշարի մեջ տոկոսային հարաբերությամբ զգալի թիվ են կազմում: 18,8 % համադրական կազմությունների և 8,9

% բայական հարադրությունների մեջ (ընդամենը 27,7 %): Սա զգալի թիվ է, եթե համեմատենք Պ. Պողոսյանի բերած ընդհանուր ցուցանիշների հետ (գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ 9%, իսկ գեղարվեստական խոսքում 18-19%): Եթե նկատի ունենանք նաև մի շարք բայերի գործածության հատկապես մեծ հաճախականությունը (եմ - 413, **ասել** - 342, ունել -193, առնուլ - 183, առնել 167, կոչել - 138, **հասանել** - 125, **թագաւորել** - 117, **գտանել** - 110, **դառնալ** - 109 և այլն, ապա պարզ կդառնա, որ Խորենացու լեզվին հատուկ է բայերի առատությունը, որը մի կողմից պայմանավորված է նրա երկի ժանրային առանձնահատկությամբ, պատմական իրադարձությունների, դեպքերի, անցքերի նկարագրությամբ, իսկ մյուս կողմից Խորենացու լեզվի անհատական գծերով, հատկապես երկխոսությունների առատությամբ, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի մեջբերումով և այլն (հմմտ. **ասել** բայի հաճախականությունը): Խորենացու գործում բայերի գերակշիռ հաճախականությունը աչքի է ընկնում նաև այն դեպքում, երբ այն համեմատում ենք ընդհանրապես 5-րդ դարում կիրառված բաղադրյալ բառերի մեջ բայերի հարաբերական տոկոսի հետ: Լ. Յովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ նշվում են համադրական բաղադրյալ կազմություն ունեցող 3078 բայ, որ կազմում է ամբողջ ընտրանքի ընդամենը 13,3 %-ը (Խորենացունը համապատասխանաբար՝18,8%): Այս կապակցությամբ հետաքրքրական է նաև պարզել, թե որքանով է Խորենացու բառապաշարը նույնանուն ընդհանրապես 5-րդ դարի գրաբարի ընդհանուր պատկերի հետ բառակազմական տեսակետից: Այդ նպատակով մեր աղյուսակի տվյալները համեմատել ենք վերը նշված աշխատության եզրակացությունների բաժնում տրված ամփոփիչ աղյուսակի տվյալների հետ: Մեր աղյուսակից վերցնում ենք միայն համադրական կառուցվածքի վերաբերյալ տվյալները՝ դուրս թողնելով պարզ բառերը և վերլուծական կազմությունները, քանի որ Լ. Յովսեփյանի աշխատանքը նվիրված է միայն համադրական կառուցվածքներին, բացի այդ, մենք չենք առանձնացրել խառն տիպի կաղապարները: Նշված ճշգրտումներով համեմատական աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Աղբյուրը	Քանակը	Բառակազմական եղանակը					Ընդամենը
		Բարդա- ցում	Նախածան- ցում	Վերջածան- ցում	Բայակազ- մություն	Խառն տիպ	
V դար	Թիվը	7346	1547	10761	3078	382	22732
	% - ը	31,8	6,7	46,5	13,3	1,7	100
Մովսես Խորենացի	Թիվը	590	175	1613	1021	-	3399
	% - ը	17,4	5,1	47,5	30,0	-	100

Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ պահպանվում է ածանցավոր կազմությունների համամասնությունը մոտիկ տոկոսային հարաբերությամբ (նախածանցումը 6,7 և 5,1, վերջածանցումը 46,5 և 47,5): Խորենացու երկու բարդ բառերի ընդհանուր քանակը զգալիորեն պակաս է, ինչպես նշեցինք, ի հաշիվ բայերի առատ գործածության, քանի որ բայերի բառակազմական կաղապարները հիմնականում ածանցավոր են: Ջարմանալի փաստ է, որ Խորենացին գործածել է 5-րդ դարից վկայված (բոլոր վերապահումներով հանդերձ) բայերի ավելի քան 33%-ը (3078-ից 1021-ը): Սա բավական ցայտուն ոճական առանձնահատկություն է, որը կարելի է հաշվի առնել՝ Խորենացուն վերագրվող երկերի հեղինակությունը պարզելու ժամանակ համապատասխան վիճակագրական քննություն կատարելով և համեմատելով մեր ստացած տվյալների հետ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՉԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
 ՉԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆ ՉՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԵՏ

Ուսումնասիրողները բազմիցս նշել են Խորենացու լեզվի հարստությունը, ոճի բազմազանությունը, բառապաշարի ճոխությունը, ճիշտ և տեղին բառագործածությունները, նորակերտ բառերի առատությունը: Ուշադրություն են դարձրել նաև այն բառերի վրա, որոնք հանդիպում են միայն Խորենացու երկում, կամ առաջին անգամ գործածվել են նրա կողմից: Այդ մասին հետաքրքրական դիտողություններ ունի Վ. Առաքելյանը արդեն հիշատակված «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» աշխատության մեջ²⁸: Նրա հաշվումներով մոտ 800 բառ հայ մատենագրության մեջ է մուծել Խորենացին:

Պարզելու համար Խորենացու բառապաշարի առնչությունները 5-րդ դարի հայ մատենագրության մյուս երկերի բառապաշարի հետ մենք կատարել ենք դրանց համեմատական քննությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու որոշ վիճակագրական տվյալներ տարբեր հեղինակների և Խորենացու գործածած բառամիավորների մասին: Այդ նպատակով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեր կազմած համաբարբառի բառամիավորները համատարած ընտրանքի սկզբունքով համեմատել ենք 5-րդ դարի հայ ինքնուրույն մատենագրության բոլոր երկերի՝ Կորյունի «Վարք Մաշտոցի», Եզնիկի «Եղծ աղանդոցի», Ագաթանգեղոսի «Հայոց պատմության», Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի, Փարպեցու «Հայոց պատմության» համաբարբառների բառամիավորների հետ: Թարգմանական երկերից ընտրել ենք Աստվածաշնչի համաբարբառը, ինչպես նաև հայ բանասիրության մեջ Խորենացու անվան հետ կապված երկու թարգմանական ստեղծագործություն՝ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ» և «Գիրք պիտոյից» աշխատությունները: Այս վերջին երկու երկերի համաբարբառ բառարանները դեռևս կազմված չեն, ուստի ստիպված ենք եղել համակարգչի միջոցով կազմել դրանց մեջ գործածված բառապաշարի բառաձևերի ցանկերը: Այդ աշխատանքում մեզ օգնել է տեխնիկական գիտությունների թեկնածու Ռ. Ուռուտյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Պարզելու համար, թե որքանով և ինչ սկզբունքներով է Խորենացու բառապաշարը արտացոլված Նոր Հայկազյան բառարանի մեջ, Խորենացու համաբարբառի բոլոր բառամիավորները համեմատել ենք ՆՀԲ-ի գլխաբառերի հետ:

Պետք է ասել, որ վիճակագրական սկզբունքների տեսակետից նշված սկզբնաղբյուրները հավասարաթեք չեն, քանի որ ունեն տարբեր ծավալ և ժանրային առանձնահատկություններ: Դրանց մեջ չորսը պատմագրական ստեղծագործություններ են (Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Փարպեցի), մեկը վարքագրական բնույթի է (Կորյուն), և մեկը՝ փիլիսոփայական-դավանաբանական (Եզնիկ): «Աղեքսանդրի պատմությունը» աշխարհիկ բնույթի առաջին գեղարվեստական թարգմանական երկն է հայ մատենագրության մեջ, իսկ Պիտոյից գիրքը ճարտասանության ուսումնական ձեռնարկ է: Աստվածաշունչը ամենածավալուն և բովանդակությամբ բազմաբնույթ երկ է՝ կրոնական, պատմական, գեղարվեստական ստեղծագործությունների հավաքական գրական հուշարձան:

Բնականաբար, սրանք միմյանցից խիստ տարբերվում են գործածված բառերի ընդհանուր քանակներով:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ սկզբնաղբյուրների բառացանկերի ստացման սկզբունքները նույնպես որոշ դեպքերում տարբեր են: Դրանց մեծ մասը, այսինքն՝ լեզվի ինստիտուտի համաբարբառի բաժնի կազմած բնագրային համաբարբառները հենվում են գլխաբառերի ընտրության և ներկայացման միասնական սկզբունքների վրա (որպես գլխաբառ վերցվում են ոչ միայն առանձին բառերը, այլև հարադրությունները, կայուն կապակցությունները, կրկնավոր շաղկապները, հատուկ նշումներով տարբերակվում են համանունները, գոյականաբար և ածականաբար գործածված դերբայները և այլն): Սկզբունքներով սրանց բավական մոտ է նաև ավելի վաղ ստեղծված՝ Աստվածաշնչի համաբարբառը: Սակայն թարգմանական երկու աղբյուրների՝ «Աղեքսանդրի պատմության» և «Պիտոյից գրքի»՝ համակարգիչով ստացված բառացանկերը մեզ այդպիսի տարբերակման հնարավորություն չեն տալիս: Մենք ստացել ենք միայն առանձին բառաձևեր, առանց վերը նշված տարբերակումների և վերլուծական բառամիավորների առանձնացման: Այնուամենայնիվ, մեր կատարած

համեմատությունները թույլ են տալիս բացահայտելու վիճակագրական տեսակետից հետաքրքրական տվյալներ:

Խորենացու օգտագործած բառային միավորների մեծագույն մասը արտացոլված է ՆՅԲ-ում: Ընդ որում, վերջինում առկա են և՛ այն միավորները, որոնք համընկնում են մյուս հեղինակների բառագործածությունների հետ, և՛ այնպիսի բառեր ու դարձվածքներ, որոնք հանդիպում են միայն Խորենացու երկում (իհարկե, մենք նկատի ունենք մեր վերցրած սկզբունադրյունների հետ կատարած համեմատությունը): Սրանք իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ այն բառամիավորները, որոնք ՆՅԲ-ում բերվում են նաև այլ (հիմնականում ավելի ուշ ժամանակաշրջանի) հեղինակներից քաղված վկայություններով, և այնպիսի բառեր, որոնց միակ վկայությունը վերցված է Խորենացուց: Սա անշուշտ միշտ չի նշանակում, որ նշված բառերը բացի Խորենացուց այլևս ոչ ոք չի գործածել, պարզապես հնարավոր է, որ ՆՅԲ-ի հեղինակները Խորենացու երկում հանդիպող օրինակները համարել են առավել բնորոշը կամ արժեքավորը: Կան նաև այնպիսի բառամիավորներ, որոնք ընդհանրապես դուրս են մնացել ՆՅԲ-ից կամ նշված են որոշ տարընթերցումներով: Առաջին հայացքից սրանք շատ մեծ թիվ են կազմում (մոտ 200 բառարանային միավոր), սակայն նրանց քննությունը պարզում է, որ ՆՅԲ-ից դուրս մնացած բառամիավորների ճնշվող մեծամասնությունը վերլուծական կազմություններ են (անվանական և բայական հարադրություններ, նախդրավոր կառույցներ և այլ կարգի կապակցություններ), որոնք ՆՅԲ-ի հեղինակները չեն մուծել բառարան թերևս խուսափելու համար նման տիպի գլխաբառերով բառարանի ծավալը չափից դուրս մեծացնելուց, կամ այդպիսի միավորները համարել են ազատ կապակցություններ: Այս տիպի բառամիավորների առատությունը փաստորեն բացատրվում է ՆՅԲ-ի և մեր կազմած համաբարբառի կազմության սկզբունքների տարբերությամբ: Համաբարբառ բառարաններն ավելի մանրամասն են և ձգտում են արտացոլել յուրաքանչյուր հեղինակի բառապաշարի մեջ հանդիպող բոլոր առանձնահատկությունները, այդ թվում կապակցությունները: Թվարկենք Խորենացու երկում հանդիպող վերլուծական կառույցների հիմնական տեսակները, որոնք արտացոլված չեն ՆՅԲ-ում:

1) Բայական հարադրություններ (հատկապես առնել բայով)՝ ածել ի կատարումն, ամբառնալ զծեռն, այր զարամբ ելանել, անիշխան առնել, անցանել բանիւ / զխրատու, աշխատութիւն կրել, առնել աշխարհագիր / ընդ անծին / ընդունելութիւն / թելադրութիւն / թիկունս օգնականութեան / կին / կիսակտուր և այլն, առնուլ պարապումն, արկանել ի ծեռն / զանծն ի ջանս, արշաւանս առնել, արտասահման լինել, արտաքս սահմանել, աւգնական առնել, աւելորդ լինել, աւուրս առնել, բարերարութիւն / բարի առնել, գալ զհետ / յուղղութիւն, գայթակղութիւն արկանել, գերի ածել, գործել ոճիրս, դադարումն առնուլ, դնել ի բանտի, ելանել արտաքս, զհետ յղել/ ունել, զմուտն առնել, զօր յարուցանել, ընդդէմ դիպել/ երթալ, ընդ կրունկն դառնալ, ընդ հարկաւ առնել / արկանել, ընդ մէջ անկանել, թափել յինքն, ժողով առնել, ի բաց գալ / կտրել / պուղել / քեցել, ի գերութիւն / ի կալանս ըմբռնել, ի գինուջ գեղխել, ի զարմանս ածել, ի թիկունս ընկենուլ, ի լսելիս հասանել, ի խիթի լինել, ի կամս թողուլ, ի կասկածանս անկանել, ի կատար հասանել, ի շեշտումն անկանել, իւր առնել, լինել զօրաւիգն / հետի / ունկնդիր / վերահասու և նման բազմաթիվ այլ կազմություններ, որոնք ՆՅԲ-ի հեղինակները ներկայացրել են առանծին - առանծին բաղադրիչներով, բայց ոչ որպէս միասնական կապակցություններ:

2) Անվանական հարադրություններ կամ դարձվածքի արժեք ունեցող կայուն կապակցություններ (բաղադրիչների միջև մեծ մասամբ որոշիչ որոշյալ, հատկացուցիչ հատկացյալ հարաբերությամբ)՝ ամենայն սրտիւ, անդուռն բերան, առասպելաց առասպել, արեան ծով, արեան կցորդ, արևմուտք հիւսիսոյ, աւրինակ իմն, բան աստուածային, դիպուած բախտի, թագուհեաց թագուհի, թուելեաց երգ (բերված է Աճառյանի «Արմատական բառարանում»), թուղթ հնգից, ի խորութեան սրտի, ի ծածուկս սրտին, լեզու ասորի, խօսք հայկական, կատարումն կենաց, կարգ բանի, հայերէն խօսք, հարաւ արևելք, մուտք արեգական:

3) Բաղադրյալ շաղկապներ, մակբայներ, եղանակավորող բառեր, միադիմի բայեր, նախադասության արժեք ունեցող կապակցություններ՝ այս ինքն եթէ, այսինքն է, անկարելի է, առ այնու ժամանակաւ, առաւել քան զառաւել, բոլորով ամենեւիմբ, դէպ

թուի, եթէ ... եթէ, ընդ խաբս, ընտրելի է, ըստ այնմ / այսմ / պատեհի, ի գաղտնիս, ի լրոյ, յոչ կամաց, կամաւ կամ ակամայ:

Խորենացու երկուն կան նաև համադրական կառուցվածքի բառամիավորներ (առանձին վերցրած բառեր), որոնք տեղ չեն գտել ՆՅԲ-ում: Սրանց մեջ կարելի է առանձնացնել բառերի մի փոքր խումբ, որոնք ընդհանուր բնույթի բառարաններում սովորաբար չեն նշվում: Դրանք ժողովուրդների, ազգերի, որևէ տեղի բնակիչների անվանումներ կամ դրանցից կազմված ածականներ են, ինչպիսիք՝ **արգիացի, կրետացի, ճիճրակացի, մեդացի, մոկացի, հիւրկանեան, մակեդոնական, թերևս նաև արիողական և մարսիկեան** («արիողական կախարդքն և մարսիկեան բժիշկքն»):

Որոշ բառեր հանդիպում են հնչյունական փոքր տարբերություններով՝ **անձեայ** (Խոր.) - **անձնեայ** (ՆՅԲ), **ելք և մուտ** (Խոր.) - **ել և մուտ** (ՆՅԲ), **որսանալ** (Խոր.) - **որսալ** (ՆՅԲ), **սիւզնոն** (Խոր.) - **սիզնոն** (ՆՅԲ): ՆՅԲ-ում արձանագրված չեն **-ի(ելի)** վերջավորությամբ մի քանի ապառնի դերբայներ, որոնք «Հայոց պատմության» մեջ ավելի շուտ ածականների արժեք են ստացել՝ արհամարհելի, բասրելի, երկրպագելի, պաշտելի, փառաւորելի, ինչպես նաև **-իկ** փոքրացուցիչ ածանցով **եղեգնիկ և կարմրիկ** բառերը, որոնք ժողովրդական բանահյուսությանը հատուկ ոճական երանգ ունեն:

Սակայն հայ բառարանագրության համար առաւել արժեքավոր կարող են լինել Խորենացու երկուն մեր հայտնաբերած ինքնուրույն անկախ գործածություն ունեցող մի շարք բառամիավորներ, որոնցից մի քանիսը, անկասկածաբար, Խորենացու ստեղծած հեղինակային նորաբանություններից են. ինչպես **արքայամանուկ** բառը, որով Խորենացին թարգմանում է պարսկական Շապուհ անձնանունը («Շապուհ, որ լսի Արքայամանուկ»):

Ստորև բերում ենք ՆՅԲ-ից դուրս մնացած այն բառամիավորները, որոնք պետք է նկատի ունենալ գրաբարի նոր բառարաններ կազմելիս:

գահարար - «Աբել սպասարար և գահարար»

գեղեցկադիմակ - «զկոյս մի գեղեցկադիմակ»

դատարկակաց - «վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք»

(Առձեռն բառարանում կա դատարկակեաց ձևով)

երկնադեզ - «երկնադեզի հասակ»

զիւգոստատ - «հրամայեաց երթալ ի Պարսս հանդերձ իւրովք զիւգոստատովք» (կա Յ. Աճառյանի «Արմատական բառարանում»՝ զինվորների ռոճիկը կշռող պաշտոնյա իմաստով),

իրականութիւն - «Ձրոյցք և իրականութիւնք»,

կարկաչահոսութիւն - (սրա փոխարեն ՆՅԲ-ում խոր. հղումով կա **կարկաչասահութիւն** բառը, գուցե խորենացու որևէ ձեռագրի տարընթերցումներից),

հեղուսուած - «ի հեղուսուածս արուեստին»,

միագլուխ - «միագլուխ սպարապետ էր և ամենայն Յայոց զօրավար» (ՆՅԲ-ում խոր. հղումով կա **միագլխապետ**, նույն նախադասության վկայակոչումով, թերևս դարձյալ «Յայոց պատմության» որևէ այլ ձեռագրից կամ հրատարակությունից),

յատկանձնակաց - «մենատունս և յատկանձնակաց խրճիթս»,

յիշատակումն - «յիշատակումն ... ազգի մերոյ Լուսաւորչին»,

ործաքարեայ - «վէնս ործաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ» (Առձեռն բառարանում կա առանց օրինակի),

պատերազմողական - «պատերազմողական հասակի»,

սաստկակառոյց - «ձմեռն սաստկակառոյց, մրրկալից»,

տափակաքիթ - «կոպտարանձն և տափակաքիթ»:

Մեր աշխաշխատանքն արդեն պատրաստ էր հրատարակության, երբ լույս տեսավ Լ. Յովհաննիսյանի «Գրաբարի բառարանը», որտեղ զետեղված են Նոր հայկազյան բառարանում չվկայված բառերը: Խորենացու « Յայոց պատմության» այն բառերը /թվով 15/, որոնք դուրս են մնացել ՆՅԲ-ից, գտնում ենք Լ. Յովհաննիսյանի բառարանում, բացի երեքից՝ դատարկակաց, իրականութիւն և սաստկակառոյց բառերից: Սրանցից դատարկակաց-ը տրվում է դատարկակեաց ձևով. որն առկա է առձեռն բառարանում, բնականաբար առանց վկայության:

Դատարկակեաց բառը տրվում է Ռ. Ղազարյանի և Յ. Ավետիսյանի «Նորահայտ բառեր գրաբարում» բառարանի մեջ /Ե. 2007թ./, իսկ վերը նշված երեք բառերը չկան:

Խորենացու բառապաշարի միավորների մեր կատարած համեմատական քննությունից պարզվում է, որ նրանց բավական ստվար մի խումբ զուգահեռ գործածություն չի ունեցել համեմատվող և ոչ մի սկզբնաղբյուրի մեջ և բերվում են միայն ՆՅԲ-ում: Դրանց թիվը հասնում է 1010-ի: Առաջին հայացքից այս թիվը շատ մեծ է թվում, սակայն եթե նկատի ունենանք, որ հենց միայն «Հայոց պատմության» մեջ 1 հաճախականություն ունեցող բառերի թիվն է 3540, ապա պարզ կդառնա, որ դրանց զուգահիստությունները այլ հեղինակների բառամիավորների հետ նույնպես հաճախական չեն կարող լինել:

Ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում վերը նշված 1010 բառերի մեջ այն միավորները, որոնք ՆՅԲ-ում բերված են միայն Խորենացուց քաղված բնագրային վկայություններով: Սա իհարկե չի նշանակում, որ այդ բառերը ստեղծել է Խորենացին, կամ դրանք չեն գործածվել այլ հեղինակների կողմից: Բայց եթե մենք դրանք դիտենք իբրև առավելապես Խորենացուն բնորոշ բառամիավորներ, ապա կարող ենք պարզել նրանց կառուցվածքային և իմաստային որոշ առանձնահատկություններ՝ բնորոշելու համար Խորենացու լեզուն և ոճը, ինչպես նաև դրանց մեջ որոնել Խորենացու կողմից ստեղծված անհատական բառակերտումներ:

Մեր համեմատությունների տվյալներով նշված բառային միավորների քանակն է 208: Դրանցից պարզ կառուցվածք ունեն ընդամենը 7-ը՝ **ագոն, ապշոպ, եկղեսիաստիկոս, լայքա, հիպատ(եան), հրեշ, տից**: Այս բառերից **ագոն, եկղեսիաստիկոս** և **հիպատ** փոխառյալ են հունարենից, **ապշոպ, լայքա**՝ իրանական փոխառություններ են, իսկ **հրեշ** և **տից**՝ անհայտ ծագման բառեր են: Զգալի թիվ են կազմում բայերը (26), որոնցից մի քանիսը վկայված են պատճառական ձևով՝ **բազմամարդացուցանել, կայծակնաճաճանչեցուցանել, ճայթեցուցանել, պատրաստեցուցանել, սաղապեցուցանել**: Մյուս բայերն են **ամուսնաւորել, դիրածել, ետեղագրել, ընդդիմակայել, ընթերցասիրել, թունել, կայկայել, կուսակցել, հապճեպել, շկապել, պռստել, սականջնել, վսեմանալ, փոխանակաբանել**: Սրանց կողքին պետք է հիշատակել նաև հարադրավոր բայերը, որոնց մեջ հանդիպում են ինչպես երկանդամ, այնպես էլ բազմանդամ կառույցներ՝ **առնել զհաշտութիւն, առ սուտս ունել, արտաշէլ**

առնել, ընդդիմամարտ լինել, թերահաւատութիւն լինել, հալածական արկանել, համականս առնել, հետահասու լինել, ճգնազգեցիկն լինել, ուշ ի կուրծս անկանել, պատրանս մատուցանել, պարապ առնուլ, պէտ յանձին ունել, ցիր ընդ ցիր լինել, փոյթ ընդ փոյթ լինել, քաջարշաւ լինել, քէն պահել:

Ինչպես և ընդհանրապես, միայն Խորենացու անվամբ հիշատակվող բառերի մեջ նախածանցավոր կազմութիւնները փոքր տեղ են զբաղեցնում, ընդամենը 8, թեև որոշ տեսակետից բնութագրում են Խորենացու ոճը, օրինակ՝ **ան-** նախածանցով և ենթակայական դերբայով կազմված **անհոգող** և **անունող** բառերը կամ **պարականոն**, **ստորագիր** հունաբան կազմութիւնները: Մյուս բառերը բոլորը **ան-** ածանցով են՝ **անխալամ**, **անհարթարար**, **անյագ**, **անպայազատ**: Ան- նախածանցով երկրորդական հիմք ունեն նաև **անաճելութիւն**, **անարժանաբար**, **անընչասիրաբար** վերջածանցավոր կազմութիւնները:

Վերջածանցավոր կազմութիւնները վկայված են տարբեր ածանցներով, որոնց մեջ ուշադրութիւն է գրավում **-եայ** ածականակերտ ածանցի հաճախականութիւնը՝ **կաճեայ**, **կաշեայ**, **հասակեայ**, **ներդեայ**, **ջղեայ** (հմմտ. և **անձեայ** տարբերակը **անձնեայ**-ի փոխարեն):

Նկատվում են նաև **-իկ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով կազմութիւնները, երբեմն ածանցի կրկնութեամբ, որոնք հանդիպում են բանահյուսական հատվածների մեջ՝ **աչիկ** (**աչկունք**), **պատանեկիկ**, **տեղեկիկ** (հիշենք նաև ՆՅԲ-ում ընդհանրապես տեղ չգտած **կարմրիկ**, **եղեգնիկ** բառերը):

Ամենահաճախական **-ութիւն** ածանցը այս խմբի բառերում կցվում է հիմնականում հոդակապավոր կամ անհոդակապ բարդ հիմքերին՝ **աշխարհակալութիւն**, **աւարտաբանութիւն**, **դիպածոութիւն**, **դիւցազներգութիւն**, **եպիսկոպոսապետութիւն**, **ետեղապահութիւն**, **ժահադիմութիւն**, **համառօտասիրութիւն**, **հանճարաբանութիւն**, **հաւորսութիւն**, **հնագրութիւն**, **հնախօսութիւն**, **ճշմարտապատմութիւն**, **հոգւոցհանութիւն**, **ողջաբանութիւն**, **չուրարարութիւն**, **վերջակացութիւն**: Այս տիպի կառույցները խիստ բնորոշ են Խորենացու հեղինակային ոճին:

Մյուս վերջածանցավոր (սրանց թվում և բարդածանցավոր) կազմություններից հեղինակային անհատականության կնիք ունեն՝ **բազմաբիրաւոր, գերազանցօրէն, դժոխեւանելի, երկլուսնեայ, եօթնպարսպեան, ընչեղագոյն, մականական, մանրախուզիւ, մարապարսացի, մերազնացեալ, չորեքժամանակեան, սկայաբար, տնկալուչ, քաջընթացիկ, քուշանաբար** բառերը:

Հետաքրքրական է նշել, որ թեև Խորենացու ամբողջ բառապաշարի մեջ բարդ և բարդածանցավոր կազմությունները գերակշիռ թիվ չեն կազմում ածանցավորների համեմատությամբ, այս խմբի բառերի մեջ դրանց տոկոսային հարաբերությունը մի քանի անգամ ավելի մեծ է (46%՝ 19%-ի դիմաց), որ դարձյալ վկայում է հեղինակի անհատական բառակերտումների առատության մասին: Դրանցից շատերը անմիջապես ճանաչվում են որպես Խորենացուն յուրահատուկ լեզվական միավորների, հատկապես բանահյուսական հատվածներում հանդիպող՝ **աչագեղ, շիկափոկ, ոսկեղ, վիշապազունք** բառերը, դիցաբանական հերոսներին բնութագրող **գեղեցկաղեղն, գեղեցկոտն, խայտակն, խոժոռագեղ, խոշորագեղ, խորակն, կոպտարանձն, հաստաբազուկ, հաստաղեղն** մակդիրները, **քաջ** բաղադրիչով կազմված **քաջագանգուր, քաջախոհ, քաջախոր, քաջասուն, քաջափոյթ, քաջերէ** ածականները և այլն:

Այս խմբի բարդ բառերի մեջ աչքի են ընկնում ոճական արժեք ունեցող, խոսքի պատկերավորմանը ծառայող բազմաթիվ օրինակներ, ինչպիսիք են՝ **անդնդալիր, առատագիւտ, արեգակնաճեն, արեգակնատես, արժանափառ, բազմամետաքս, դժնեահայեաց, զուգագեղեցիկ, ընդդիմափառ, կենախուզ, հրընկեց, մարդադաւ, յակնթակապ, նորակտուր, շատահանճար, պայծառերես, պերճաբան, սաղապաճեն:** Կան նաև առարկաների ճշգրիտ բնութագրությանը ծառայող կամ տերմինային արժեք ունեցող բառեր, առանց պատկերավորության երանգի, որոնցից շատերը կարող են լինել Խորենացու նորակազմություններից. օրինակ՝ **անձնացոյց, արդարաբան, բազէակալ, բնագաւառ, եղեգնապուրակ, երկայնաձև, զուգահայր, զրահազգեստ, զրուցաբան, ընծայատար, թերուղիղ, թիկնապահ, խոյրարար, կարկտածու, կճղակաբաշխ, համբաւաբեր, հաւասարասէր, հետայոյզ, հովուավանք, մկնդահար,**

յուզարկու, յունասեր, նախարարագն, նաւալիւղ, նաւացռուկ, նոյնազաւակ, պաղանձաւ, պարկացիր, տիկտեսակ, տիրագլուխ, քեմխտապատ, քեռայր և այլն:

Խորենացու բառապաշարի մյուս միավորները ունեն զուգահեռ կիրառություններ նաև 5-րդ դ. մեր ընդունած սկզբնաղբյուրների մեջ, սակայն համընկնումների քանակը տարբեր է: Մեծ հաճախականություն ունեցող սովորական (կամ այսպես կոչված հիմնական բառաֆոնդի) բառամիավորները հանդիպում են բոլոր նշված հուշարձաններում, մյուսները՝ դրանցից մի քանիսում կամ միայն մեկում: Հատուկ ուշադրության արժանի են բառագործածությունների այսպիսի զույգ հանդիպումները, այսինքն՝ այն բառերը, որոնք կիրառվել են Խորենացու և նշված հեղինակներից միայն մեկի կողմից: Սրանք կարող են հնարավորություն տալ պարզելու նշված հեղինակների և Խորենացու լեզվի (տվյալ դեպքում բառապաշարի) մերձավորության աստիճանը, որի հիման վրա կարելի է եզրակացություններ անել տվյալ երկի ստեղծման հետ կապված հանգամանքների մասին: Բառային միավորների զույգ հանդիպումների քանակները նույնպես հեղինակից հեղինակ զգալիորեն տարբերվում են: Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են այդ քանակական տվյալները ըստ առանձին հեղինակների:

Աղյուսակ 3

Սկզբնաղբյուրներ	Կորյուն	Եզնիկ	Ագաթանգեղոս	Բուզանդ	Եղիշէ	Փարպեցի	Աստվածաշունչ	Պատմութիւն Աղեքսանդրի	Գիրք Պիտոյից
Չույգ հանդիպումների քանակը	17	31	55	63	45	90	163	12	218

Համեմատության արդյունքների մասին կարելի է ասել հետևյալը: Կորյունի, Եզնիկի, մասամբ Եղիշէի բառապաշարի հետ զույգ հանդիպումների փոքր քանակությունները թերևս կարելի է բացատրել Խորենացու երկի համեմատությամբ

նշված հեղինակների երկերի բնագրերի փոքր ծավալով, որ բնականաբար փոքրացնում է ընդհանրապես զուգահեռ գործածությունների հնարավորությունը, և որոշ չափով նաև ժանրային տարբերություններով (վարքագրություն և դավանաբանական թեմատիկա, որը նաև Եղիշէի երկում զգալի տեղ է գրավում): Այս դեպքում սակայն զարմանալի է «Աղեքսանդրի պատմության» հետ զույգ հանդիպումների նվազագույն քանակը, քանի որ այս ստեղծագործությունը զգալիորեն ավելի ծավալուն է, և որ ավելի կարևոր է, բանասիրական և լեզվաբանական լուրջ կռվաններով ապացուցված է համարվում, որ Աղեքսանդրի պատմության թարգմանությունը պատկանում է Խորենացու գրչին: Պատճառը հավանաբար կարելի է տեսնել դարձյալ ժանրային տարբերությունների մեջ, որոնք այստեղ շատ ավելի խոր են. Խորենացու երկը պատմագրական և առավելապես գիտական բնույթի շարադրանք է, իսկ Կեղծ Կալիսթենեսի գործը գեղարվեստական ստեղծագործություն, որտեղ Աղեքսանդրի կյանքի պատմությունը զուգակցվում է հրաշապատում նկարագրություններով ու պատկերներով: Մյուս կողմից, սակայն, պետք է ասել, որ թեև այս երկու բնագրերի (Խորենացու և Աղեքսանդրի պատմության) բառագործածումների զույգ հանդիպումները քիչ են, բայց բավական բնութագրական են: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք չեն հանդիպում ոչ միայն մեր համեմատած հեղինակների լեզվում, այլև ողջ հայ մատենագրության մեջ, ինչպես՝ **հանգոյց ի հանգուցէ** արտահայտությունը:

Խորենացու և Աղեքսանդրի պատմության բառային զույգ համընկնումներն են՝ **աշտանակել, առնապատկեր, բռնամարտիկ, խաբկանք, կառավարել, կիր, կիսախողխող [առնել], հանգոյց ի հանգուցէ, ծիարծակարան, սակաւակեաց, սեղեխ, տրփանալ:**

Քանի որ աղյուսակում բերված զույգ համընկնումների քանակները ընդհանուր առմամբ մեծ չեն, ավելորդ չենք համարում բերել այդ բառամիավորները ըստ առանձին հեղինակների՝ կատարելով դրանց կառուցվածքային և գործառական որոշ խմբավորումներ:

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի բառապաշարի հետ Խորենացին ունի 16 զույգ հանդիպում: Սրանց մեջ բայական հարադրություններ են՝ **կործան յերկիր զարկուցանել,**

միջամուխ լինել, յանկ ելանել, ի թիկունս հասանել, ի ձեռն տալ: Բարդութուններ են բարեացապարտ, յառաջախաղաց, ածանցավորներ՝ դիւրագոյնս, ընտանեգոյն, թարգմանիչ, հելլենական, մեհենական, պարզ բառեր են՝ ծածուկ, սակր: Կա նաև անվանական մեկ հարադրութիւն՝ որոշիչ - որոշյալ հարաբերությամբ՝ **արքունական դուռն**: Ինչպես տեսնում ենք, այս բառամիավորների մեջ չկան ոճապես նշույթավորված օրինակներ, իսկ իմաստային տեսակետից կարելի է նշել դպրութեան հետ կապված որոշ բառեր՝ **թարգմանիչ, հելլենական, մեհենական [գիր]**:

Եզնիկի «Եղծ աղանդոցի» բնագրի հետ Խորենացին ունի 31 բառային զույգ հադիպումներ: Սրանք նույնպես ոճական տեսակետից չեզոք են և հիմնականում պատկանում են համագործածական բառերի թվին, բացի, թերևս **արվեստագիտութիւն** և **թելադրութիւն** բառերից, որոնք վերաբերում են մշակույթի բնագավառին: Մյուս բառերի մեջ կարելի է առանձնացնել հետևյալ կառուցվածքային խմբերը՝ բայական հարադրութիւններ՝ **առնել խաղաղութիւն, բառնալ ի միջոյ, ի խաչ ելանել, մարթ լինել, վրեժ պահանջել**, համադրական կազմութեան բայեր՝ **բուժել, ըմբոստանալ, մտրակել, նահանջել, ողողանել, սուրալ, ցուլանել, քթթել**, ոչ բայական հարադրութիւնները ընդամենը երեքն են՝ այս ինչ, **արքայ արքայից, ընդ հարկաւ**: Համադրական բարդութիւնները նույնպես քիչ են՝ **ընդդիմակաց, լեռնադաշտ, մուլախինդ** (ինչպես նաև վերը նշված **արուեստագիտութիւն**): Կա միայն երկու նախածանցավոր բառ՝ **առընթեր, համազգի**: Վերջածանցավորներ են՝ **անձնաւոր, ճշդիւ, ցանկական, փչումն**: Պարզ բառերն են՝ **ծոյլ, մարմանդ, միագ, միշ**: Ինչպես տեսնում ենք, այս բառերի մեջ առավելագոյն քանակ ունեն բայերը (այդ թվում հարադրութիւնները):

Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» հետ բառային զույգ համընկնումների քանակն է 55: Սրանք դարձյալ հիմնականում չեզոք շերտի բառեր են: Բայերն այստեղ մյուս խոսքի մասերի համեմատութեամբ սակավաթիվ են: Հարադրավոր կազմութիւններից հանդիպում են միայն **ի բաց մերկանալ, իրազգած լինել, ողջ լինել, ցիր դիաթաւալ կացուցանել**, իսկ համադրականներից՝ **բաղխել, գծել, կտրել, հոսեցուցանել, շարել, պաճուճել**, ինչպես նաև բարդ հիմքով՝ **ճառակցել**: Ոչ բայական հարադրութիւնները ընդամենը երկուսն են՝ **ուր ուրեմն, ցան և ցիր**: Համադրական

կաղապարներով բարդությունները որոշ չափով գիջում են ածանցավոր կազմություններին՝ աղխագուր, դաշտաձև, երեկօքք, երկաթագամ, երկրակոխ, թագադիր, կուսակալ, հարկապահանջ, հորաբարոյ, մանրապատում, միայնակեաց, չքնաղագեղ, սպիտակափառ: Ածանցավոր բառերի մեջ վկայված են միայն վերջածանցավոր կառույցներ, եթե նկատի չունենանք նախածանցավոր հիմքով կազմված առանձնական բառը: Վերջածանցավորների մեջ մեծամասնություն են կազմում -ութին ածանցով բառերը՝ ասպետութին, աւգտութին, գեզութին, ծննդականութին, կարծրութին, հարսնութին, որպիսութին, քրմութին. այլ ածանցներով՝ արգոյ, գաղտնիք, գիշերայն, գուշակումն, գտակ, երգարան, երգիչ, թուլագոյն, հայրենական, հոմանի, նախնական, պարթևական, սերունդ, վայրկեան: Պարզ բառերը ընդամենը 6 են՝ դրուատ, ետղ, խոխոմ, կարակում, շար, ոճ:

Բուզանդի «Յայոց պատմության» հետ խորենացին ունի բառագործածության 63 զույգ հանդիպումներ: Այստեղ բառերի կառուցվածքային խմբերի միջև առկա է քանակական այլ հարաբերակցություն: Բուզանդը և խորենացին մոտ են բայերի գործածության առատությամբ: Զույգ հանդիպումներով վկայված են անկասկած լինել, ասպատակ առնել, աւար առնուլ, զբողոք բառնալ, զհետ լինել, զհետ կրթել, ընդ ցից հանել, ի բաց տալ, ի բուռն արկանել, խնդրել (զ)վրէժ, յառաջ վարել, տալ ճակատ հարադրավոր կազմությունները և ասպատակել, աւանանալ, աքսորել, զակատել, զատչել, համոզել, հարստանալ, ձօնել, տիրացուցանել համադրական բայերը:

Ոչ բայական հարադրություններն են՝ ես ինքն, ընդ մէջ, ի բացեայ, հուպ ընդ հուպ, յառաջ կոյս:

Յամենատաբար սակավ են համադրական բարդությունները՝ աշխարհաւեր, աւանդառու, բոկագնաց, զօրանիստ (Բուզանդի տեքստում՝ զօրանիստ առնել հարադրության կազմում), իրաւարար, ծիւնակիր, սարկաւագապետ, վարսակալ: Ածանցավոր կազմություններն այստեղ ևս գրեթե բացառապես վերջածանցով են, միայն երկու բառ՝ անառաջնորդ և անյուսութին ունեն միաժամանակ նախածանց (-ան) և վերջածանցներ (-ին + -որդ և -ութին): Վերջածանցներից ամենագործածականը -անոց ածանցն է՝ աղքատանոց, աւտարանոց, եղբայրանոց, հիւանդանոց, այլ ածանցներով

վկայված են՝ աշխարհօրէն, զրահաւոր, հիւսիսական, հուժկու, ճգնաւոր, նիզակաւոր, շերտաւոր, պաղեստինացի, քանդումն: Պարզ բառերն այստեղ փոքր-ինչ ավելի առատ են, քան նախորդ հեղինակների բառային զույգ հանդիպումներում՝ **առոյգ, արիանոս, կոմս, կուռ, ճեն(ք), սարիք, ստրատելատ, վաշտ, վառ, փանդիռն:**

Եղիշէի «Վասն Վարդանայ և Յայոց պատերազմին» երկը իր գրութեան ժամանակով ավելի մոտ է Խորենացու «Յայոց պատմութեանը», սակայն բառային միավորների զույգ համընկնումների քանակով զիջում է նախորդ երկու հեղինակներին (Ագաթանգեղոս և Բուզանդ): Արձանագրվել է բառագործածութեան ընդամենը 45 զույգ հանդիպում: Սրանք նույնպէս հիմնականում սովորական բառեր են՝ առանց ոճական հատուկ երանգավորման կամ կիրառութեան որոշակի ոլորտների: Այս բառերի մեջ բայերը ամենամեծ խումբն են կազմում. հարադրավորներն են՝ **անկ է (միադիմի), անհնար լինել, արկանել ձեռն, գալ ի վերայ, գերի վարել, թողուլ ի բաց, ի բաց ածել, ի խնդիր լինել (են), վրէժ առնուլ, փախստական անկանել.** համադրական կառուցվածքի բայերն են՝ **արդարանալ, խորամանկել, կալուլ, համեստանալ, սառուցանել, ստուարացուցանել, ցրտանալ, փորագրել:** Ոչ բայական վերլուծական կազմութիւններ են **հոգւոյն աչք կապակցութիւնը և ուրեք ուրեք կրկնավորը:** Համադրական կաղապարներով հոդակապավոր բարդութիւններից վկայված են միայն հինգ բառ՝ **գինեբեր, դիակապուտ, ընծայատուր, խորշակաբեր, սալայատակ:** Նախածանցավոր կազմութիւն է միայն **ապաժոյժ** բառը, իսկ **անբաւութիւն** վերջածանցավոր բառի երկրորդային հիմքն է **անբաւ՝ ան-** նախածանցով: Վերջածանցավոր մյուս բառերը վկայված են տարբեր ածանցներով և հատուկ խմբավորման չեն ենթարկվում՝ **բաղանիք, բորբոքումն, ընտանիք, թագուստ, թխութիւն, հեզաբար, մէջք** («մեջտեղը» իմաստով), **ողոքական, ուղևորութիւն, պահլաւիկ, պարզութիւն, պարսկական, ջախջախումն:** Պարզ բառերն են՝ **դէն, յար, սինկղիտոս, փարախ:**

5-րդ դարի ինքնուրույն հեղինակներից բառագործածութիւնների զույգ հանդիպումների քանակով Խորենացու երկին առավել մերձավորութիւն է ցուցաբերում Ղազար Փարպեցու «Յայոց պատմութիւնը», որը ամենայն հավանականութեամբ կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով՝ երկու հեղինակների կյանքի և

ստեղծագործության նույն ժամանակաշրջանի, ուսումնառության ու կրթության ընթացքի նմանությամբ, լեզվագործածության ու գրական լեզվի մշակման նման սկզբունքներով: Բացի այդ, ինչպես նշում են հետազոտողները, իր պատմությունը շարադրելիս Փարպեցին որպես սկզբնաղբյուր օգտագործել է Խորենացու երկը: Կարևոր է հիշել նաև երկու պատմիչների ստեղծագործությունների ժանրային-թեմատիկ ընդհանրությունը և բնագրերի մոտավորապես նույն ծավալները: Ինչ վերաբերում է ընդհանուր բառամիավորներին, ապա դրանք որևէ յուրահատկություն չեն դրսևորում, կան միայն մի քանի բարդություններ, որոնք մակդիրների դերով գործածվելիս խոսքին հաղորդում են պատկերավորություն: Փարպեցու լեզվում հանդիպող տերմինային արժեք ունեցող նորաբանությունները զուգահեռ գործածություն ունեն ոչ միայն Խորենացու, այլև Պիտոյից գրքի մեջ, որի մասին կխոսենք ստորև: Խորենացու և Փարպեցու բառամիավորների զույգ հանդիպումներն են 90: Սրանցից քանակով ամենամեծ խմբին են պատկանում ածանցավորները (այդ թվում՝ բարդ ածանցավոր): Բայերը թեև նույնպես շատ են, բայց զիջում են առաջիններին: Վկայված հարադրավոր կազմությամբ բայերն են՝ արտաքս ընկենուլ, բաւական լինել, դիմել ի վերայ, դնել ունկն, ընդ առաջ գալ, թուի հաճոյ, ի բաց դառնալ, ի բաց վարել, հպատակ լինել, շատ լինի: Համադրական կազմությամբ՝ գիշատել, եպերել, թագուցնել, ճեղքել, մարտիրոսանալ, մեկուսանալ, յորջորջել, պատմագրել, սադրել, ցասուցանել: Ոչ բայական հարադրությունների զույգ հանդիպումներ չկան: Համադրական բարդություններն են՝ աղտեղասէր, ամենախնամ, այդքան, բազմաբեր, բազմափայլ, գեղեցկանիստ, թուլամիտ, կորովածիգ, համբաւատենչ: Նախաածանցավոր կազմությունները հիմնականում ան- ժխտական նախաածանցով են՝ անխորհրուրդ, անմարդ, անպարապ, անսայթաք: Այդ նախաածանցներով վկայված է միայն շարագիր բառը, որը կարելի է համարել նաև բարդություն, եթե շար ձևությամբ դիտենք ինքնուրույն արմատի արժեքով: Վերջածանցավոր բառերը կազմված են տարբեր ածանցներով, որոնց մեջ գերակշռում է -ումն գոյականակերտ ածանցը, որն ի դեպ հաճախական է նաև Խորենացու լեզվում ընդհանրապես: Այդ ածանցով զույգ հանդիպումներն են՝ արբումն, բարբա(ն)ջումն, իմացումն, կապումն, հառաչումն, շփոթումն, փայլումն, այլ

ածանցներով՝ ամենևին, անրագոյն, այգեստան, առաքելաբար, ասացուած, աստանօր, արօտական, եղբայրաբար, ընպելիք, ընթերցող, իմաստ, խորհրդականութիւն, կաթողիկոսական, կարճառօտիւ, հարավային, մանկական, մուրացածոյ, նախագոյն, պայիկ, վանորայ, տաղտուկ: Բարդածանցավոր բառերը կազմված են միայն -ութիւն ածանցով՝ աստուածգիտութիւն, խորհրդակցութիւն, մարդահաճութիւն: Ամենափոքր խումբն են կազմում պարզ բառերը՝ արգաւանդ, ընդ (նախդիրը բացառական հոլովի հետ), թեր, լանջք, մօր, սալ, սպայ:

5-րդ դարի թարգմանական մատենագրութեան ամենածավալուն հուշարձանի՝ Աստվածաշնչի հետ խորենացու բառապաշարի միավորների զույգ հանդիպումների քանակը մյուսների համեմատությամբ զգալիորեն ավելանում է՝ 163 բառամիավոր: Այդ բառամիավորները բացի ավելի մեծ քանակից բնորոշվում են նաև բազմազանությամբ: Սրանց մեջ հանդիպում են կյանքի տարբեր բնագավառների առարկաների, երևույթների, գործողությունների անվանումներ: Սա բացատրվում է Աստվածաշնչի բովանդակության հարստությամբ, նրա մեջ տարբեր բնույթի ծավալուն տեքստերի առկայությամբ: Մյուս կողմից՝ խորենացու բնագրի հետ զույգ հանդիպումների առատությունը արդյունք է նաև այն հանգամանքի, որ Աստվածաշունչը եղել է նրա հիմնական սկզբնաղբյուրներից մեկը: Աստվածաշունչը բազմակողմանիորեն օգտագործվել է ոչ միայն խորենացու, այլև այդ ժամանակաշրջանի բոլոր հեղինակների կողմից և խոր ազդեցություն թողել նրանց վրա թե՛ գաղափարախոսական, հոգևոր ու մշակութային, թե՛ լեզվական առումով: Հեղինակները մշտապես դիմել են աստվածաշնչային բնագրերին ու կերպարներին, բառացի քաղվածքներ կատարել, օգտվել նրա բառապաշարից:

Աստվածաշնչի և խորենացու բառապաշարի միավորների զույգ հանդիպումները դասակարգելիս նկատում ենք, որ դրանց կառուցվածք-գործառական խմբերի համամասնությունը նույնպես զգալիորեն տարբերվում է մյուս հեղինակների համեմատությամբ: Այսպես, բայական բառամիավորների զույգ հանդիպումները մյուս հեղինակների երկերում առավելապես վերլուծական կառուցվածքի են կամ գրեթե հավասար համադրական կառուցվածք ունեցող բայերին, մինչդեռ այստեղ

վերլուծական (հարադրավոր) բայերն ավելի քիչ են, քան համադրականները: Վկայված են հետևյալ դեպքերը. հարադրավոր բայեր՝ **անտես առնել, առաջի առնել, աւգնական լինել, գահավեժ առնել, գումարտակ առնել, դարան գործել, ընդ ակամբ հայել, թագ կապել, ժամ դնել, կոծ առնել, մարտ դնել, շուք առնել, չարախօս կալ, պաշտօն տանել, պատճառս տալ.** համադրական կառուցվածքի բայեր՝ **աղխել, աղտեղանալ, ամբարշտել, անհրաւել, աշխատեցուցանել, արձանացուցանել, ատարանալ, դիեցուցանել, երդմնեցուցանել, զբօսնուլ, զղջալ, զօդել, թափառել, խոշտանգել, կատարել, կարկել, կուրացուցանել, կոփել, կսկծեցուցանել, ճոխանալ, մարգարեանալ, մեծաբանել, յաչաղել, նիրհել, պակնուլ, վատասրտել, վտարանջել, տեղեկանալ, ցաւեցուցանել, փայփայել, փեսայացուցանել, փետտել, քեցել:**

Անվանական հարադրությունները այստեղ ևս շատ քիչ են, ընդամենը երկու դեպք՝ **աւրինակ զայս, աւր հասարակ:** Համադրական կառուցվածքի բառամիավորների մեջ գերակշռում են ածանցավորները: Նախաածանցավորների մեջ դարձյալ հիմնականում **ան-** ժխտական նախածանցով կազմություններն են՝ **անբարի, անթլփատ, աննշան, անվտիտ,** կան նաև մեկական բառ **ապ-, առ-, ընդ-** նախածանցներով՝ **ապուշ, առանցք, ընդարձակ:** Վերջածանցավորների մեջ կարելի է առանձնացնել երկու ածանցի գերակշիռ գործածություն, որոնցից մեկը **-աւոր** ածանցն է, որ առկա է հինգ բառում՝ **գործաւոր, հովանաւոր, պարսաւոր, պսակաւոր, վաղակաւոր,** մյուսը **-ութին** ածանցը՝ չորս օրինակով՝ **անդորրութին, ապաւինութին, բորոտութին, գործաւորութին:** Մյուս վերջածանցներով վկայված են՝ **անկին, անկուած, արբեցող, աւերումն, ընդարձակագոյն, լալին, լծակ, խնդրակ, կալանք, կճեայ, կողոպտիչ, կոփածոյ, հացաւետ, հռոդացի, մօտագոյն, որմզդական, ուսուցումն, վարձանք, վտարանդի.** (խորենացու երկում՝ **վտարանդի լինել** հարադրության մեջ), **ցանցորդ, փոքրագոյն, քաղղեացի, քանդակ, քրթմնջին:** Բարդ ածանցավոր կառույցներն են **-աբար** ածանցով՝ **այլազգաբար** և **-եայ** ածանցով՝ **արևելեայ, երեքօրեայ, ծովեզերեայ:**

Բարդությունները զգալի քանակ են կազմում, բայց զիջում են ածանցավոր կազմություններին: Զույգ հանդիպումներն են՝ **ամօթալի, ատարածին, գողակից, դժուարակիր, ելևնուտ, երեամ, երկանաքար, զինընկեց, զինակիր, լեռնոտն, ծործոր,**

կաշառառու, կծղակաբաշխ, հանապազասուտ, ձեռակերտ, մահարծան, մարդաթիւ, ներքինապետ, չորրորդապետ, պարսաքար, ստնդիայ, ստնտու, ցանկասէր, ցեղապետ, փեսավէր:

Եվ վերջապես, ի տարբերություն մյուս հեղինակների, Աստվածաշնչի բառապաշարի հետ զույգ հանդիպումներում անհամեմատ շատ են պարզ կառուցվածքի բառամիավորները, որոնք մյուս հեղինակների հետ ունեցած զուգահեռ կիրառությունների մեջ չէին հասնում նույնիսկ մեկ տասնյակի: Այդ բառերն են՝ **աթերայ, անծաւ, աշտէ, ապաքէն, բուրգ, գեղմն, դագաղ, երաշտ, երկան, թէկն** (խորենացու երկուն՝ **թէկն ածել** հարադրության մեջ), **լիճ, խաբ, խաղ, խան, խարտեաշ, խորթ, խուժ, ծիր, կանգուն, կարկառ, կրկէս, հիւս, մակոյկ, մարգ, մղոն, նուազ** («գավաթ» իմաստով), **շոյտ, ողորկ, որկոր, պատուար, սուին, սրիկայ, սրունք, վերտ, վէս, վտաւան, տարագ, ցոփ, քօշ:**

Ինչպես տեսնում ենք, բերված բառերը անվանում են ամենատարբեր բնագավառների հետ կապված իրույթներ և հասկացություններ: Սա վկայում է այն մասին, որ խորենացու երկը (ինչպես և Աստվածաշունչը) ունի լայն ընդգրկում և հարուստ բովանդակություն, արտացոլում է ժողովրդի կյանքի ու պատմության տարաբնույթ իրողությունները, պարունակում է բազմազան տեղեկություններ առօրյա կենցաղից սկսած մինչև պետական-քաղաքական անցուդարձի մասին:

Յուրահատուկ բնույթ ունեն խորենացու «Չայոց պատմության» և «Պիտոյից գրքի» բառամիավորների զույգ հանդիպումները: Ամենից առաջ աչքի է զարկում մնացած բոլոր սկզբնաղբյուրների համեմատությամբ դրանց առավելագույն քանակը՝ 218:

Իսկ ընդհանուր բառամիավորների դասակարգումը և նրանց կառուցվածքային տեսակների քննությունը ի հայտ է բերում հետաքրքրական առանձնահատկություններ: Չայտնի է, որ «Պիտոյից գիրքը» հունաբան դպրոցի կողմից ստեղծված ամենաբնորոշ բնագրերից է, որտեղ արտացոլվել են այդ դպրոցի թարգմանչական սկզբունքները և լեզվագործածության ու տերմինաբանության մշակման նրանց մոտեցումները: Ուսումնասիրողները բազմիցս նշել են «Պիտոյից գրքի» ոճական խրթինությունը,

հունաբան կառույցները ինչպես շարահյուսության, այնպես էլ բառապատճենումների մեջ: Ինչպես նշել ենք առաջաբանում, փորձեր են արվել բացահայտելու «Պիտոյից գրքի» և Խորենացու երկի մեջ ընդհանուր նորաբանությունները: Մեր համեմատության տվյալները ընդգրկում են ոչ միայն նորաբանությունները, այլև սովորական, ընդհանուր գործածության բառամիավորները, որոնք հանդես են գալիս զույգ հանդիպումներով: Սակայն հունաբան դպրոցի սկզբունքներով կերտված բառերն էլ այստեղ շատ ավելի են, քան մինչև այժմ նշվել է:

Մյուս հեղինակների երկերի համեմատությամբ այլ պատկեր ունի նաև բառամիավորների խմբավորման համեմատությունը: Նախ նշենք, որ մեզանից անկախ պատճառներով չենք կարողացել պարզել Պիտոյից գրքի բնագրում առկա վերլուծական կազմությունները, քանի որ ինչպես արդեն ասվել է, համակարգչի միջոցով ստացել էինք միայն առանձին բառածևերի ցանկը: Հետևաբար պարզ է, որ վերլուծական կառուցվածքի բառամիավորների ներգրավումով Խորենացու և «Պիտոյից գրքի» բառագործածումների զույգ հանդիպումների քանակը հավանաբար զգալիորեն կմեծանար: Հետագայում, եթե երբևէ կազմվի նաև «Պիտոյից գրքի» համաբարբառ բառարան նույն սկզբունքներով, ինչպես արդեն հրատարակված համաբարբառները, այդ տվյալները հնարավոր կլինի ճշգրտել: Այսպիսով հարադրավոր բայերը այստեղ ներկայացված չեն: Դրա փոխարեն հինգ տասնյակի են հասնում համադրական կառուցվածքի բայերը, որոնց մեջ զգալի քանակ են կազմում հունաբան դպրոցի ստեղծած նախամասնիկներով կազմությունները՝ բաղդատել, գերազանցել, հակամիտել, շարագրել, շարադասել, պարունակել, վերագրել, փոխադրել, փոխարկել. մյուս բայերն են՝ ակնածել, առաւելել, արժանաւորել, աւարտել, բաւականաւ, բնաւորել, երևութանաւ, երկբայանաւ, զանազանել, զօրավարել, ընդդիմաբանել, ընկերել, իրագործել, խանդաւ, խարսխել, խելագարել (եալ), խնամենաւ, ծանօթանաւ, կատաղել, հատուածել, հարկեցուցանել, հարստել, հեղեղել, հերքել, հիացուցանել, հմտանաւ, ծիավարել, միաւորել, յանգել, յառաջանաւ, նկարագրել, շրջապատել, ուռճանաւ, պակուցանել, պատաղել, պարաւանդել, սպառազինել, տաժանել, տածել,

փոխանորդել, փոխարինել, ինչպես նաև գոզցես պակասավոր բայը, որն այստեղ ավելի շատ եղանակավորող բառի արժեք ունի:

«Պիտոյից գրքի» հետ Խորենացու բառապաշարի զույգ հանդիպումների մեջ ամենացայտուն առանձնահատկությունը նախածանցավոր կազմությունների առատությունն է: Այստեղ ևս առավել հետաքրքրական են հունաբան դպրոցին բնորոշ նախածանցներով կազմությունները՝ **ապագայ, գերապանծ, ընթադրեալ, համաբնակ, համական, համանգամայն, համանուն, համապատիւ, նախագահ, նախածեռն, նախամարգարէ, նախաշաւիղ, ներբողական**: Մյուս նախածանցավոր կազմությունների մեջ գերակշռում են **ան-** ժխտականով բառերը, այդ թվում ապառնի դերբայները՝ **անժուժկալ, անկար, ահասանելի, անյարմար, անտանելի, ընդ** նախածանցով վկայված է երկու բառ՝ **ընդոծին, ընդոստ(մամբ)**: Հունաբան դպրոցի նախածանցներով հիմքեր ունեն նաև վերջածանցավոր կառույցներից **արտասանութիւն, վերաբանութիւն, շարագրութիւն** բառերը: Այս տիպի կառույցների մեջ նախածանցավոր երկրորդական հիմքեր կան և **ան-** ժխտականով՝ **անբերութիւն, անյայտաբար**, ինչպես նաև **ամբարծումն**՝ **ամ-** ոչ գործուն նախածանցով:

Վերջածանցավոր կազմությունների մեջ գերակշիռ գործածություն ունեն **-ումն** և **-ութիւն** ածանցները, որ ընդհանրապես բնորոշ են Խորենացու լեզվին: **-ումն** ածանցով կան հետևյալ զույգ հանդիպումները՝ **ամբարծումն, արբուցումն, աւարումն, աւարտումն, բոլորումն, բուրումն, դիեցումն, ծաւալումն, կապումն, հանդիպումն, պակուցումն, սասանումն, վարժումն, տածումն**: **-ութիւն** ածանցով **ամայութիւն, դաշնաւորութիւն, դրութիւն, երագութիւն, երկարութիւն, կարգաւորութիւն, կարծրութիւն, պակշոտութիւն, պարաւորութիւն, տխմարութիւն**: **-ութիւն** ածանցը հաճախ կցվում է ոչ միայն պարզ սկզբնահիմքերին կամ ածանցավոր երկրորդային հիմքերին, այլև բարդություններին: Այս տիպի բարդածանցավոր կազմությունները նույնպես շատ բնորոշ են Խորենացու լեզվին՝ **աշխատասիրութիւն, աստուածաբանութիւն, բարեբախտութիւն, բարեզարդութիւն, բարեխառնութիւն, բարեհամբաւութիւն, բարեփառութիւն, գործառնութիւն, իրագործութիւն, կարեկցութիւն, կենդանագրութիւն, հրեշտակագնացութիւն, հրկիզութիւն, ձեռնտուութիւն, մեծանձնութիւն,**

միայնամարտութիւն, ողբերգութիւն, ողջախոհութիւն, պարզամտութիւն: Բարդ երկրորդական հիմքեր ունեն նաև -ագոյն, -ական, -եան ածանցներով որոշ բառեր՝ բարեբախտագոյն, հրաշափառագոյն, դիւցազնական, արևելեան: Մյուս ածանցները համեմատաբար փոքր հաճախականութիւն ունեն և հատուկ խմբավորման չեն ենթարկվում:

Բերում ենք այդ ածանցներով զույգ հանդիպումները ընդհանուր այբբենական ցանկով՝ ազատաբար, աղու, ամառնային, այպանելի, անձնիւր (անցնիւր), աստուածուհի, արագապէս, արգասաւոր, արդարաբար, առատաբար, բռնաւորական, գեղեցկաբար, գիշերային, գիտակ, գոհացողական, գրաւորական, դադարք, ելուզակ, եղանակ, երագապէս, զրկանք, ըղձալի, թափուր, խաբկանք, խոհեմ, խոհեմագոյն, կատարելապէս, կենցաղական, հակառակող, հայրաբար, հմտագոյն, հնագոյն, ճեմարան, մախանք, մաքրագոյն, մեղանք, մրցանակ, յաղթանակ, յանկագոյն, յերկարագոյնս, յստակագոյն, նազելի, ուժգնագոյն, ուրանօր, պահպանակ, պաղատանք, պանծալի, սարսափելի, սոսկալի, վատշուեր, վարժարան, վեհագոյն, տաժանելի, տարփանք, տեսարան, տմարդի, փարթամացուցիչ, փրկական, քաղաքական, քերթող:

Համադրական տիպի բարդութիւնները համեմատաբար շատ չեն, կազմում են վերջածանցավորների գրեթե մեկ քառորդը: Այդ բառերն են՝ ամենազան, ամենապատիկ, աստուածառաք, արգաւանդահող, բարեբախտ, բարեխառն, բարձրագագաթն, երկայնածիգ, երկաքանչիւր, երկբերան, զուգահաւասար, ընդդիմամարտ, իբրու, խորասոյգ, խորհրդաբար, կենցաղօգուտ, ճարտասան, յաւետախաղաց, նորահրաշ, շրջակայ, վերնագիր, քաջամարտիկ: Ինչպէս տեսնում ենք, այս բառերի մի զգալի մասը ածականներ են, ունեն ոճական երանգավորում: Դրանք կիրառվել են որպէս մակդիրներ խոսքին ավելի մեծ արտահայտչականութիւն հաղորդելու նպատակով:

Խորենացու երկի և «Պիտոյից գրքի» բառամիավորների զույգ հանդիպումներում պարզ բառերը մեծ թիվ չեն կազմում, թեև դարձյալ ավելի շատ են մյուս սկզբնաղբյուրների համեմատությամբ (բացի Աստվածաշնչից): Դրանք են՝ աշխոյժ, արփի, գէջ, իրեար, խոյգ, նուաստ, շամբ, ուղիղ(ս), սայլ, սարաս, սղոխ, վագ, վարկ:

Ինչպես ցույց տվեց 5-րդ դարի սկզբնաղբյուրների և Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի վիճակագրական քննությունը, բառամիավորների զույգ հանդիպումների հատկանիշով Խորենացու երկին առավել մերձավորություն են հանդես բերում ինքնուրույն մատենագրությունից Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը» (90 բառամիավոր), իսկ թարգմանական գրականությունից «Պիտոյից գիրքը» (218 բառամիավոր): Այս երեք ստեղծագործությունների բառային ընդհանրությունները ավելի ակնառու են դառնում. եթե հաշվի ենք առնում նաև այն բառերը, որոնք հանդիպում են այս երեք աղբյուրներում՝ ի տարբերություն մեր քննարկած մյուս գրական հուշարձանների: Այդ բառամիավորներն են՝ **աներկիւղաբար, անկումն, անհամբոյր, աշխատասէր, առիթ, աստանօր, աստուածածին, արդարապէս, բազմազան, բաղձալ, բարեկամանալ, բարձումն, գեղեցկապէս, դառնաշունչ, դրժել, ընթերցասէր, ժողովումն, լինելութիւն, խոհականութիւն, կարգաւորութիւն, կենցաղ, կիր (ի կիր), հակառակել, հմտութիւն, հոլովումն, հոծել, ճանապարհորդել, ճենարան, մթեր, յարմարութիւն, սատարել, սուղ, ստուգապէս, տաղտկութիւն:**

«Պիտոյից գրքի» և Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի ընդհանրությունները և նրանց մեջ նորակազմությունների քանակը թերևս թույլ կտա վերանայելու «Պիտոյից գրքի» թարգմանչի հարցը: Ինչպես գիտենք, բանասերներից ոմանք հրաժարվում են Խորենացուն համարել այդ գրքի թարգմանիչ՝ նկատի ունենալով նրանց ոճական տարբերությունը, անհարիր համարելով Խորենացու ոճի հստակությունը և «Պիտոյից գրքի» ոճական խրթնաբանությունները: Այդ դեպքում բառապաշարային ընդհանրությունները կարելի է համարել «Պիտոյից գրքի» ընդհանուր ազդեցության արդյունք: Ինչպես գիտենք, թե՛ Խորենացին, թե՛ Փարպեցին իրենց երկերը ստեղծելիս առաջնորդվել են ճարտասանական արվեստի սկզբունքներով և ստեղծագործաբար օգտագործել ճարտասանական հնարներն ու միջոցները: Այսպես, Փարպեցու «Հայոց պատմության» մեջ Այրարատյան գավառի նկարագրությունը կառուցված է «Պիտոյից գրքում» բերված ներբողյանների կաղապարով:

Կարծում ենք՝ հետագա բանասիրական և աղբյուրագիտական պրպտումները և մեր տվյալների օգտագործումը հնարավորություն կտան պարզելու «Պիտոյից գրքի»

թարգմանչի և այդ երկի հայերեն բնագրի ստեղծմանը Խորենացու մասնակցության հարցը:

Ներկայացվող ժողովածուն ամփոփում է հեղինակի՝ Մ. Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի քննությանը նվիրված աշխատությունները, այդ թվում թեկնածուական ատենախոսությունը և տարբեր գիտական հանդեսներում տպագրված հոդվածները, որոնք նվիրված են Խորենացու բառապաշարի բառականական և գործառական առանձնահատկություններին և տերմինային արժեք ունեցող բառերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարբեր հեղինակների ստեղծագործությունների բառապաշարների վիճակագրական քննությունից հետազոտողները պարզել են, որ յուրաքանչյուր հեղինակի համար կարելի է բացահայտել առավել և նվազ հաճախականությամբ հանդես եկող բառեր և դրանց քանակական բնութագրերի հիման վրա որոշակի եզրակացությունների հանգել տվյալ հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունների մասին:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի վիճակագրական քննությունը մեզ հանգեցնում է հետևյալ եզրակացությունների:

Խորենացու երկի բնագրային համաբարբառի և հաճախականության բառարանի տվյալների հիման վրա պարզվում է, որ «Հայոց պատմության» բառագործածումների ընդհանուր քանակն է 56445, առանձին բառամիավորների (գլխաբառերի) քանակը՝ 6969, մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ 3584: Բառերի միջին հաճախականությունն է 8, սակայն առանձին բառերի հաճախականությունները խիստ

տարբեր են՝ նվազագույնը 1, իսկ առավելագույնը 4550: Առաջին հինգ ամենահաճախական բառերը պատկանում են այսպես կոչված սպասարկու խոսքի մասերի թվին, որ որպես կանոն ընդհանուր լեզվական օրինաչափություն է²⁹: Նվազող հաճախականությունների բառացանկում 6-ից մինչև 13-րդ դիրքը գրավում են 539-ից մինչև 301 հաճախականություն ունեցող բառերը, որոնց մեջ խորենացու ոճի համար առանձնապես հատկանշական են **ասել** բայը և **Չայք** գոյականը: 300-ից մինչև 100 հաճախականություն ունեցող բառերի մեջ կան թե՛ լեզվում ընդհանրապես հաճախակի գործածություն ունեցող բառեր, թե՛ խորենացու «Չայոց պատմության» համար ժանրային – ոճական պայմանավորվածություն ունեցող բառամիավորներ (ազգ, զօր, արքայ, աշխարհ, թագաւոր, նախարար, կողմն, պատերազմ, թագաւորութիւն, քաղաք, ինչպես նաև հատուկ անուններ՝ Պարսք, Արտաշէս, Արշակ, Շապուհ, Խոսրով): Այդպիսի բառերի թիվը ավելի մեծ է հաջորդ՝ 100-ից մինչև 10 հաճախականության բառերի խմբում, որտեղ զգալի քանակ են կազմում բայերը (150): 9-ից մինչև 2 հաճախականություն ունեցող բառերը, որոնց քանակն է 2657, որևէ հատուկ լեզվաոճական կամ կառուցվածքային խմբավորման չեն ենթարկվում: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մեկ անգամ գործածված բառերը, որոնցից շատերը խորենացու անհատական բառակերտման արդյունք են: Ընդհանրապես պետք է ասել, որ երկու և մեկ անգամ գործածված բառերի համամասնությունը (տոկոսային հարաբերությունը բառագործածությունների ընդհանուր քանակի հետ) տվյալ հեղինակի բառապաշարի հարստության ու բազմազանության չափանիշ է: Տվյալ դեպքում խորենացու երկուսն մեկ և երկու հաճախականություն ունեցող բառերը կազմում են համապատասխանաբար 3584 և 2048 (միասին 5632), որ կազմում է բառարանային բառերի թվի 80,8 %-ը, որը բացառիկ արդյունք է, եթե հիշենք, որ ճոխ և հարուստ բառապաշարով հայտնի հեղինակ Ա. Պուշկինի լեզվի բառարանի տվյալներով այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 48%³⁰:

«Չայոց պատմության» բառային միավորները բառակազմական տեսակետից արտացոլում են V դարի գրաբարի բառակազմության օրինաչափությունները: Առկա են համադրական և վերլուծական տիպի բոլոր հիմնական կաղապարներն ու ենթակաղապարները: Կաղապարների վիճակագրական քննությունը պարզում է, որ

Խորենացու և ընդհանրապես V դարի բառապաշարում հանընկնում է ածանցավոր կաղապարների (նախածանցում և վերջածանցում) համամասնությունը, իսկ բարդությունների թիվը որոշ չափով նվազում է ի հաշիվ բայերի առատ գործածության, որոնք հիմնականում պատկանում են ածանցավոր կաղապարների թվին: Բայերի առավել հաճախական գործածությունը (խորենացու բառապաշարի մեջ՝ համադրական և վերլուծական կազմությունները միասին՝ 27,7%, իսկ V դարի բառապաշարի համեմատությամբ՝ ավելի քան 33%) Խորենացու լեզվի ոճական առանձնահատկությունն է, որը կարող է հաշվի առնվել Խորենացուն վերագրվող երկերի բառապաշարի վիճակագրական քննությամբ դրանց հեղինակի որոշակիացման խնդրի լուծման մեջ:

Խորենացին՝ որպես հունաբան դպրոցի ներկայացուցիչ, գործածել է այդ դպրոցի ստեղծած նախածանցներով բառամիավորներ (թե՛ բայեր, թե՛ անուններ), սակայն չափավոր քանակով: Նրան հատուկ չեն հունաբան դպրոցի ծայրահեղությունները և արհեստական կազմությունները:

Խորենացու «Հայոց պատմության» բառային միավորների համեմատությունը V դարի մյուս ինքնուրույն հեղինակների և թարգմանական որոշ ստեղծագործությունների բառապաշարի հետ բացահայտում է նրանց մերձավորության աստիճանը: Նվազագույն մերձավորություն նկատվում է մի կողմից Խորենացու, մյուս կողմից՝ Կորյունի, Եզնիկի և Եղիշեի բառապաշարի միջև, որ բացատրվում է վերջիններիս ծավալի փոքրությամբ և Խորենացու երկի համեմատ ունեցած ժանրային տարբերություններով: Թարգմանական երկերից զույգ հանընկնումները նվազագույնն են «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» հետ, թեև այդ երկի թարգմանությունը մեծ հավաստիությամբ հայ բանասիրության մեջ վերագրվում է Խորենացուն: Ջույգ հանդիպումների նվազագույն քանակը թերևս կարելի է մեկնաբանել ժանրային և թեմատիկ մեծ տարբերություններով: «Հայոց պատմության» բառապաշարի հետ առավելագույն մերձավորություն ցուցաբերում են ինքնուրույն ստեղծագործություններից Փարպեցու պատմությունը, իսկ թարգմանական երկերից «Պիտոյից գիրքը»: Այս երևույթը կարելի է բացատրել նշված երեք երկերի հեղինակների՝ միևնույն դպրոցին պատկանելու հանգամանքով, ինչպես

նաև «Պիտոյից գրքի» ազդեցությամբ ինչպես Խորենացու, այնպես էլ Փարպեցու վրա: Հայտնի է նաև, որ Փարպեցին իր «Պատմությունը» շարադրելիս օգտվել է Խորենացու բնագրից որպես սկզբնաղբյուրից: «Պիտոյից գրքի» հետ «Հայոց պատմության» բառապաշարի առավել մերձավորության հայտնաբերումը հետագա բանասիրական հետազոտությունների հետ միասին կարող է լույս սփռել ճարտասանական այդ երկի հայերեն բնագրի ստեղծման հանգամանքների վրա:

Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի վիճակագրական քննությունը ի հայտ է բերում պատմահոր բառագործածությունների ճոխությունը, հարստությունը և բազմազանությունը, որի մասին վկայում են մեկ անգամ կիրառված բառերի առատությունը (ամբողջ բառապաշարի կեսը), V դարի լեզվավիճակին հատուկ բազմազան բառակազմական կաղապարների և ենթակաղապարների գործածությունը, ինչպես նաև միայն Խորենացու երկում վկայված բառամիավորների զգալի քանակը: Համեմատությունը ՆՅԲ-ի բառացանկի հետ բացահայտում է բառերի մի խումբ, որոնք արձանագրված չեն ՆՅԲ-ում և պետք է տեղ գտնեն հետագայում ստեղծվելիք՝ գրաբարի բառարանների մեջ:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱՌԱԳԱՆՁԸ

Խորենացին հին գրական հայերենի ամենահմուտ մշակողներից մեկն է, որը լեզվական իրողությունները կիրառել է նպատակադրված կերպով՝ ծառայեցնելով գաղափարական և լեզվաշինական խնդիրների: Նա առաջին հերթին ձգտել է մեր լեզուն մշակել ու հասցնել հունարենի զարգացման աստիճանին՝ ինչպես գիտական տերմինաբանության այնպես էլ ռճարտահայտչական համակարգի բնագավառներում:

Պատմահոր գրական ժառանգությունը բազմակողմանիորեն ուսումնասիրվել է: Ի թիվս այլ հարցերի՝ հետազոտողները ուշադրություն են դարձրել նաև նրա լեզվին և արեւարժեքավոր դիտողություններ:

Ն.Ակինյանը այսպես է բնութագրել Խորենացու լեզուն, «... Մովսէս ծերութեան ալիքով ծաղկած, աւելի խոհական ոճով, աւելի պերճաբան լեզուով կջանայ արտահայտութիւնը»:

շնորհել իւր մտածմունքներուն: Նա տարիների ընթացքին աւելի զարգացուցած է իւր մտաւոր պաշարը, աւելի խորացած իմաստասիրութեան ուսումներու խորքը»¹:

«Նրա լեզուն, - գրում է Ստ. Մալխասյանցը, - արվեստական է և բարձր, որով զանազանվում է Փավստոսի և Փարպեցու գրեթէ ժողովրդական լեզվից, նա փայլում է ճոխությամբ, բառերի արվեստական, բայց պատշաճ ու ներդաշնակ չափավորությամբ, կանոնավոր քերականությամբ թե՛ ստուգաբանության, թե՛ շարադասության մեջ՝ չնայելով, որ երբեմն շատ երկար պարբերություններ է գործածում, ոչ մի անգամ խոսքի տրամաբանական կապը չի խզվում, այլ ստացվում է մի բարդ, բազմահարկ և գեղեցիկ դասավորված կառուցվածք: Շաղկապների, կրճատված նախադասությունների նպատակահարմար գործածությամբ ոչ միայն խոսքը պարզ և հասկանալի է դարձնում, այլև ընթերցողին միջոց է տալիս հետևելու հեղինակի մտածողության եղանակին: Նա լեզվի վարպետ է և քերականության ընձեռած բոլոր միջոցները հմտորեն ծառայեցնում է իր մտքերն արտահայտելուն»²:

Խորենացու լեզվին Ստ.Մալխասյանցն անդրադարձել է և «Խորենացու առեղծվածի շուրջը» աշխատության մեջ, հունաբան դպրոցի գործունեության, և ժամանակի հարցի քննության կապակցությամբ: «Խորենացու պատմության լեզվի ընդհանուր նկարագիրն է ճոխ և ընտիր հայկաբանություն, որի մեջ տեղ-տեղ ցրված են հունաբանության տարրեր, ինդպես կանաչ դաշտի վրա գույնզգույն ծաղիկներ, որոնցով դաշտը զարդարվում ու երկներանգ է դառնում, առանց սակայն ընդհանուր կանաչությունը կորցնելու: Պատմության այն հատվածները, որոնք զերծ են հունաբան տարրերից, և այդպես է նրա մեծագույն մասը, այնքան ընտիր են, դասական հայերենի ոգով, որ դժվար է զանազանել հայկաբանության լավագույն տիպարների լեզվից»³:

Խորենացու լեզուն բարձր է գնահատել նաև Մ.Աբեղյանը՝ ասելով. «... նրա ոճը, ինչքան էլ հաճախ զարդարուն ու պերճ է, բայց ընդհանուր առմամբ շատ պարզ, մեկին է, թեթև, շատ կանոնավոր ու դյուրին, միանգամայն ախորժեղի, երբեք չոր ու ցամաք»⁴:

Խորենացին մեծ լեզվաշինարար է: Նա քերականական միջոցների հմուտ գործածությամբ արտահայտում է իր մտքերը: Մտքերի հաջորդականությունը պարզ ու տրամաբանական է, շարադրանքը կուռ և ամբողջական և հնարավորություն է տալիս հետևելու դեպքերի ընթացքին ու հեղինակի մեկնաբանություններին: Հունաբան դպրոցի ներկայացուցիչների օրինակով, առանց սակայն ենթարկվելու նրանց ծայրահեղություններին, նա ստեղծել է մի շարք նախածանցավոր կազմություններ: Հարուստ է նաև Խորենացու ոճական և ճարտասանական միջոցների զինանոցը: Նա կիրառել է ճարտասանական հնարներ ու պատկերավորման միջոցներ՝ նմանություն, համեմատություն, հարցում, բացականչություն, բարառություն և այլն, որոնց շնորհիվ ստեղծել է

պատկերավոր խոսքի հրաշալի օրինակներ և առավել ազդեցիկ ու նպատակասլաց դարձրել իր ասելիքը: Խորենացու «Չայոց պատմությունը» աչքի է ընկնում իր հարուստ բառապաշարով, այնտեղ գտնում ենք բազմաթիվ նորաստեղծ բառեր, իմաստուն մտքեր, թևավոր խոսքեր, ասույթներ, որոնց հետագայում բազմիցս անդրադարձել են այլ հեղինակներ՝ դարձնելով իրենց աշխատությունների բնաբանը կամ ծառայեցնելով իրենց ստեղծագործական նպատակներին⁵:

Խորենացու լեզվի ու ոճի մասին առավել մանրամասն ու հանգամանալից հետազոտությունը մինչև օրս մնում է Խորենացուն նվիրված հատվածը Վ.Առաքելյանի «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» աշխատության մեջ⁶: Ըստ Վ.Առաքելյանի հաշվարկների՝ Խորենացին գործածել է ավելի քան 800 բառ, որոնք իրենից առաջ գրական լեզվի մեջ չեն գործածվել ու մինչև օրս լայն տարածում ունեն մեր լեզվում: Չատկապես հունարենի ազդեցությամբ նրա կազմած բառերից շատերը պահպանել են իրենց կենսունակությունը: Խորենացին իբրև ժառանգություն մեզ է թողել պետական-քաղաքական, ռազմական, հասարակական այլևայլ փոխհարաբերություններ արտահայտող և ժողովրդի տնտեսական, շինարարական կյանքն արտացոլող ու մեր գրական լեզվի բառապաշարի առանցքը կազմող բազմաթիվ բառեր, որոնք հարստացրել են նաև հայերենի գիտական տերմինբանությունը⁷:

Խորենացու բառապաշարը քննության է առել նաև Լ.Յովհաննիսյանը և բացահայտել մի շարք բառեր նրա «Չայոց պատմության» մեջ, որոնք չեն արձանագրվել Չայկազյան բառարանում⁸:

Ներկա հոդվածում փորձում ենք տալ Խորենացու «Չայոց պատմություն» երկի բառապաշարի հիմնական առանձնահատկությունների ընդհանուր պատկերը, որը հենված է վիճակագրական քննության տվյալների վրա:

Տարբեր հեղինակների ստեղծագործությունների բառապաշարի վիճակագրական քննությունից հետազոտողները պարզել են, որ յուրաքանչյուր հեղինակի համար կարելի է բացահայտել առավել և նվազ հաճախականությամբ հանդես եկող բառեր և դրանց քանակական բնութագրերի հիման վրա որոշակի եզրակացությունների հանգել տվյալ հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունների մասին:

Խորենացու երկի բնագրային համաբարբառի և հաճախականության բառարանի տվյալներից պարզվում է, որ «Չայոց պատմության» բառագործածումների ընդհանուր քանակն է 56445, առանձին բառամիավորների (գլխաբառերի) քանակը՝ 6969, մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ 3584: Բառերի միջին հաճախականությունն է 8,1, սակայն առանձին բառերի հաճախականությունները խիստ տարբեր են՝ նվազագույնը՝ մեկ, իսկ առավելագույնը՝ 4550: Առաջին հինգ ամենահաճախական բառերը պատկանում

են այսպես կոչված սպասարկու խոսքի մասերի թվին, որ որպես կանոն, ընդհանուր լեզվական օրինաչափություն է⁹: Նվազող հաճախականությունների բառացանկում 6-ից մինչև 13-րդ դիրքը գրավում են 539-ից մինչև 301 հաճախականություն ունեցող բառերը, որոնց մեջ հորենացու ոճի համար առանձնապես հատկանշական են *Չայք* գոյականը և *ասել* բայը: Սրանցից առաջինը բխում է ստեղծագործության բովանդակությունց, քանի որ երկը նվիրված է Հայաստանի պատմությանը, իսկ երկրորդը արտացոլում է հորենացու երկի ոճական կարևոր առանձնահատկությունները՝ երկխոսությունների հարստությունը և հեղինակի աշխույժ պատմելաձևը: 300-ից մինչև 100 հաճախականություն ունեցող բառերի մեջ կան թե՛ լեզվում ընդհանրապես հաճախակի գործածություն ունեցող բառեր, թե՛ հատկապես հորենացու «Հայոց պատմության» համար ժանրային-ոճական պայմանավորվածություն ունեցող բառամիավորներ (*ազգ, զօր, արքայ, աշխարհ, թագաւոր, նախարար, կողմն, պատերազմ, թագաւորութիւն, քաղաք*, ինչպես նաև հատուկ անուններ՝ *Պարսք, Արտաշէս, Արշակ, Շապուհ, Խոսրով*): Այդպիսի բառերի թիվը ավելի մեծ է հաջորդ՝ 100-ից մինչև 10-ը հաճախականության բառերի խմբում, որտեղ զգալի քանակ են կազմում բայերը (150): 9-ից մինչև 2 հաճախականություն ունեցող բառերը, որոնց քանակն է 2657, որևէ հատուկ լեզվաոճական կամ կառուցվածքային խմբավորման չեն ենթարկվում: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մեկ անգամ գործածված բառերը, որոնցից շատերը հորենացու անհատական բառակերտման արդյունք են: Ընդհանրապես պետք է ասել, որ երկու և մեկ անգամ գործածված բառերի համամասնությունը (տոկոսային հարաբերությունը բառագործածությունների ընդհանուր քանակի հետ) տվյալ հեղինակի բառապաշարի հարստության ու բազմազանության չափանիշ է: Տվյալ դեպքում հորենացու երկում մեկ և երկու հաճախականություն ունեցող բառերը կազմում են համապատասխանաբար 3584 և 2048 միավոր (միասին 5632), որ կազմում է բառարանային բառերի թվի 80,8%-ը, իսկ միայն մեկ անգամ գործածվածներինը՝ 51,4 %-ը, որը բացառիկ արդյունք է, եթե հիշենք, որ ճոխ և հարուստ բառապաշարով հայտնի հեղինակ Ա.Պուշկինի լեզվի բառարանի տվյալներով այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 48 %¹⁰:

«Հայոց պատմության» բառային միավորները բառակազմական տեսակետից արտացոլում են V դարի գրաբարի բառակազմական օրինաչափությունները: Առկա են համադրական ու վերլուծական տիպի բոլոր հիմնական կաղապարներն ու ենթակաղապարները: Համադրական կառույցների մեջ գերակշռում են հոդակապավոր բառերը, որոնք պարզ երկբաղադրիչ կաղապարների մեջ ավելի քան երեք անգամ գերազանցում են անհոդակապ ձևերին: Անհոդակապ ձևերը հիմնականում ծայնավորով սկսվող երկրորդ բաղադրիչով են՝ *բազմարուեստ, դիպաղեղն, աշխարհավեր* և այլն: Միայն սակավ

դեպքերում երկրորդ բաղադրիչը կարող է սկսվել բաղաձայնով՝ *այնժամ, այնչափ, ձեռնտու, ունկնդիր* և այլն: Քիչ թվով օրինակներում *ա* հոդակապի փոխարեն հանդիպում են *և* շաղկապով ձևեր, օրինակ՝ *այրևծի, տուրևառ, ելևմուտք*: Կաղապարների վիճակագրական քննությունը պարզում է, որ *խորենացու* երկուն և ընդհանրապես V դարի գրաբարի բառապաշարում համընկնում է ածանցավոր կաղապարների (նախածանցուն և վերջածանցուն) համանասնությունը, այսինքն *խորենացու* լեզվում արտացոլված է այն առանձնահատկությունը, ըստ որի նախածանցունը զգալիորեն զիջում է վերջածանցնանը, ինչպես բառերի ընդհանուր թվով, այնպես էլ կաղապարների բազմազանությամբ: Իրոք, «Չայոց պատմության» մեջ հանդիպում ենք 175 նախածանցավոր բառի՝ ի տարբերություն վերջածանցավորների 1613 քանակի: Ինչ վերաբերում է բարդությունների թվին, ապա այն որոշ չափով նվազում է ի հաշիվ բայերի առատ գործածության, որոնք հիմնականում պատկանում են ածանցավոր կաղապարների թվին: Բայերի առավել հաճախական գործածությունը *խորենացու* լեզվի ոճական առանձնահատկությունն է (*խորենացու* բառապաշարի մեջ՝ համադրական և վերլուծական կազմության բայերը միասին կազմում են 27,7 %, իսկ V դարի բառապաշարի համեմատությամբ՝ ավելի քան 33 %): Այս հանգամանքը կարող է հաշվի առնվել *խորենացուն* վերագրվող երկերի բառապաշարի վիճակագրական քննությամբ դրանց հեղինակի որոշակիացման խնդրի լուծման մեջ:

խորենացին՝ որպես հունաբան դպրոցի ներկայացուցիչ, գործածել է այդ դպրոցի ստեղծած նախածանցներով բառամիավորներ (թե՛ բայեր, թե՛ անուններ), սակայն չափավոր քանակով: Նրան հատուկ չեն հունաբան դպրոցի ծայրահեղությունները և արհեստական կազմությունները: Դրա վկայությունն է նաև այն, որ հունաբան դպրոցի բառակազմական կաղապարներով բազմաթիվ բառեր, որոնք գործածել է *խորենացին*, պահպանել են իրենց կենսունակությունը նաև այսօր: Այդ բառերից կարելի է հիշատակել՝ *առարկութիւն, առընթեր, արտասահման, արտասանութիւն, բաղդատել, գերազանցել* և այլն: Նվազ գործածական են *արտաճառել, արտափայլել* և նման կազմությունները:

խորենացու «Չայոց պատմության» բառային միավորների համեմատությունը V դարի մյուս ինքնուրույն հեղինակների և թարգմանական որոշ ստեղծագործությունների բառապաշարի հետ մի կողմից բացահայտում է վերջիններիս հետ ունեցած մերձավորության աստիճանը, մյուս կողմից՝ *խորենացու* երկի արժեքը՝ նշված ժամանակաշրջանի հայերենի բառապաշարի հարստությունը ներկայացնելու առումով: Նվազագույն մերձավորությունն նկատվում է մի կողմից *խորենացու*, մյուս կողմից՝ Կորյունի, Եզնիկի և Եղիշեի բառապաշարի միջև, որ բացատրվում է վերջիններիս ստեղծագործությունների ծավալի փոքրությամբ և *խորենացու* երկի համեմատ ունեցած ժանրային

տարբերություններով: Թարգմանական երկերից զույգ համընկնումները նվազագույնն են «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» հետ, թեև այդ երկի թարգմանությունը մեծ հավաստիությամբ հայ բանասիրության մեջ վերագրվում է Խորենացուն: Այստեղ զույգ հանդիպումների նվազագույն քանակը թերևս կարելի է մեկնաբանել ժանրային և թեմատիկ մեծ տարբերություններով: «Հայոց պատմության» բառապաշարի հետ առավելագույն մերձավորությունն ցուցաբերում են ինքնուրույն ստեղծագործություններից Ղազար Փարպեցու «Հայոց պատմությունը», իսկ թարգմանական երկերից «Պիտոյից գիրքը»: Այս երևույթը կարելի է բացատրել նշված երեք երկերի հեղինակների՝ միևնույն դպրոցին պատկանելու հանգամանքով, ինչպես նաև «Պիտոյից գրքի» ազդեցությամբ ինչպես Խորենացու, այնպես էլ Փարպեցու վրա: Հայտնի է նաև, որ Փարպեցին իր «Պատմությունը» շարադրելիս օգտվել է Խորենացու բնագրից՝ որպես սկզբնաղբյուրից: «Պիտոյից գրքի» հետ Խորենացու երկի բառապաշարի առավել մերձավորության բացահայտումը հետագա բանասիրական հետազոտությունների հետ միասին կարող է լույս սփռել ճարտասանական այդ երկի հայերեն բնագրի ստեղծման հանգամանքների վրա: «Պիտոյից գրքից» հետո ըստ քանակի երկրորդ տեղում են Աստվածաշնչի և Խորենացու բառապաշարի միավորների զույգ հանդիպումները: Դրանք բացի մեծ քանակից բնորոշվում են նաև բազմազանությամբ, սրանց մեջ հանդիպում են կյանքի տարբեր բնագավառների առարկաների, երևույթների, գործողությունների անվանումներ: Սա բացատրվում է Աստվածաշնչի բովանդակության հարստությամբ, նրա մեջ տարբեր բնույթի ծավալուն տեքստերի առկայությամբ: Մյուս կողմից՝ Աստվածաշունչը եղել է Խորենացու հիմնական սկզբնաղբյուրներից մեկը: Այն բազմակողմանիորեն օգտագործվել է ոչ միայն Խորենացու, այլև այդ ժամանակաշրջանի բոլոր հեղինակների կողմից և խոր ազդեցությունն թողել նրանց վրա թե՛ գաղափարախոսական, թե՛ հոգևոր ու մշակութային, թե՛ լեզվական առումով:

Խորենացու բառապաշարի միավորների մեր կատարած համեմատական քննությունից պարզվում է, որ բառերի բավականին ստվար մի խումբ (1010 բառ) զուգահեռ գործածությունն չի ունեցել մեր նշած սկզբնաղբյուրների մեջ և ՆՅԲ-ում բերվում է միայն ուշ շրջանի հեղինակների հղումներով: Իսկ այդ բառախմբի մեջ էլ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն բառամիավորները, որոնք բերված են միայն Խորենացուց քաղված բնագրային վկայություններով: Նշված բառամիավորների քանակն է 208, որոնցից մի քանիսը, անկասկածաբար, Խորենացու ստեղծած հեղինակային նորաբանություններից են, ինդպես՝ *արքայամանուկ*, *գահարար*, *գեղեցկադիմակ*, *դատարկակաց*, *երկնադէզ*, *իրականութիւն*, *կարկաչահոսութիւն*, *հեղուտուած*, *միազլուխ*, *յատկանձնակաց*, *յիշատակումն*, *ործաքարեայ*, *պատերազմողական*, *սաստկակառոյց*,

տափակաքիթ, բայերից՝ ամուսնաւրել, բազմամարդացուցանել, կայծակնաճաճան-
չեցուցանել, դիւրածել, ետեղագրել, ընդդիմակայել, ընթերցասիրել, կուսակցել,
հապճեպել, վսեմանալ, փոխանակաբանել և այլն, **-ութիւն** ածանցով՝ աշխարհակալու-
թիւն, աւարտաբանութիւն, դիպածութիւն, դիւցազներգութիւն, ետեղապահութիւն,
ժահադիմութիւն, համառօտասիրութիւն, հանճարաբանութիւն, ճշմարտապատմութիւն,
հոգւոցհանութիւն, ողջաբանութիւն, վերջակացութիւն և այլն:

Այսպիսով, Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի վիճակագրական
քննությունը և համեմատությունը այլ սկզբնաղբյուրների բառապաշարի հետ ի հայտ է
բերում պատմահոր բառագործածությունների ճոխությունը, հարստությունը և բազմա-
զանությունը, որի մասին վկայում են մեկ անգամ կիրառված բառերի առատությունը
(ամբողջ բառապաշարի կեսից ավելին), V դարի լեզվավիճակին հատուկ բառակազ-
մական բազմազան կաղապարների և ենթակաղապարների իրացումը, ինչպես նաև
միայն Խորենացու երկուն վկայված բառամիավորների զգալի քանակը: Համեմատու-
թյունը ՆՅԲ-ի բառացանկի հետ բացահայտում է բառերի մի խումբ, որոնք արձանագրված
չեն ՆՅԲ-ում և պետք է տեղ գտնեն հետագայում ստեղծվելիք՝ գրաբարի բառարանների
մեջ, որպես հին հայերենի բառազանձի անկապտելի մաս:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Ն.Ակինյան, Ղևոնդ Երեց ու մովսես Խորենացի, Վիեննա, 1930, էջ 187:

² Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», Ներածություն, Եր., 1940, էջ LIX-LX:

³ Ստ.Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Եր., 1940, էջ 81:

⁴ Մ.Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 316:

⁵ Գ.Թոսունյան, Մովսես Խորենացու ասույթները, Եր., 1991:

⁶ Վ.Առաքելյան, ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջք 174-190:

⁷ Հմմտ. Օ.Խաչատրյան, ճարտարապետական և շինարարական տերմինները Մովսես Խորենացու «Հայոց
պատմության» մեջ, Գիտական աշխատությունների ժողովածու, Երևանի ճարտարապետության և
շինարարության պետական համալսարանի հրատ., հատոր II (22), Եր., 2004:

⁸ Լ.Հովհաննիսյան, Նոր հազկազյան բառարանում չվկայված բառեր 5-րդ դարի ինքնուրույն
գրականությունից, ՊԲՀ, 1990, հ. 2:

⁹ Հմմտ. Բ.Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի» տվյալների
հետ:

¹⁰ Տվյալը քաղել ենք Բ.Ղազարյանի «Հաճախականության բառարանը հայոց լեզվի մինիմում-բառարա-
նի հիմք» աշխատությունից, «Բառագիտության և բառարանագրության հարցեր» ժող., Եր., 1972, էջ 117:

ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Մովսես Խորենացու ստեղծագործական ժառանգությունը մշտապես գտնվել է հայ
բանասիրության ուշադրության կենտրոնում: Հատկապես նրա «Հայոց պատմությունը»

քննության նյութ է ծառայել տարբեր բնագավառների մասնագետների՝ պատմաբանների, աղբյուրագետների, փիլիսոփաների, լեզվաբանների, գրականագետների համար, որոնք տարբեր հայեցակետերով ու նպատակներով զբաղվել են հայ մատենագրության այդ անզնահատելի հուշարձանի ուսումնասիրությամբ: «Պատմության» լեզվաոճական առանձնահատկությունները ևս չեն վրիպել հետազոտողների ուշադրությունից¹:

Ներկայացվող հոդվածի նպատակն է քննել «Հայոց պատմության» բառապաշարի մի յուրահատուկ շերտը, որը կարևոր նշանակություն ունի թե՛ ընդհանրապես գրաբարի բառակազմության, թե՛ պատմահոր հեղինակային ոճի առանձնահատկությունների բացահայտման տեսակետից:

Խորենացու բառապաշարի մեր կատարած վիճակագրական քննությունը պարզել է, որ նրա բառագործածությունների ընդհանուր թվի մեջ բայերը զգալի քանակ են կազմում՝ համադրական և հարադրական կազմությունները միասին 27,7%: Սա բավականին բարձր ցուցանիշ է, եթե համեմատենք Պ.Պողոսյանի բերած տվյալների հետ (գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ 9%, իսկ գեղարվեստական խոսքում 18-19%)²: Խորենացու լեզվում բայերի այդպիսի առատությունը մի կողմից պայմանավորված է նրա երկի ժանրային առանձնահատկություններով՝ պատմական իրադարձությունների, դեպքերի, անցքերի, գործողությունների նկարագրությամբ, իսկ մյուս կողմից՝ հեղինակի լեզվի անհատական գծերով, հատկապես երկխոսությունների առատությամբ, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի մեջբերումներով և այլն: Խորենացու երկում բայերի գերակշիռ հաճախականությունը աչքի է ընկնում նաև այն դեպքում, երբ այն համեմատում ենք ընդհանրապես 5-րդ դարում կիրառված բաղադրյալ բառերի մեջ բայերի հարաբերական տոկոսի հետ (18,8%՝ 13,3%-ի դիմաց)³: Այս տեսակետից տեղին է Պ.Պողոսյանի եզրահանգումը հեղինակների ոճական առանձնահատկությունների մասին, որ հենվում է լեզվական գործածության սուբյեկտիվ ցուցանիշների վրա՝ «շնորհիվ այն բանի, որ բայն արտահայտում է գործողության գաղափար, առարկաների հարաբերություններ, այն խոսքին տալիս է շարժունություն, կյանք ու կենդանություն»⁴:

Խորենացու բառապաշարի ինքնատիպությունը և նրա հեղինակային ոճի անհատականությունը ի հայտ են գալիս և հարադրավոր բայերի գործածության մեջ, որոնց

¹ Նշենք դրանցից միայն մի քանիսը՝ *Մանանդյան Հ.*, Մովսես Խորենացու բառապաշարը, Երևան, 1935, *Արմեն Հրանտ*, Խորենացին և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, ՊԲՀ, 1969, 1, *Սոսքեյան Վ.Դ.*, Խորենացու լեզուն և ոճը, ՊԲՀ, 1975, 2, *Սոսքեյան Վ.Դ.* Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, *Ջահուկյան Գ.Բ.* Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981, *Սուրադյան Գ.Ս.*, Մովսես Խորենացու «Պատմության» լեզվի հունաբան շերտը, ՊԲՀ, 1993, 1-2: *Համբարձումյան Վ.Գ.*, Մովսես Խորենացու պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, 1995 ևն:

² Հմմտ. *Պ.Պողոսյան*, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1994:

³ Տես *Լ. Հովսեփյան*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 358:

⁴ *Պ.Պողոսյան*, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1994, էջ 230:~

հարաբերական տոկոսը նույնպես բավականաչափ մեծ է, թեև զիջում է համադրական կազմություններին (18,8% և 8,9% համապատասխանաբար):

Խորենացու երկում, ինչպես և ընդհանրապես գրաբարում, բայական հարադրությունները ներկայացված են կառուցվածքային տարբեր կաղապարներով: Բայական հարադրությունների բաղադրիչներից մեկը, ինչպես գիտենք, որևէ բայ է, իսկ մյուսը որևէ այլ խոսքի մաս (պայմանականորեն կոչում ենք անվանական, թեև որոշ դեպքերում կարող են հանդես գալ նաև այլ՝ սպասարկու խոսքի մասեր): Կառուցվածքային կաղապարները դասակարգելիս մենք նկատի ունենք անվանական (ոչ բայական) մասի զանազան արտահայտությունները: Դրանք կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի և ունենալ նաև համապատասխան քերականական ձևավորում: Այդ ձևավորումը անունների դեպքում հանգում է տարբեր թեք հոլովածների և նախդրավոր կազմությունների: Անշուշտ հարադրությունների ճնշող մեծամասնության մեջ անվանական հարադիրը հանդես է գալիս ուղիղ ձևով (ուղիղ ձև ենք համարում նաև եզակի հայցական հոլովածը առանց *զ* նախդրի, քանի որ հայցականի հոլովական իմաստը հարադրավոր բայական կազմություններում շատ դեպքերում մթագնած է): Հարադիրների թեք հոլովները սովորաբար ձևավորված են լինում տարբեր նախդիրներով: Պետք է ասել, որ հոլովածների կիրառության մեջ նկատելի է քանակական մեծ անհավասարություն: Բացարձակ գերակշռություն ունի հայցական հոլովը տարբեր նախդիրներով, որ կարելի է բացատրել բայերի խնդրառական ռանձնահատկությունների արտացոլումով, իսկ մյուս հոլովածները անհամեմատ սակավ են հանդես գալիս:

Բերենք Մովսես Խորենացու երկում կիրառված բայական հարադրությունների կառուցվածքային կաղապարները ըստ տարբեր հոլովածների և նախդիրների:

Կաղապարների իրացումները պարզված են Խորենացու տեքստի և նրա հիման վրա կազմված համաբարբառի տվյալների հիման վրա՝ համատարած ընտրանքի սկզբունքով: Որպես բնագրային վկայություններ յուրաքանչյուր կաղապարի համար բերում ենք միայն մեկ-երկու տիպական նախադասությունների օրինակներ:

1. Անվանական հարադրի տրական հոլոված

ա) առանց նախդրի՝ *սրոյ մատնել*, օրինակ՝ *իսկ Վաղես ... բացէ ի բաց արտասահմանել զնա հրամայէ, և սրոյ զամենայն պատանդսն մատնել* (293) [Բայց Վաղեսը ... ուղղակի հրամայեց նրան աքսորել և բոլոր պատանդներին սրի անցկացնել (190)]⁵:

բ) *ընդ* նախդրով՝ *առնել ընդ անձին*, օրինակ՝ *Ջայս ամենայն աղէտս թշվառութեանց լուեալ Արշակայ՝ սառուղաբար արար ընդ անձին իւրում* (301) [Արշակը

⁵ Թարգմանությունը ըստ *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, Հայաստան, 1990 թ.* հրատարակության:

բոլոր այս թշնամություններն ու աղետները լսելով՝ Սավուղի պես վերջ դրեց իր կյանքին (195)]:

գ) *ի/յ* նախդրով (որոշ դեպքերում այս կառուցվածքը ձեռք է բերում ներգոյական հոլովի արժեք)՝ *յանձին ունել*, օրինակ՝ ... *առ այսոքիւք և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կայան* (10) [սրա հետ միասին գուցե նաև փափագեմք այն մարդկանց իմաստության, որոնք այսպիսի աշխատանք հանձն առան (8)], *յաւարի առնուլ*, օրինակ՝ ...*որք ընդ Ասորեստան յարձակեցան, և ի փախուստ զՇապուհ դարձուցին, յաւարի զամենայն երկիրն առեալ* (234) [...որոնք Ասորեստանի վրայով հարձակվեցին, Շապուհին փախստական դարձրին և ավերեցին ամբողջ երկիրը (152)]:

Բերենք նաև մի շարք հարադրություններ առանց բնագրային օրինակների՝ *յինքեան կեալ, ի բանտի դնել, ի գինուջ գեղխել, ի դիմի հարկանել, ի թագստեան լինել, ի խիթի լինել, ի կասկածի լինել, ի հիացման լինել, ի մտի դնել, ի պահեստի լինել*. Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *դնել ի բանտի, դնել ի մտի, կալ ի հանդարտութեան, ունել ի մտի*:

2. Անվանական հարադրի հայցական հոլովածև

ա) առանց նախդրի, հոգնակի թվով՝ *արշաւանս առնել, աւուրս առնել, թիկունս առնել*, օրինակ՝ *Բայց թիկունս առնելով Երուանդայ զՅոռնայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս* (164) [Բայց Երվանդը Վեսպասիանոսի և Տիտոսի թագավորության ժամանակ Միջագետքը հռոմեացիներին թողնելով՝ նրանց իրեն թիկունք դարձրեց ... (165)], *հարկանել փողս*, օրինակ՝ ... *ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զկնի կուսանք ձայնարկուք սևազգեստք և աշխարող կանայք* (191) [...ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի, առջևից պղնձե փողեր էին հնչեցնում (124)]:

Վկայված են նաև *թիկունս դարձուցանել, խնդիրս առնել, խօսս առնել, ձեռս տալ, միտս ունել, պատճառս տալ, պաղատանս մատուցանել, պատրանս մատուցանել, սատարս տալ, փախստեայս արկանել* նույնատիպ հարադրությունները:

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *առնել բարիս, առնել հարսանիս, գործել չարիս*,

բ) *առ* նախդրով, եզակի թվով՝ *առ ձեռն ունել*, օրինակ՝ *Եւ վասն զի ի ժամուն յայնմիկ առ ձեռն ուներ զբարկութիւն՝ հրամայեաց զՏրդատ եղբայր նորա, զհայր մանկանն Գնելոյ, սպանանել...* (281) [Եվ որովհետև նա բարկացած դրության մեջ էր, հրամայեց սպանել Արշակի եղբորը՝ Տրդատին, մանուկ Գնելի հորը... (182)], *առ ոչինչ*

համարել, օրինակ՝ Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա՝ միայն ակնածէին ի Սուրացենէն Արգամայ (170) [նրա զորքերի բազմությանը նշանակություն չտալով, միայն Սուրացյան Արգամից էին ակնածուն (109)]:

առ նախդրով, հոգնակի թվով՝ *առ սուտս ունել*, օրինակ՝ *Նա ասէ. «Ոչ առ սուտս ունիմ զծեզ, իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց և բազում անգամ յանդիմանեալ ուրացաւ* (346) [Ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է (228)]:

գ) *զ* նախդրով, եզակի թվով՝ *զբողոք բառնալ*, օրինակ՝ *Որոց եկեալ առ մեծն Սահակ՝ զբողոք բարձիմ, հրավիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց, չարախօսել առ արքայն Պարսից ...*(346) [Նրանք եկան մեծ Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու (228)]:

Կան նաև՝ *զհոգին աւանդել, զմուտն առնել, զփորձ առնուլ*.

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *ամբառնալ զծեռն, առնել զհաշտութիւն, աւանդել զհոգին, խնդրել զվրէժ, խնդրել զքէն, մատուցանել զահն, պահել զակն, փչել զոգի,*

զ նախդրով, հոգնակի թվով՝ *վճարել զկեանս, վճարել զկենցաղս,*

դ) *ընդ* նախդրով՝ *ընդ առաջ զնալ*, օրինակ՝ *և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղիսիւն ընդառաջ զնաց նմա մեծաւ պատարագաւ* (223) [Պարսից զորքերի հետ չդարձավ Պարսկաստան, այլ իր բոլոր աղիտով Տրդատին ընդառաջ զնաց մեծ ընծաներով (145)]:

Այլ օրինակներ *ընդ* նախդրով հարադրություններից՝ *ընդ առաջ ելանել, ընդ առաջ լինել, ընդ կրուկն դառնալ, ընդ մէջ անկանել, ընդ մէջ անցանել, ընդ ցից հանել:*

ե) *ի/յ* նախդրով, եզակի թվով՝ *ի բուռն ածել/առնուլ/արկանել*, օրինակ՝ *Որ ինչ ջան երուանդայ վասն ի բուռն ածելոյ զմանուկն Արտաշէս* (163) [Ինչ ջանքեր գործ դրեց երվանդը՝ Արտաշեսին իր ձեռքը օգնելու համար (104)], *և ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ՝ առնու ի նմանէ զօր յօգնականութիւն ինքեան* (133) [Այս կերպով Արտաշէզին հաշտեցնելով նրանցից օգնական զորք է խնդրում (85)]:

Այլ վկայություններ՝ *ի գերութիւն ըմբռնել/վարել, ի գործ արկանել, ի խաչ ելանել, ի կատար հասանել, ի կատարումն աւարտել, ի կարգ ընկենուլ, ի հաշտութիւն ածել, ի հասակ հասանել, ի հաւանութիւն գալ, ի ձեռն առնուլ/գալ/մատնել/տալ, ի ճանապարհ ելանել, ի միտ առնուլ, ի մոռացումն գալ, ի յանգ ելանել, ի շեշտումն անկանել, ի չափ հասանել, ի չու արկանել, ի պատրաստութիւն մտանել, ի սատարութիւն ունել, ի սուտ հանել, ի վերայ հասանել, ի տապակի կացուցանել, ի փախուստ դառնալ/դարձուցանել/յորդորել/շրջել, յաղերս անկանել, յանկ ելանել, յանձն առնել/առնուլ, յապուշ*

դառնալ, յաւեր դարձուցանել, յոտն կալ, յուղարկ երթալ, յուղղութիւն ածել. բայական անդամի նախադաս դիրքով՝ ածել ի կատարումն, առնուլ յանձն, գալ յուղղութիւն, ելանել ի խնդիր, թափել յինքն, վարել ի գերութիւն,

ի/յ նախդրով, հոգնակի թվով՝ ի գարմանս ածել, ի թիկունս ընկենուլ/հասանել, ի լսելիս հասանել, ի կալանս ընթռնել, ի հակառակս մտանել, ի կամս թողուլ, ի կասկածանս անկանել, ի ձեռս անկանել/տալ, ի միտս գալ/հասանել/ունել, ի չքմեղս լինել, յակճիռս կալ, յարբունս հասանել, յարտասուս արկանել, յիրեարս գալ. բայական հարադրի նախադաս դիրքով՝ արկանել/տալ ի ձեռս:

Բերենք մեկ-երկու բնագրային օրինակներ՝ նախադասութիւններով՝ *Բայց յարբունս հասակի հասեալ մանկանն՝ փեսայացուցանէ հաւատացեալ ոմն այր, որուն անունն էր Դաւիթ (220) [Երբ մանուկը չափահաս դարձավ, մի հավատացեալ մարդ՝ Դավիթ անունով, նրան փեսայացրեց (143)], նենգութեամբ խորհեալ արկանել զնա ի ձեռս բարբարոսաց (235), յանձն առեալ արքային արքայից՝ տալ ի ձեռս Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ատրեստանի և զզորս Ատրպատականի (168):*

3. Անվանական հարադրի բացառական հոլովածև

ի նախդրով, եզակի թվով՝ ի քնոյն լինել. օրինակ՝ *Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէ ըստ սովորութեան կարգին ի ժամ խորհրդականութեանն (75) [Ուստի քնից վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սովորական կարգով (48)]:*

բայական հարադրի նախադաս դիրքով՝ *փոխել յաշխարհէս, վճարել/լուծանել ի կենցաղոյս,*

ի նախդրով, հոգնակի թվով (բայական հարադրի նախադաս դիրքով)՝ *լուծանել ի կենաց:*

4. Անվանական հարադրի գործիական հոլովածև

ա) առանց նախդրի՝ *խեթիւ հայել. օրինակ՝ ընդ որում խեթիւ հայէր Արշակ (312):* բայական անդամի նախադաս դիրքով՝ ածել սուսերաւ, անցանել բանիւ, անցանել խրատու,

բ) ընդ նախդրով, եզակի թվով՝ *ընդ հարկաւ առնել/արկանել, ընդ ակամբ հայել, օրինակ՝ ընդ ակամբ հայէր ի նա, խորհելով չարիս (306) [Նրան խեթ աչքով էր նայում, մտածում էր վնասել (199)]:*

բայական անդամի նախադաս դիրքով՝ հարկանել/մտանել ընդ հարկաւ,

գ) գ նախդրով՝ *զմտաւ ածել (նաև՝ ածել զմտաւ), օրինակ՝ զմտաւ ածէր Տիգրան յաղագս քեռն իւրոյ սիրելւոյ (81) [Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ (Տիգրանուհու) մասին (51)]:*

Բայական հարադրությունների մեջ ոչ բայական բաղադրիչներ կարող են լինել ոչ միայն անվանական խոսքի մասերը, (գոյական, ածական, նաև դերանուն), այլև մակբայները: Խորենացու երկում վկայված են մակբայական հարադրով բազմաթիվ կազմություններ՝ *արտաքս ընկենուլ/սահմանել, զհետ երթալ/ընթանալ/կրթել/մտանել/յղել, ընդդեմ դիպել/երթալ/կալ, մօտ հասանել, յանդիման բերել/կացուցանել*. օրինակ՝ *և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել* (11) [և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել (8)]:

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ արկանել առաջի, *զալ զհետ, ելանել արտաքս, կալ ընդդեմ*, օրինակ՝ *և ոչ բովանդակ զբանին պայծառութիւն անհաւատիցն արկանել առաջի յայսպանունն* (351) [և ոչ թե պայծառ դավանությունը ամբողջովին գցեց անհավատների առաջ ձաղկելու համար (231)]:

Սակայն ավելի շատ են այն կազմությունները, որտեղ մակբայական հարադիրը ձևավորված է *ի/յ* նախդրով և տարածական իմաստ ունեցող բառով: Դրանք են՝

ի բաց ածել/բառնալ/զնալ/դառնալ/դարձուցանել/դնել/ընկենուլ/թողուլ/կալ/կտրել/հատել/մերկանալ/պուղել/վարել/տալ/քեցել, բայական հարադրի նախադաս դիրքով՝ *առնուլ/թողուլ/կոչել ի բաց*

ի դէպ ելանել,

ի մէջ անցանել/արկանել/բերել. բայական անդամի նախադասությամբ՝ *զալ ի մէջ,*

ի մօտ հասանել,

ի ներքս ածել/անկանել/ընթանալ/մտանել,

ի վայր բերել/իջուցանել/կործանել,

ի վերայ բերել/դնել/հասանել/, նաև բայական հարադրի նախադաս դիրքով՝

զալ/դիմել/ելանել/խաղալ/հասանել/յառնել ի վերայ,

յառաջ անցանել/մատուցանել/վարել:

Բնագրային օրինակներ՝ *Որ և Կիրոսի աջակցեալ, զմարացն ի բագ բառնայով զիշխանութիւնն* (71) [և Կիրոսին աջակից եղավ մարաց իշխանությունը տապալելու (46)], *այլև զգունդն զոր էառ ի քէն ՝ զհետ յղեալ կոչեցեր ի բագ* (276) [և այն գունդը, որ քեզանից առավ (Յուլիանոսը), հետևից մարդ ուղարկելով՝ հետ կանչեցիր (177)]:

Ինչպես երևում է օրինակներից, բայական հարադրությունները հիմնականում երկանդամ են: Նախդիրներն այստեղ առանձին բաղադրիչ չենք համարում, քանի որ դրանք մտնում են հոլովների ձևավորման մեջ: Խորենացու երկում վկայված են նաև եռանդամ, մեկ դեպքում՝ քառանդամ բայական հարադրություններ, որոնք փաստորեն դարձվածքի արժեք ունեն: Այստեղ առանձին բաղադրիչներ են համարված նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը: Այս հարադրություններում ոչ բայական անդամները

միմյանց նկատմամբ գտնվում են հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական հարաբերության մեջ (ինչպես՝ *առնել թիկունս օգնականութեան, խոյզ խնդրոյ առնել, հեղումն արեան առնել, մտաց լծակաւ կշռել, յարբունս հասակի հասանել, չափ դնել բանի*), իսկ բայական անդամի հետ արտահայտում են զանազան խնդրային և պարագայական հարաբերություններ՝ մեծ մասամբ նախդրավոր կառույցներով ձևավորված, ինչպես՝ *այր զարամբ ելանել, արկանել զանձն ի քանս, զոգի ի բաց դնել, կործան յերկիր զարկուցանել, ուշ ի կուրծս անկանել, պատճառս ի վերայ դնել/յուզել, պետ յանձին ունել, ցիր դիաթաւալ կացուցանել, փոյթ յանձին ունել, փոյթ ընդ փոյթ լինել*: Քառանդամ բայական հարադրությունն է՝ *խոյզ խնդրոյ առաջի արկանել*:

Բերենք բնագրային օրինակներ՝ ... *առ որ առաքեաց Աբգար երկուս ի գլխավորաց իւրոց ... ի քաղաքն Բեթքուրին... առնել զնա թիկունս օգնականութեան* (148) [Աբգար իր գլխավորներից երկուսին ուղարկեց նրա մոտ Բեթքուրին քաղաքը... նրա օգնությունն ու պաշտպանությունը խնդրելու (95)], *Վասն որոյ էդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Յայոց լեզուիս, և արկեալ զանձն ի քանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր* (317) [Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր (207)]:

Եթե ուշադրության առնենք բայական հարադրությունների կաղապարների բառային իրացումները, կտեսնենք, որ բայական հարադրի դերում առավելապես գործածվում են *առնել* և *լինել* բայերը, որոնցով էտրենացու երկուն հանդիպում են մի քանի տասնյակ կազմություններ: Բերենք մի շարք օրինակներ՝ *ագդ առնել, ակնարկութիւն առնել, աշխատ առնել, ապաստան առնել, ապաւեն առնել, առաջի առնել, ասպատակ առնել, արժանի առնել, կին առնել, կոծ առնել, հալածական առնել, հարկ առնել, հրձիգ առնել, ձերբակալ առնել, մարտ առնել* և այլն. լինել բայով՝ *ականատես լինել, ակնկառոյց լինել, անձնատուր լինել, աշխատ լինել, լուռ լինել, լսող լինել, խարդաւանակ լինել, խափան լինել, հեղձամահ լինել, հետահաս լինել, հնազանդ լինել, հրկէզ լինել, ձեռնտու լինել, մարթ լինել, միջամուխ լինել* և այլն:

Բնագրային օրինակներ՝ *Եւ նոյն հետայն փոյթ ընդ փոյթ ագդ առնէ Փիլիպպոսի կայսէր Հռովմայեցւոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով* (208) [Եվ իսկույն շտապով ծանուցանում է հռոմայեցիների Փիլիպպոս կայսրին, նրանից օգնություն խնդրելով (134)], *Մի՛ որ անհաւատասցի, քանզի և մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի* (120) [Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն դիվանը (78)]:

Ըստ գործածման հաճախականության հարադրավոր կազմությունների բայական բաղադրիչների մեջ հաջորդ տեղում է *տալ* բայը: «Հայոց պատմության» մեջ վկայ-

ված են նշված բայով հետևյալ հարադրությունները՝ *թոյլ տալ, խոյս տալ, խրատ տալ, հրաման տալ, ծեռն տալ, (ծեռս տալ), ճակատ տալ, պատասխանի տալ, պատուէր տալ, սատարս տալ, տեղի տալ*. հանդիպում են նաև կիրառություններ *տալ* բայի առաջադաս դիրքով՝ *տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրէժ*. օրինակ՝ *Իսկ քաջին Տրդատայ երազապէս և բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս, ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր գյաղթութիւնն* (225) [Իսկ քաջ Տրդատը արագ-արագ բազմաթիվ ճակատամարտեր տալով նախ Հռոմուն և ապա Պարսկաստանում՝ ինքն անձամբ տանում էր հաղթությունը (146)]:

Մյուս բայերով վկայված կազմությունները քանակով զիջում են վերը նշվածներին, թեև ի հայտ են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և բավականին լայն զուգորդելիություն, ինչպես օրինակ՝ *ակն ածել, ակն ունել, աշխատութիւն կրել, առաջի արկանել, առաջի դնել, բուռն հարկանել, գայթակղութիւն արկանել, գերի ածել, գերի վարել, դադառումն առնուլ, դարան գործել, զօր յարուցանել, թագ կապել, թափուր մնալ, թէկն ածել, խնամ տանել, կասկած ունել, կին առնուլ, հալածական արկանել, հանգիստ առնուլ, հոգ տանել, ձայն արկանել, ճախր առնուլ, ճաշ գործել, մարտ դնել և բազմաթիվ այլ կիրառություններ:*

Ինչ վերաբերում է բայական հարադրությունների բաղադրիչների շարադասությանը, ապա ինչպես երևաց հարադրավոր բայերի կառուցվածքային կաղապարների քննությունից, բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև Խորենացին հաճախ գործածում է և նախադաս բայերով հարադրություններ՝ խոսքի ոճավորման կամ նախադասության տրամաբանական շեշտի հետ կապված նկատառումներով: Կարելի է նշել հետևյալ օրինակները՝ *առնել աշխարհագիր, առնել արժանի, առնել բաշխումն, առնել ընդունելութիւն, առնել հարցումն, առնել քննութիւն, առնուլ սկիզբն, դնել ունկն, կապել թագ, հարկանել սպասավորութիւն, ունել պահ, ունել պատճառ, տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրէժ* և այլն:

Հարադրավոր բայերի կիրառությունները Խորենացու երկին հաղորդում են ոճական հարստություն և բազմազանություն, ավելի աշխույժ և կենդանի են դարձնում շարադրանքը: Դրանց հետագա ուսումնասիրությունը բնագրային օրինակների հիման վրա կբացահայտեն նշված կառույցների ոճական կիրառությունների բնորոշ առանձնահատկությունները և «Պատմության» լեզվի պատկերավորման համակարգում նրանց խաղացած դերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՅԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Մովսես Խորենացու ստեղծագործական ժառանգությունը մշտապես գտնվել է հայ բանասիրության ուշադրության կենտրոնում: Հատկապես նրա «Հայոց պատմությունը» քննության նյութ է ծառայել տարբեր բնագավառների մասնագետների՝ պատմաբանների, աղբյուրագետների, փիլիսոփաների, լեզվաբանների, գրականագետների համար, որոնք տարբեր հայեցակետերով ու նպատակներով զբաղվել են հայ մատենագրության այդ անգնահատելի հուշարձանի ուսումնասիրությամբ: «Պատմության» լեզվաոճական առանձնահատկությունները ևս չեն վրիպել հետազոտողների ուշադրությունից⁶:

Ներկայացվող հոդվածի նպատակն է քննել «Հայոց պատմության» բառապաշարի մի յուրահատուկ շերտը, որը կարևոր նշանակություն ունի թե՛ ընդհանրապես գրաբարի բառակազմության, թե՛ պատմահոր հեղինակային ոճի առանձնահատկությունների բացահայտման տեսակետից:

Խորենացու բառապաշարի մեր կատարած վիճակագրական քննությունը պարզել է, որ նրա բառագործածությունների ընդհանուր թվի մեջ բայերը զգալի քանակ են կազմում՝ համադրական և հարադրական կազմությունները միասին 27,7%: Սա բավականին բարձր ցուցանիշ է, եթե համեմատենք Պ.Պողոսյանի բերած տվյալների հետ (գիտական խոսքում և հրապարակախոսության մեջ 9%, իսկ գեղարվեստական խոսքում 18-19%)⁷: Խորենացու լեզվում բայերի այդպիսի առատությունը մի կողմից պայմանավորված է նրա երկի ժանրային առանձնահատկություններով՝ պատմական իրադարձությունների,

⁶ Նշենք դրանցից միայն մի քանիսը՝ *Մանանդյան Հ.*, Մովսես Խորենացու բառապաշարը, Երևան, 1935, *Արմեն Հրանտ*, Խորենացին և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, ՊԲՀ, 1969, 1, *Առաքելյան Վ.Դ.*, Խորենացու լեզուն և ոճը, ՊԲՀ, 1975, 2, *Առաքելյան Վ.Դ.* Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, *Ջահուկյան Գ.Բ.* Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981, *Մուրադյան Գ.Ս.*, Մովսես Խորենացու «Պատմության» լեզվի հունաբան շերտը, ՊԲՀ, 1993, 1-2, *Համբարձումյան Վ.Գ.*, Մովսես Խորենացու պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, 1995 ևն:

⁷ Հմմտ. Պ.Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1994:

դեպքերի, անցքերի, գործողությունների նկարագրությամբ, իսկ մյուս կողմից՝ հեղինակի լեզվի անհատական գծերով, հատկապես երկխոսությունների առատությամբ, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի մեջբերումներով և այլն: Խորենացու երկում բայերի գերակշիռ հաճախականությունը աչքի է ընկնում նաև այն դեպքում, երբ այն համեմատում ենք ընդհանրապես 5-րդ դարում կիրառված բաղադրյալ բառերի մեջ բայերի հարաբերական տոկոսի հետ (18,8%՝ 13,3%-ի դիմաց)⁸: Այս տեսակետից տեղին է Պ.Պողոսյանի եզրահանգումը հեղինակների ոճական առանձնահատկությունների մասին, որ հենվում է լեզվական գործածության սուբյեկտիվ ցուցանիշների վրա՝ «շնորհիվ այն բանի, որ բայն արտահայտում է գործողության գաղափար, առարկաների հարաբերություններ, այն խոսքին տալիս է շարժունություն, կյանք ու կենդանություն»⁹:

Խորենացու բառապաշարի ինքնատիպությունը և նրա հեղինակային ոճի անհատականությունը ի հայտ են գալիս և վերլուծական կառուցվածքի (հարադրավոր) բայերի գործածության մեջ, որոնց հարաբերական տոկոսը նույնպես բավականաչափ մեծ է, թեև զիջում է համադրական կազմություններին (18,8% և 8,9% համապատասխանաբար):

Խորենացու երկում, ինչպես և ընդհանրապես գրաբարում, բայական հարադրությունները ներկայացված են կառուցվածքային տարբեր կաղապարներով: Բայական հարադրությունների բաղադրիչներից մեկը, ինչպես գիտենք, որևէ բայ է, իսկ մյուսը որևէ այլ խոսքի մաս (պայմանականորեն կոչում ենք անվանական, թեև որոշ դեպքերում կարող են հանդես գալ նաև այլ՝ սպասարկու խոսքի մասեր): Կառուցվածքային կաղապարները դասակարգելիս մենք նկատի ունենք անվանական (ոչ բայական) մասի զանազան արտահայտությունները: Դրանք կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի և ունենալ նաև համապատասխան քերականական ձևավորում: Այդ ձևավորումը անունների դեպքում հանգում է տարբեր թեք հոլովածների և նախդրավոր կազմությունների: Անշուշտ հարադրությունների ճնշող մեծամասնության մեջ անվանական հարադիրը հանդես է գալիս ուղիղ ձևով (ուղիղ ձև ենք համարում նաև եզակի հայցական հոլովածը առանց *զ* նախդրի, քանի որ հայցականի հոլովական իմաստը վերլուծական բայական կազմություններում շատ դեպքերում մթագնած է): Հարադիրների թեք հոլովները սովորաբար ձևավորված են լինում տարբեր նախդիրներով: Պետք է ասել, որ հոլովածների կիրառության մեջ նկատելի է քանակական մեծ անհավասարություն: Բացարձակ գերակշռություն ունի հայցական հոլովը տարբեր նախդիրներով, որ կարելի է բացատրել բայերի խնդրառական առանձնահատկությունների արտացոլումով, իսկ մյուս հոլովածները անհամեմատ սակավ են հանդես գալիս:

⁸ Տես *Լ. Չովսեփյան*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 358:

⁹ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1994, էջ 230::

Բերենք Մովսես Խորենացու երկում կիրառված բայական հարադրությունների կառուցվածքային կաղապարները ըստ տարբեր հոլովածների և նախդիրների:

Կաղապարների իրացումները պարզված են Խորենացու տեքստի և նրա հիման վրա կազմված համաբարբառի տվյալների հիման վրա՝ համատարած ընտրանքի սկզբունքով: Որպես բնագրային վկայություններ յուրաքանչյուր կաղապարի համար բերում ենք միայն մեկ-երկու տիպական նախադասությունների օրինակներ:

1. Անվանական հարադրի տրական հոլոված

ա) առանց նախդրի՝ *սրոյ մատնել*, օրինակ՝ *իսկ Վաղէս ... բացէ ի բաց արտասահմանել զնա հրամայէ, և սրոյ զամենայն պատանդսն մատնել* (293) [Բայց Վաղեսը ... ուղղակի հրամայեց նրան աքսորել և բոլոր պատանդներին սրի անցկացնել (190)]¹⁰:

բ) *ընդ* նախդրով՝ *առնել ընդ անձին*, օրինակ՝ *Ջայս ամենայն աղէտս թշվառութեանց լուեալ Արշակայ՝ սաւուղաբար արար ընդ անձին իւրում* (301) [Արշակը բոլոր այս թշվառություններն ու աղետները լսելով՝ Սավուղի պես վերջ դրեց իր կյանքին (195)]:

գ) *ի/յ* նախդրով (որոշ դեպքերում այս կառուցվածքը ձեռք է բերում ներգոյական հոլովի արժեք)՝ *յանձին ունել*, օրինակ՝ *... առ այսոքիւք և փափագիցենք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կայան* (10) [սրա հետ միասին գուցե նաև փափագենք այն մարդկանց իմաստության, որոնք այսպիսի աշխատանք հանձն առան (8)], *յաւարի առնուլ*, օրինակ՝ *... որք ընդ Ասորեստան յարձակեցան, և ի փախուստ զՇապուհի դարձուցին, յաւարի զամենայն երկիրն առեալ* (234) [... որոնք Ասորեստանի վրայով հարձակվեցին, Շապուհին փախստական դարձրին և ավերեցին ամբողջ երկիրը (152)]:

Բերենք նաև մի շարք հարադրություններ առանց բնագրային օրինակների՝ *յինքեան կեալ, ի բանտի դնել, ի գինուջ զեղխել, ի դիմի հարկանել, ի թագստեան լինել, ի խիթի լինել, ի կասկածի լինել, ի հիացման լինել, ի մտի դնել, ի պահեստի լինել*. Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *դնել ի բանտի, դնել ի մտի, կալ ի հանդարտութեան, ունել ի մտի*:

2. Անվանական հարադրի հայցական հոլոված

ա) առանց նախդրի, հոգնակի թվով՝ *արշաւանս առնել, աւուրս առնել, թիկունս առնել*, օրինակ՝ *Բայց թիկունս առնելով Երուանդայ զՅոռնայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս* (164) [Բայց Երվանդը Վեսպասիանոսի և Տիտոսի թագավորության ժամանակ Միջագետքը հռոմեացիներին թողնելով՝ նրանց իրեն թիկունք դարձրեց ... (165)], *հարկանել փողս*, օրինակ՝ *... ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին և առաջի*

¹⁰ Թարգմանությունը ըստ *Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, քարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, Հայաստան, 1990 թ.* հրատարակության:

պղնծիս հարկանելով փողս, և զկնի կուսանք ձայնարկուք սևազգեստք և աշխարող կանայք (191) [...ամենքը զինված, որպես թե պատրաստվում են պատերազմի, առջևից պղնծե փողեր էին հնչեցնում, իսկ հետևից սևազգեստ այնարկու կույսեր և լալկան կանայք... (124)]:

Վկայված են նաև *թիկունս դարձուցանել, խնդիրս առնել, խօսս առնել, ձեռս տալ, միտս ունել, պատճառս տալ, պաղատանս մատուցանել, պատրանս մատուցանել, սատարս տալ, փախստեայս արկանել* նույնատիպ հարադրությունները:

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *առնել բարիս, առնել հարսանիս, գործել չարիս*,

բ) *առ* նախդրով, եզակի թվով՝ *առ ձեռն ունել*, օրինակ՝ *Եւ վասն զի ի ժամուն յայնմիկ առ ձեռն ուներ զբարկութիւն՝ հրամայեաց զՏրդատ եղբայր նորա, զհայր մանկանն Գնելոյ, սպանանել...* (281) [Եվ որովհետև նա բարկացած դրության մեջ էր, հրամայեց սպանել Արշակի եղբորը՝ Տրդատին, մանուկ Գնելի հորը... (182)], *առ ոչինչ համարել*, օրինակ՝ *Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա՝ միայն ակնածէին ի Սուրացենէն Արգամայ* (170) [նրա զորքերի բազմությանը նշանակություն չտալով, միայն Սուրացյան Արգամից էին ակնածում (109)]:

առ նախդրով, հոգնակի թվով՝ *առ սուտս ունել*, օրինակ՝ *Նա ասէ. «Ոչ առ սուտս ունիմ զձեզ, իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց և բազում անգամ յանդիմանեալ ուրացաւ»:* (346) [Ասաց. «Ձեզ սուտ չեմ հանում, ինքս էլ լսել եմ նրա ցավալի ամոթալի արարմունքները, շատ անգամ հանդիմանել եմ, բայց նա ուրացել է» (228)]:

գ) *զ* նախդրով, եզակի թվով՝ *զբողոք բառնալ*, օրինակ՝ *Որոց եկեալ առ մեծն Սահակ՝ զբողոք բարձիմ, հրավիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց, չարախօսել առ արքայն Պարսից ...*(346) [Նրանք եկան մեծ Սահակի մոտ, բողոք բարձրացրին և նրան էլ հրավիրեցին իրենց օգնելու, որպեսզի (Արտաշիրի վրա չարախոսեն Պարսից թագավորի առաջ... (228)]:

Կան նաև՝ *զհոգին աւանդել, զմուտն առնել, զփորձ առնուլ*.

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ *ամբառնալ զձեռն, առնել զհաշտութիւն, աւանդել զհոգին, խնդրել զվրէժ, խնդրել զքէն, մատուցանել զահն, պահել զակն, փչել զոգի*,

զ նախդրով, հոգնակի թվով՝ *վճարել զկեանս, վճարել զկենցաղս*,

դ) *ընդ* նախդրով՝ *ընդ առաջ գնալ*, օրինակ՝ *և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղիսիւն ընդառաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ* (223) [Պարսից զորքերի հետ չդարձավ Պարսկաստան, այլ իր բոլոր աղխով Տրդատին ընդառաջ գնաց մեծ ընծաներով (145)]:

Այլ օրինակներ ընդ նախդրով հարադրություններից՝ ընդ առաջ ելանել, ընդ առաջ լինել, ընդ կրուկն դառնալ, ընդ մէջ անկանել, ընդ մէջ անցանել, ընդ ցից հանել:

ե) ի/յ նախդրով, եզակի թվով՝ *ի բուռն ածել/առնուլ/արկանել*, օրինակ՝ *Որ ինչ ջան երուանդայ վասն ի բուռն ածելու զմանուկն Արտաշէս (163)* [ինչ ջանքեր գործ դրեց երվանդը՝ Արտաշէսին իր ձեռքը զգելու համար (104)], *և ի հաշտութիւն ածեալ զԱրտաշէզ՝ առնու ի նմանէ զօր յօգնականութիւն ինքեան* (133) [Այս կերպով Արտաշէզին հաշտեցնելով՝ նրանցից օգնական զորք է խնդրում (85)]:

Այլ վկայություններ՝ *ի գերութիւն ըմբռնել/վարել, ի գործ արկանել, ի խաչ ելանել, ի կատար հասանել, ի կատարումն աւարտել, ի կարգ ընկենուլ, ի հաշտութիւն ածել, ի հասակ հասանել, ի հաւանութիւն գալ, ի ձեռն առնուլ/գալ/մատնել/տալ, ի ճանապարհ ելանել, ի միտ առնուլ, ի մոռացումն գալ, ի յանգ ելանել, ի շեշտումն անկանել, ի չափ հասանել, ի չու արկանել, ի պատրաստութիւն մտանել, ի սատարութիւն ունել, ի սուտ հանել, ի վերայ հասանել, ի տապակի կացուցանել, ի փախուստ դառնալ/դարձուցանել/յորդորել/շրջել, յաղերս անկանել, յանկ ելանել, յանձն առնել/առնուլ, յապուշ դառնալ, յաւեր դարձուցանել, յոտն կալ, յուղարկ երթալ, յուղղութիւն ածել*. բայական անդամի նախադաս դիրքով՝ *ածել ի կատարումն, առնուլ յանձն, գալ յուղղութիւն, ելանել ի խնդիր, թափել յինքն, վարել ի գերութիւն*,

ի/յ նախդրով, հոգնակի թվով՝ *ի զարմանս ածել, ի թիկունս ընկենուլ/հասանել, ի լսելիս հասանել, ի կալանս ըմբռնել, ի հակառակս մտանել, ի կամս թողուլ, ի կասկածանս անկանել, ի ձեռս անկանել/տալ, ի միտս գալ/հասանել/ունել, ի չքմեղս լինել, յակճիռս կալ, յարբունս հասանել, յարտասուս արկանել, յիրեարս գալ*. բայական հարադրի նախադաս դիրքով՝ *արկանել/տալ ի ձեռս*:

Բերենք մեկ-երկու բնագրային օրինակներ՝ նախադասություններով՝ *Բայց լարբունս հասակի հասեալ մանկանն՝ փեսայացուցանէ հաւատացեալ ոմն այր, որուն անուն էր Դավիթ (220)* [Երբ մանուկը չափահաս դարձավ, մի հավատացեալ մարդ՝ Դավիթ անունով, նրան փեսայացրեց (143)], *նենգութեամբ խորհեալ արկանել զնա ի ձեռս բարբարոսաց (235), յանձն առեալ արքային արքայից՝ տալ ի ձեռս Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ատրեստանի և զզորս Ատրպատականի (168)*:

3. Անվանական հարադրի բացառական հոլովածև

ի նախդրով, եզակի թվով՝ *ի քնոյն լինել*. օրինակ՝ *Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով ոչ յամէ ըստ սովորութեան կարգին ի ժամ խորհրդականութեանն (75)* [Ուստի քնից վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սովորական կարգով (48)]:

բայական հարադրի նախադաս դիրքով՝ *փոխել յաշխարհէս, վճարել/լուծանել ի կենցաղոյս*,

ի նախդրով, հոգնակի թվով (բայական հարադրի նախադաս դիրքով)՝ *լուծանել ի կենաց*:

4. Անվանական հարադրի գործիական հոլովածն

ա) առանց նախդրի՝ *խեթի հայել*. օրինակ՝ *ընդ որում խեթի հայեր Արշակ (312)*: բայական անդամի նախադաս դիրքով՝ ածել սուսերաւ, անցանել բանիւ, անցանել խրատու,

բ) *ընդ* նախդրով, եզակի թվով՝ *ընդ հարկաւ առնել/արկանել, ընդ ակամբ հայել*, օրինակ՝ *ընդ ակամբ հայեր ի նա, խորհելով չարիս (306)* [Երան խեթ աչքով էր նայում, մտածում էր վնասել (199)]:

բայական անդամի նախադաս դիրքով՝ հարկանել/մտանել ընդ հարկաւ,

գ) *զ* նախդրով՝ *զմտաւ ածել* (նաև՝ *ածել զմտաւ*), օրինակ՝ *զմտաւ ածէր Տիգրան յաղազս քեռն իւրոյ սիրելւոյ (81)* [Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ (Տիգրանուհու) մասին (51)]:

Բայական հարադրությունների մեջ ոչ բայական բաղադրիչներ կարող են լինել ոչ միայն անվանական խոսքի մասերը, (գոյական, ածական, նաև դերանուն), այլև մակբայները: Խորենացու երկում վկայված են մակբայական հարադրով բազմաթիվ կազմություններ՝ *արտաքս ընկենուլ/սահմանել, զհետ երթալ/ընթանալ/կրթել/մտանել/յղել, ընդդէմ դիպել/երթալ/կալ, մօտ հասանել, յանդիման բերել/կացուցանել*. օրինակ՝ *և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել (11)* [և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել (8)]:

Բայական հարադրի նախադաս դիրքով՝ արկանել առաջի, *զալ զհետ, ելանել արտաքս, կալ ընդդէմ*, օրինակ՝ *և ոչ բովանդակ զբանին պայծառութիւն անհաւատիցն արկանել առաջի յայպանունն (351)* [և ոչ թե պայծառ դավանությունը ամբողջովին գցեց անհավատների առաջ ձաղկելու համար (231)]:

Սակայն ավելի շատ են այն կազմությունները, որտեղ մակբայական հարադիրը ձևավորված է *ի/յ* նախդրով և տարածական իմաստ ունեցող բառով: Դրանք են՝

ի բաց ածել/բառնալ/զնալ/դառնալ/դարձուցանել/դնել/ընկենուլ/թողուլ/կալ/կտրել/հատել/մերկանալ/պուղել/վարել/տալ/քեցել, բայական հարադրի նախադաս դիրքով *առնուլ/թողուլ/կոչել ի բաց*

ի դէպ ելանել,

ի մէջ անցանել/արկանել/բերել. բայական անդամի նախադասությամբ՝ *զալ ի մէջ,*

ի մօտ հասանել,

ի ներքս ածել/անկանել/ընթանալ/մտանել,

ի վայր բերել/իջուցանել/կործանել,

*ի վերայ բերել/դնել/հասանել/, նաև բայական հարադրի նախադաս դիրքով՝
գալ/դիմել/ելանել/խաղալ/հասանել/յառնել ի վերայ,*

յառաջ անցանել/նատուցանել/վարել:

Բնագրային օրինակներ՝ *Որ և Կիրոսի աջակցեալ, զմարացն ի բագ բառնայով
զիշխանութիւնն (71) [և Կիրոսին աջակից եղավ մարաց իշխանությունը տապալելու
(46)], այլև զգունդն զոր էառ ի քէն՝ զհետ յղեալ կոչեցեր ի բագ (276) [և այն գունդը, որ
քեզանից առավ (Հուլիանոսը), հետևից մարդ ուղարկելով՝ հետ կանչեցիր (177)]:*

Ինչպես երևում է օրինակներից, բայական հարադրությունները հիմնականում
երկանդամ են: Նախդիրներն այստեղ առանձին բաղադրիչ չենք համարում, քանի որ
դրանք մտնում են հոլովների ձևավորման մեջ: Խորենացու երկուն վկայված են նաև
եռանդամ, մեկ դեպքում՝ քառանդամ բայական հարադրություններ, որոնք փաստորեն
դարձվածքի արժեք ունեն: Այստեղ առանձին բաղադրիչներ են համարված նյութական
իմաստ ունեցող խոսքի մասերը: Այս հարադրություններում ոչ բայական անդամները
միմյանց նկատմամբ գտնվում են հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական
հարաբերության մեջ (ինչպես՝ *առնել թիկունս օգնականութեան, խոյզ խնդրոյ առնել,
հեղումն արեան առնել, մտաց լծակաւ կշռել, յարբունս հասակի հասանել, չափ դնել
բանի*), իսկ բայական անդամի հետ արտահայտում են զանազան խնդրային և
պարագայական հարաբերություններ՝ մեծ մասամբ նախդրավոր կառույցներով
ձևավորված, ինչպես՝ *այր զարամբ ելանել, արկանել զանձն ի ջանս, զոգի ի բաց դնել,
կործան յերկիր զարկուցանել, ուշ ի կուրծս անկանել, պատճառս ի վերայ դնել/յուզել,
պետ յանձին ունել, ցիր դիաթաւալ կացուցանել, փոյթ յանձին ունել, փոյթ ընդ փոյթ
լինել*: Քառանդամ բայական հարադրությունն է՝ *խոյզ խնդրոյ առաջի արկանել*:

Բերենք բնագրային օրինակներ՝ *... առ որ առաքեաց Աբգար երկուս ի գլխաւո-
րաց իւրոց ... ի քաղաքն Բեթբուրին... առնել զնա թիկունս օգնականութեան (148) [Աբ-
գար իր գլխավորներից երկուսին ուղարկեց նրա մոտ Բեթբուրին քաղաքը... նրա օգնու-
թյունն ու պաշտպանությունը խնդրելու (95)], Վասն որոյ էդ ի մտի հնարել գտանել
նշանագիրս Հայոց լեզուիս, և արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր (317)
[Ուստի նա միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել, և
աշխատանքի անձնատուր լինելով՝ զանազան փորձերով չարչարվում էր (207)]:*

Եթե ուշադրության առնենք բայական հարադրությունների կաղապարների բա-
ռային իրացումները, կտեսնենք, որ բայական հարադրի դերում առավելապես գործած-
վում են *առնել* և *լինել* բայերը, որոնցով Խորենացու երկուն հանդիպում են մի քանի
տասնյակ կազմություններ: Բերենք մի շարք օրինակներ՝ *ագդ առնել, ակնարկութիւն
առնել, աշխատ առնել, ապաստան առնել, ապաւեն առնել, առաջի առնել, ասպատակ*

առնել, արժանի առնել, կին առնել, կոծ առնել, հալածական առնել, հարկ առնել, հրձիգ առնել, ձերբակալ առնել, մարտ առնել և այլն. լինել բայով՝ ականատես լինել, ակնկառոյց լինել, անձնատուր լինել, աշխատ լինել, լուռ լինել, լսող լինել, խարդաւանակ լինել, խաւիան լինել, հեղձամահ լինել, հետահաս լինել, հնազանդ լինել, հրկէզ լինել, ձեռնտու լինել, մարթ լինել, միջամուխ լինել և այլն:

Բնագրային օրինակներ՝ *Եւ նոյն հետայն փոյթ ընդ փոյթ ագդ առնէ Փիլիպպոսի կայսեր Հռովմայեցւոց, օգնականութիւն ի նմանէ խնդրելով (208) [Եվ իսկույն շտապով ծանուցանում է հռոմայեցիների Փիլիպպոս կայսրին, նրանից օգնություն խնդրելով (134)], Մի՛ ոք անհաւատասցի, քանզի և մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի (120) [Թող ոչ ոք չկասկածի, որովհետև մենք ինքներս մեր աչքով տեսանք այն դիվանը (78)]:*

Ըստ գործածման հաճախականության հարադրավոր կազմությունների բայական բաղադրիչների մեջ հաջորդ տեղում է *տալ* բայը: «Հայոց պատմության» մեջ վկայված են նշված բայով հետևյալ հարադրությունները՝ *թոյլ տալ, խոյս տալ, խրատ տալ, հրաման տալ, ձեռն տալ, (ձեռս տալ), ճակատ տալ, պատասխանի տալ, պատուէր տալ, սատարս տալ, տեղի տալ*. հանդիպում են նաև կիրառություններ *տալ* բայի առաջադաս դիրքով՝ *տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրէժ*. օրինակ՝ *Իսկ քաջին Տրդատայ երազապէս և բազում ճակատս տուեալ, նախ ի Հայս, ապա ի Պարսս՝ իւրով անձամբ առնէր գյաղթութիւնն (225) [Իսկ քաջ Տրդատը արագ-արագ բազմաթիվ ճակատամարտեր տալով նախ Հայաստանում և ապա Պարսկաստանում՝ ինքն անձամբ տանում էր հաղթությունը (146)]:*

Մյուս բայերով վկայված կազմությունները քանակով զիջում են վերը նշվածների, թեև ի հայտ են բերում թե՛ բայական, թե՛ անվանական բաղադրիչների բազմազանություն և բավականին լայն զուգորդելիություն, ինչպես օրինակ՝ *ակն ածել, ակն ունել, աշխատութիւն կրել, առաջի արկանել, առաջի դնել, բուռն հարկանել, գայթակղութիւն արկանել, գերի ածել, գերի վարել, դադառումն առնուլ, դարան գործել, զօր յարուցանել, թագ կապել, թափուր մնալ, թէկն ածել, խնամ տանել, կասկած ունել, կին առնուլ, հալածական արկանել, հանգիստ առնուլ, հոգ տանել, ձայն արկանել, ճախր առնուլ, ճաշ գործել, մարտ դնել և բազմաթիվ այլ կիրառություններ:*

Ինչ վերաբերում է բայական հարադրությունների բաղադրիչների շարադասությանը, ապա ինչպես երևաց հարադրավոր բայերի կառուցվածքային կաղապարների քննությունից, բայերը հիմնականում գրավում են վերջադաս դիրք, թեև խորենացին հաճախ գործածում է և նախադաս բայերով հարադրություններ՝ խոսքի ոճավորման կամ նախադասության տրամաբանական շեշտի հետ կապված նկատառումներով: Կարելի է նշել հետևյալ օրինակները՝ *առնել աշխարհագիր, առնել արժանի, առնել բաշխումն,*

առնել ընդունելություն, առնել հարցումն, առնել քննություն, առնուլ սկիզբն, դնել ունկն, կապել թագ, հարկանել սպասավորություն, ունել պահ, ունել պատճառ, տալ հրաման, տալ ճակատ, տալ պատերազմ, տալ վրեժ և այլն:

Վերլուծական կառուցվածքի բայերի կիրառությունները խորենացու երկին հաղորդում են ոճական հարստություն և բազմազանություն, ավելի աշխույժ և կենդանի են դարձնում շարադրանքը: Դրանց հետագա ուսումնասիրությունը բնագրային օրինակների հիման վրա կբացահայտեն նշված կառույցների ոճական կիրառությունների բնորոշ առանձնահատկությունները և «Պատմության» լեզվի պատկերավորման համակարգում նրանց խաղացած դերը:

Բացի այդ, բայագործածությունը (այդ թվում նաև վերլուծական կառուցվածքի բայերի բնագրային կիրառությունների առանձնահատկությունները) ի թիվս այլ լեզվա- ոճական հատկանիշների կարող է լինել այն էական բնութագրերից մեկը, որոնց հիման վրա կարելի է լուծել որևէ բնագրի հեղինակային պատկանելության հարցը:

Հանրահայտ է, որ հայ բանասիրության մեջ շատ երկեր, այդ թվում խորենացու «Հայոց պատմությունը» բազմիցս վեճեր են հարուցել իրենց ստեղծման հանգամանքների և բնագրերի հետագա ճակատագրի առումով: Հատկապես քննարկվել է այն հարցը, արդո՞ք խորենացու բնագրի բոլո՞ր հատվածներն են հարազատ և արդյո՞ք դրանք բնագրին հետագա միջամտությունների արդյունք չեն: Այդպիսի միտք է հայտնվել մասնավորապես երկի ամենանշանավոր հատվածներից մեկի՝ «Ողբի» վերաբերյալ:

Այս հարցի լուծման համար անհրաժեշտ կլինի կատարել խորենացու երկի տարբեր հատվածներում նախապես որոշակի սկզբունքներով ընտրված լեզվական հատկանիշների հանդիպման հաճախականության մանրամասն վիճակագրական քննություն, որ ապագայի գործ է: Ինչ վերաբերում է սույն հոդվածում քննարկված լեզվական միավորներին, կարող ենք ասել, որ նախնական դիտարկումներով վերլուծական կառուցվածքի բայերը «Ողբի» մեջ (ընդհանուր առմամբ 16 բայագործածություն) իրենց հաճախականությամբ չեն զիջում «Հայոց պատմության» մյուս հատվածներում հանդիպող կիրառություններին:

Այսպիսով, խորենացու երկում վերլուծական կառուցվածքի բայերի կիրառական առանձնահատկությունների քննությունը կարևոր նշանակություն է ստանում «Պատմության» լեզվաոճական բնութագրման և բնագրի հետ կապված այլևայլ բանասիրական հարցերի լուծման համար:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Հոդվածը նվիրված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ վկայված ճարտարապետաշինարարական տերմինների քննությանը: Հին Հայաստանի քաղաքական, սոցիալական, մշակութային, հոգևոր կյանքի մասին արժեքավոր տեղեկություններից բացի Մ.Խորենացու աշխատությունը կարևոր լեզվական նյութ է պարունակում նաև ճարտարապետաշինարարական տերմինների վերաբերյալ, որոնց մեջ կարելի է առանձնացնել շինարարական աշխատանքների, կառույցների և նրանց մասերի, շինանյութերի, ճարտարապետական հարդարանքի նմուշների անվանումները և այլն: Նշանակալից արժեք ունեն նաև Շամիրամի կառույցների, Երվանդաշատ քաղաքի, Երվանդակերտ դաստակերտի նկարագրությունները՝ Հին Հայաստանում շինարարական տեխնիկայի մակարդակի ուսումնասիրության առումով:

Հայ բազմադարյան մշակույթի պատմության մեջ Մ.Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը նշանակալից երևույթ է բազմաթիվ առումներով: Այն անգնահատելի սկզբնաղբյուր է հայագիտության տարբեր ճյուղերով զբաղվող գիտնականների՝ պատմաբանների ու հնագետների, փիլիսոփաների ու աստվածաբանների, լեզվաբանների ու գրականագետների, բանահյուսության ու դիցաբանության մասնագետների համար: Խորենացու աշխատության համապարփակ բնույթը և լայն ընդգրկումները, Հայաստանի պատմական, քաղաքական, ռազմական, տնտեսական, գիտական, մշակութային կյանքի արտացոլումները անհրաժեշտ լեզվական նյութ են մատակարարում նաև տերմինաբանության պատմությամբ հետաքրքրվող լեզվաբաններին և գիտության կամ արվեստի տվյալ կոնկրետ բնագավառի մասնագետներին: «Հայոց պատմության» էջերում տեղ են գտել

ռազմական գործին, դիվանագիտական հարաբերություններին, երաժշտությանն ու քերթողական արվեստին, ինչպես նաև ճարտարապետությանն ու շինարարական տեխնիկային վերաբերող բազմաթիվ տերմիններ: Այդ տերմինները սփռված են Խորենացու երկի այլևայլ հատվածներում, բայց նրանց մի զգալի մասը կենտրոնացած է այն գլուխներում, որտեղ պատմիչը խոսում է թագավորների և այլ տիրակալների շինարարական գործունեության մասին: Այդ հատվածներից ամենանշանավորներն են առաջին գրքի ԺԶ գլուխը, որը նվիրված է Շամիրամի կողմից քաղաքի ու ամբարտակի և իր տան կառուցմանը, երկրորդ գրքի ԼԹ գլուխը՝ «Յաղագս շինուածոյ Երուանդաշատ քաղաքի» և հատկապես երկրորդ գրքի ԽԲ գլուխը՝ «Վասն ձեռակերտին, որ կոչի Երուանդակերտ»: ճարտարապետական արվեստի նկատմամբ Խորենացու ունեցած հետաքրքրության վկայությունն է նաև երրորդ գրքի ԿԲ գլուխը, որտեղ պատմիչը տալիս է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի նկարագրությունը, ուր ուսումնառության էին ուղարկել նրան և նրա աշակերտակիցներին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Նշենք ի դեպ, որ Ալեքսանդրիայի նկարագրության հատվածը բանասերները համենատուն են Կեղծ Կալիսթենեսի «Ալեքսանդրի պատմության» մեջ վկայված՝ Ալեքսանդրիա քաղաքի շինարարության նկարագրության հետ և շատ ընդհանրություններ են գտնում: Սա այն ծանրակշիռ կռվաններից մեկն է, որոնց հիման վրա «Ալեքսանդրի պատմությունը» հայ բանասիրության մեջ ընդունված է համարել Մ.Խորենացու թարգմանությունը:

Հոդվածի սահմանափակ ծավալը հնարավորություն չի տալիս մանրամասն վերլուծելու այդ և «Պատմութան» մեջ ներկայացվող նաև այլ կառույցների նկարագրությունները, որոնք ոչ միայն խիստ արժեքավոր են որպես պատմական վկայություններ և գեղարվեստական ստեղծագործության նմուշներ, այլև հետաքրքրական տեղեկություններ են պարունակում Հին Հայաստանում շինարարական տեխնիկայի զարգացման աստիճանի մասին: Այստեղ մեր նպատակն է ամփոփ կերպով ներկայացնել Մ.Խորենացու պատմության մեջ վկայված ճարտարապետաշինարարական տերմինների իմաստային խմբերը և բառակազմական առանձնահատկությունները

«Հայոց պատմության» մեջ վկայված շինարարական և ճարտարապետական տերմինները և տերմինային կապակցությունները հասնում են մոտ երկու հարյուրի: Ընդ որում, այդ միավորներից շատերը վկայված են ինչպես տերմինային, այնպես էլ սովորական կիրառություններով (օրինակ՝ *ամրացուցանել* «ամրացնել» ընդհանրապես, բայց՝ *ամրացուցանել որմովք* կամ *պարսպօք* «ամրացնել պատերով՝ պարիսպով,

պարսպապատել»): Մենք քննության ենք առնում բոլոր այն միավորները, որոնք ունեն տերմինային կիրառություն թեկուզ որևէ առանձին իմաստով:

Վկայված տերմինային միավորների մեջ կարելի է առանձնացնել հետևյալ իմաստային խմբերը:

Շինարարական աշխատանքների անվանումներ: Այստեղ նկատի ունենք ինչպես բուն շինարարական գործողությունները և նրանց տարբեր փուլերը, այնպես էլ հարդարման և գեղազարդման աշխատանքները: Նշենք նաև, որ այս խմբի տերմինները հիմնականում բայեր են, բայց կան նաև սակավաթիվ գոյականներ՝ *ագուցանել, ամրացուցանել, արձանացուցանել, բրել, ետեղագրել, զարդարել, կանգնել, կառուցանել, կոփել, հարթել, հեղուսել, հերծել, հիմնել, ծուլել, յարդարել, յօրհնել, մածուցանել, նորոգել, շարել, շինել, շրջափակել, չափել, պաճուճել, պարսպել, պնդել, փոսել, փորել, փորագրել, քանդել, քերել, ինչպես նաև՝ աշտարակաշինութիւն, աշտարակագործութիւն, գծագրութիւն, կանգնումն, նորոգումն, քակտումն* և այլն:

Շինությունների և զանազան կառույցների, կոթողների, ինչպես նաև ճարտարապետորեն ձևավորված տարածքների անվանումներ: Նկատելի է, որ սա ամենաընդարձակ խումբն է, քանի որ ընդգրկում է պաշտամունքային, ռազմական, քաղաքացիական, տնտեսական, հասարակական և այլ նշանակության ամենաբազմազան կառույցները՝ *ագարակ, աղքատանոց, ամբար, ամբարանոց, ամբարտակ, ամուր* («ամրոց» իմաստով), *ամրոց, աշտարակ, ապարանք, աւազան, բաղանիք, բանտ, բերդ, բուրգ, գաւիթ, գերեզման, գետղ/գիւղ, գոմ, դաստակերտ, դղեակ, եկեղեցի, զենարան, իջավան/իջևան, խրճիթ, կաթողիկէ, կամուրջ, հանգստարան, հիւանդանոց, հովուավանք, հրապարակ, ծիարձակարան, ձեռակերտ, մայրաքաղաք, մեհեան, մենաստան, մթերանոց, միայնարան, միջնաբերդ, նաւակամուրջ, նաւահանգիստ, շէն, շինուած(ք), շինութիւն, շիրիմ, շտեմարան, պալատն, պարիսպ, սենեակ, վանք/վանորայ, տաճար, տուն, փարախ, փողոց, փորուած, քաղաք, քաղաքագիւղ* և այլն:

Շինությունների հատվածների, ճարտարապետական հորինվածքի և հարդարանքի մանրամասների անվանումներ՝ *անդրի, աստիճան, արձան, արձանագրութիւն, բազին, դահլիճ, դուռն, դրօշուած, խորան, խորշ, կենդանագրութիւն, հեղուսուած, հիմն, հոր, մահարձան, մուտք, յատակ, յարկ, շարած, որմն, պատկեր* (նկար և քանդակ՝ արձան), *սալայատակ, սիւն, վերնատուն, տանիք, փեղկ, քանդակ* և այլն:

Շինանյութերի անվանումներ, որոնք պարզ արմատական բառերի տեսքով համեմատաբար սակավ են հանդիպում՝ **աւազ, երկաթ, կապար, մետաղ, պղինձ, որձաքար, վէմ, տախտակ, փայտ, փղոսկր, քար** և այլն:

Կառույցների և նրանց մասերի բնութագրական հատկանիշներ, որոնց մեջ հանդիպում են նաև շինանյութերի անուններ պարունակող բաղադրյալ կազմություններ և այսպիսով որոշ չափով համալրում բուն շինարարական տերմինների վերը նշված խմբի սակավությունը՝ **եռայարկ, երեքբարեան, երկաթագամ, երկաթակալ, երկաթապատ, երկաթեղէն, երկաթի, եօթնպարսպեան, խորանաւոր, կարակնածև, կճեայ, կոփածոյ, կրկնայարկ, ներկածոյ, ողորկագոյն, որձաքարեայ, պղնձակերտ, պղնձածոյլ, պղնձապատ, պղնձի, վիմատաշ, փայտակերտ, փայտեղէն, քարակտուր, քերածոյ, քոււաւոր** և այլն:

Այս վերջին խմբի միավորներին իմաստային տեսակետից որոշ չափով մոտ են նաև այնպիսի բառեր, որոնք ճշգրիտ տերմինային նշանակություն չունեն, բայց բնութագրում են շինությունները կամ նրանց տեղանքը և արժեքավոր են ոչ միայն տերմինաբանության, այլև նկարագրության գեղարվեստականության առումով: Նշենք միայն մի քանի օրինակ՝ **ամրութիւն, գեղապատշաճ, գեղեցկանիստ, հաստատուն, հրաշակերտութիւն, սաստկակառոյց, վիմուտ** և այլն: Տեղանքի մանրամասն և պատկերավոր նկարագրությունները խոսում են նաև հայ ճարտարապետական արվեստի կարևոր կատկանիշներից մեկի՝ շինության տեղի և դիրքի մտածված և նպատակադիր ընտրության կարևորությունը գիտակցելու մասին, որին ամենայն հավանականությամբ ծանոթ էր և պատմահայրը:

Բառակազմական տեսակետից Խորենացու պատմության մեջ վկայված ճարտարապետաշինարարական տերմինները մեծ բազմազանություն չեն ներկայացնում: Նրանց զգալի մասը պարզ արմատական կազմություններ են, ընդ որում այդպիսի միավորներ հանդիպում են առանձնացված բոլոր իմաստային խմբերում, բացի վերջինից, որտեղ բացառապես բաղադրյալ կազմություններ են: Այսպես, պարզ արմատներ են՝ 1. **բրել, կոփել, հարթել, հեղուսել, հերձել, հիմնել, ծուլել, շարել, շինել, չափել, պարսպել, պնդել, փոսել, փորել, քանդել, քերել** և այլն (սրանք պարզ ենք համարում պայմանականորեն, քանի որ պարզ է բայարմատը, իսկ ամբողջ բայը համարվում է բաղադրյալ՝ ածանցավոր կազմություն), 2. **բանտ, բերդ, բուրգ, գաւիթ, գերեզման, գեօղ/գիւղ, գոմ, դղեակ, եկեղեցի, խրճիթ, կաթողիկէ, կամուրջ, շէն** և այլն, 3. **անդրի, աստիճան, արծան, բագին, դահլիճ, դուռն, խորշ, հիմն, հոր, մահարծան, մուտք, յատակ, յարկ, որմն, պատկեր, սիւն, փեղկ** և այլն, 4. **աւազ, երկաթ, կապար, մետաղ, պղինձ, վէմ, տախտակ, փայտ, քար**:

Բաղադրյալ տերմինների մեջ կարելի է առանձնացնել ածանցավոր կազմությունները և բարդությունները:

Բարդ տերմինները հիմնականում երկու արմատի հոդակապավոր միացություններ են՝ *եռայարկ, երկաթագամ, կարակնածև, ձեռակերտ, նաւակամուրջ, ործաքար, պղնձապատ, սալայատակ, վիմատաշ, փայտակերտ* և այլն: Այս կազմությունները զգալի քանակ են կազմում: Անհոդակապ բարդություններից վկայված է ընդամենը երկու օրինակ՝ *մահարծան* և *փղոսկր*: Մի քանի դեպքում բարդության առաջին բաղադրիչը ածանցավոր հիմք է՝ *միջնաբերդ, կրկնայարկ*: Մի շարք տերմիններում բարդ հիմքին կցվել է վերջածանց՝ *արծանագրութիւն, երեքքարեան, եօթնպարսպեան, ործաքարեայ, ծիարծակարան* և այլն:

Բաղադրյալ հիմքով բայերի մեջ կարելի է առանձնացնել պատճառական կազմությունները՝ *ագուցանել, ամրացուցանել, արծանացուցանել, կառուցանել, մածուցանել*, հոդակապավոր բարդ հիմքով բայերը՝ *ետեղագրել, շրջափակել, փորագրել*, և ածանցավոր հիմքերով սակավաթիվ բաղադրությունները՝ *զարդարել, յարդարել, նորոգել*:

Ածանցավոր տերմինները հանդես են գալիս միայն վերջածանցներով:

Դրանք տեղ ցույց տվող *արան, անոց, ոց, ստան* ածանցներն են, որոնցով հիմնականում կազմվում են շենքերի անվանումներ՝ *զենարան, հանգստարան, միայնարան, շտեմարան, աղքատանոց, ամբարանոց, հիւանդանոց, մթերանոց, ամրոց, մենաստան*:

Ի, եայ և *եղէն* ածանցները տվյալ նյութից պատրաստված լինելու իմաստն ունեն՝ *երկաթի, պղնձի, երկաթեղէն, կծեայ* «մարմարյա», *փայտեղէն*:

Աւոր ածանցով ունենք երկու տերմին՝ «սերող հիմքի նշանակած առարկան ունեցող» իմաստով՝ *քուաւոր* «քիվ ունեցող», *խորանաւոր* «խորան ունեցող»: *Ած* ածանցով կազմվում են «սերող հիմքի նշած գործողության հետևանք» իմաստով տերմիններ, որոնք գրաբարում գոյականներ են՝ *դրօշած, հեղուսուած, շարած, շինուած, փորուած*: Շինարարական գործողությունների կամ նրանց արդյունքի մի շարք անվանումներ կազմված են *ութիւն, ումն* ածանցներով՝ *արծանագրութիւն, աշտարակաշինութիւն, աշտարակագործութիւն, գծագրութիւն, կանգնումն, նորոգումն, քակտումն* և այլն:

Սովսես Խորենացու «Յայոց պատմության» մեջ գործածված ճարտարապետաշինարարական տերմինները իրենց իմաստային բազմազանությամբ և կիրառման հաճախականությամբ վկայում են Հին Հայաստանում ճարտարապետական արվեստի և շինարարական տեխնիկայի զարգացման բարձր մակարդակի մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, 1940, էջ 60:
2. Տե՛ս Ն.Ակինյան Դոնդ Երեց և Մովսես Խորենացի, Վիեննա , 1930, էջ 187:
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, Ներածություն, էջ LIX-LX:
4. Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 81:
5. Ն. տ., էջ 90:
6. Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 319:
7. Ն. տ., էջ 316:
8. Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 181:
9. Հմմտ. Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցի շուրջը, ՊԲՀ, 1964, N 3, նույնի՝ Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանչի և մեկնիչի հարցը, ՊԲՀ, 1980, N 3, նույնի՝ Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցը, - Միջազգային հայերենական գիտաժողով, Երևան, 1984:
- 10.Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 174 – 190:
- 11.Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Հայկական խմբագրություններ, աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, Երևան, 1989:
- 12.Հ. Սիմոնյան, Դիտողություններ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» բառապաշարի վերաբերյալ, «Երկրորդ հայերենագիտական միջազգային գիտաժողով» (21-23 սեպտեմբեր, 1987), Երևան, 1993, էջ 219:
- 13.Գիրք Պիտոյից, աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, 1993, էջ 5-6:
- 14.Ն. տ., էջ 320 – 321:
- 15.Գ. Ջահուկյան «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները», ՊԲՀ, 1981, համար 3:
- 16.Գ. Թոսունյան, Մովսես Խորենացու ասույթները, ՀԳԱ հրատ, Երևան, 1991:

17. Տեն Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955, Է.Դ. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, Գ. Բ. Джаукян, Общее и армянское языкознание, Ереван, 1978, Ա. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը «Հայոց լեզվի կառուցվածքը», Ժող. Երևան, 1975, նույնի՝ Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Ջուզադրական – տիպաբանական քննություն, Երևան, 1986, Բ. Ղազարյան, Հաճախականության բառարանը հայոց լեզվի մինիմում բառարանի հիմք «Բառարանագրության և բառագիտության հարցեր», Ժող., Երևան, 1972, Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987 և այլն:
18. Հմմտ. Բ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 117 – 118:
19. Խ. Կանայան, Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն, Երևան, 1940:
20. Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954:
21. Տեն Բ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 137 – 138:
22. Բ. Կ. Ղազարյան, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, ՀԳԱ հրատ., Երևան, 1982:
23. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, ՀԳԱ հրատ., Երևան, 1989:
24. Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, ՀԳԱ հրատ., 1989:
25. Ն.տ., էջ 56:
26. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Երևան, 1994, էջ 228:
27. Ն. տ., էջ 230:
28. Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան 1981, էջ 174 – 190:
29. Հմմտ. Բ. Ղազարյան, «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանի» տվյալների հետ:

30. Տվյալը քաղել ենք Բ. Ղազարյանի «Հաճախականության բառարանը հայոց լեզվի մինիմում-բառարանի հիմք» աշխատությունից, էջ 117:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբգարյան Գ. Վ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մի քանի մեկնաբանությունների շուրջ, ՊԲՀ, 1987, 4:
2. Աբեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899:
3. Աբրահամյան Ա. Գ., Մովսես Խորենացի, Երևան, 1954:
4. Աբրահամյան Ա. Գ., Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, ՊԲՀ, 1981, 3:
5. Ալեքսանյան Ա. Վ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժանրային մի առանձնահատկության մասին, ՊԲՀ, 1990, 2:
6. Ахманова О.С., Мельчук И. А., Падучева Е. В., Фрумкина О. М., О точных методах исследования языка, Москва, 1961:
7. Աղայան Է. Բ., Բայակազմությունը ժամանակակից հայերենում, ԳԱՏ, 1963, 5:
8. Աղայան Է. Բ., Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում (կառուցվածքային վերլուծություն), ՊԲՀ, 1963, 3:
9. Աղայան Է. Դ., Գրաբարի քերականություն, Երևան, 1964:
10. Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հ.1-4, Եր., ՀՍՍՌ գիտ. ակադ., 1952:
11. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1955:
12. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (2-րդ հրատ.), Երևան, հ. 1-4, 1971 – 1979:
13. Андреев Н. Д., Статистико – комбинаторное моделирование языков, Москва, 1967:
14. Առաքելյան Վ., Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, ՀՍՍՌ գիտ. ակադ. հրատ., 1954:

15. Առաքելյան Վ. Դ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981:
16. Առաքելյան Վ. Դ., Խորենացու լեզուն և ոճը, ՊԲՀ, 1975, 2:
17. Առաքելյան Վ. Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984:
18. Աստվածատուրյան Թ., Համաբարբառ հին և նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:
19. Ավետիսյան Տ. Մ., Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը, «Հայոց լեզվի կառուցվածքը» ժող., Երևան, 1975:
20. Արմեն Հրանտ, Խորենացին և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, ՊԲՀ, 1969, 1:
21. Գալստյան Ս. Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1964:
22. Գալստյան Ս. Ա., Ժամանակակից հայերենի բաղադրյալ բառերի և նրանց բանաձևերի մասին, ԲԵՀ, 1972, 3:
23. Գալստյան Ս. Ա., Ան ժխտական նախածանցով բաղադրությունները ժամանակակից հայերենում, ԼՀԳ, 1973, 5:
24. Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:
25. Էլոյան Ս. Ա., Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963:
26. Թիրեաքյան Միհրդատ, Ի՞նչ է եղած Խորենացին բաժինը Աստվածաշունչի հայերեն թարգմանության մեջ [Հրանտ Արմենի հոդվածի առթիվ, տե՛ս 65], ՊԲՀ, 1970, 3:
27. Թոսունյան Գ. Բ., Մովսես Խորենացու ասույթները (ժողովածու), Երևան, 1991:
28. Իվանով Վյաչ. Վս., Ժամանակագրական տարբեր շերտերի առանձնացումը գրաբարում և Վահագնի երգի տեքստի նախնական կառուցվածքի խնդիրը:
29. Խաչատրյան Օ. Մ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարան, Երևան, ՀԳԱ, 1986:
30. Խաչատրյան Լ., Գրաբարի բացատրական բառարան, Երևան, 2003:
31. Կանայան Խ., Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն, Երևան, 1940:

32. Հանքարձույնյան Վ. Գ., Մովսես Խորենացու Պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը, ՊԲՀ, 1995:
33. Հայկական համաբարբառ, 1 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1972:
34. Հայկական համաբարբառ, 6, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1972:
35. Հայկական համաբարբառ, 2 Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1972:
36. Հայկական համաբարբառ, 4 [գ.1], Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Երևան, 1973:
37. Հայկական համաբարբառ, 4 [գ.2], Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Երևան, 1973:
38. Հայկական համաբարբառ, 3 [գ.1], Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն հայոց, Երևան, 1974:
39. Հայկական համաբարբառ, 5 [գ.1], Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1974:
40. Հայկական համաբարբառ, 7 [գ.1], Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Երևան, 1975:
41. Հայկական համաբարբառ, 7 [գ.2], Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, 1976:
42. Հայկական համաբարբառ, 7 [գ.3], Մովսիսի Խորենացույ Պատմութիւն հայոց, Երևան, 1976:
43. Հայկական համաբարբառ, 3 [գ.2], Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն հայոց, Երևան, 1976:
44. Հայկական համաբարբառ, 3 [գ.3], Փաւստոսի Բուզանդացույ պատմութիւն հայոց, Երևան, 1978:
45. Հայկական համաբարբառ, 5 [գ.2], Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1978:
46. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան, Երևան, 2010:
47. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմութիւնը, Երևան, 1987:

48. Ղազարյան Բ. Կ., Հաճախականության բառարանի յուրահատուկ կողմերը, ԼՀԳ, 1966, 9:
49. Ղազարյան Բ. Կ., Հաճախականության բառարանը հայոց լեզվի մինիմում բառարանի հիմք «Բառարանագրության և բառագիտության հարցեր» ժող., Երևան, 1972:
50. Ղազարյան Բ. Կ., Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, ՀԳԱ, 1982:
51. Մաթևոսյան Ա. Ն., Մովսես Խորենացին մեսրոպյան գրերի մասին, ՊԲՀ, 1990, 3:
52. Մաթևոսյան Ա. Ս., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գրքի հարցը, ՊԲՀ, 1991, 186-205:
53. Մալխասյանց Ստ., Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940:
54. Մանանդյան Հ., Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928:
55. Մանանդյան Հ., Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934:
56. Մանանդյան Հ., Մովսես Խորենացու բառապաշարը- Երևան, 1934:
57. Մարգարյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, Պետ. համալս., 1990:
58. Մարգարյան Ա. Ս., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966
59. Մկրյան Մ. Ս., Մովսես Խորենացի, Երևան, 1970:
60. Մկրտչյան Ռ. Խ., Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՂ 4, Երևան, 1977:
61. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500 - ամյակը, միջազգային գիտաժողովի դրույթներ, Երևան, ՀԳԱ հրատ., 1991:
62. Մուրադյան Գ. Ս., Մովսես Խորենացու «Պատմության» լեզվի հունաբան շերտը, ՊԲՀ, 1993, 1 – 2:
63. Մուրադյան Գ. Ս., «Պիտոյից գիրքը» և նրա հունարեն նախօրինակը, ՊԲՀ, 1984, 3:

64. Մուրվալյան Ա. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայականություն, Երևան, 1959:
65. Новое в лингвистике, вып. III, Москва, 1969.
66. Штейнфильдт, Частотный словарь современного русского литературного языка, Таллин, 1963.
67. Плоткин В. Я., Количественный аспект фонетического моделирования словарных единиц в современных германских языках, сб. “Структурно-типологическое описание современных германских языков”, Москва, 1966.
68. Ջահուկյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:
69. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, ՊՀԲ, Երևան, 1969:
70. Ջահուկյան Գ. Բ., Գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը ըստ վիճակագրական տվյալների, Լրաբեր հաս. գիտ., ՀՍՍՀ ԳԱ, 1971, 5:
71. Ջահուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
72. Ջահուկյան Գ. Բ., Գրաբարի քերականության պատմություն, ՊԲՀ, Երևան, 1974:
73. Ջահուկյան Գ. Բ., Սովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981, 3:
74. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, ՀԳԱ, Երևան, 1989:
75. Ջահուկյան Գ. Բ., Հունարան հայերենը և նրա մշակած նախածանցների համակարգը, ՊԲՀ, 1993, 1 – 2:
76. Ջահուկյան Գ. Բ., Հին հայերենի վերջածացների ծագումը, ՊԲՀ, 1994, 1 – 2:
77. Джаукян Г. Б., Общее и армянское языкознание, Ереван, 1978.
78. Джаукян Г. Б., О применении метода глоттохронологии к армянскому языку, Вест. общест. наук, АН АрмССР, 1969, 9.
79. Джаукян Г. Б., Статистический метод изучения диалектов и их истории (на материале армянского языка), Изд-во Ер. Ун-та, Ереван, 1970.
80. Рождественский Ю. В., Типология слова, Москва, 1969.

81. Սարգսյան Ա. Ե., Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը «Հայոց լեզվի կառուցվածքը», Ժող., Երևան, 1975:
82. Սարգսյան Ա. Ե., Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Ձուգադրական – տիպաբանական քննություն, Երևան, 1986:
83. Սարգսյան Գ. Խ., Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ, ՊԲՀ, 1998, 1-2:
84. Սարգսյան Գ. Խ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Երևան, 1991:
85. Սիմոնյան Հ. Ա., «Ալեքսանդր Մակեդոնացու պատմության» հայերեն թարգմանությունը և նրա խմբագրությունները, ՊԲՀ, 1979, 1:
86. Սիմոնյան Հ. Ա., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մի սկզբնաղբյուրի մասին, ՊԲՀ, 1911, 2:
87. Սրբոյն հորն մերոյ Մովսիսի Խորենացւոյ մատենագրութիւնք, 2-րդ տպ., Ս. Ղազարու, 1865:
88. Սրբոյ քերթողահոր մերոյ Մովսիսի Խորենացւոյ նախակրթութիւն հռետորական ասացեալ գիրք պիտոյից, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 1796:
89. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1982:
90. Տեր – Մկրտչյան Գալուստ, Խորենացու պատմության ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1896:
91. Топоров В. Н., Материалы для дистрибуции графем в письменной форме русского языка, сб. “Структурная типология языков”, Москва, 1967.
92. Քոսյան Վ. Ա., Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980:
93. Словарь языка Пушкина, I-IV, Москва, 1956-1961.
94. Словарь-справочник “Слова о полку Игореве”, вып. 1. Москва, Ленинград, 1965.
95. Фрумкина Р.М., Некоторые вопросы методики составления частотных словарей. “Машинный перевод и прикладная лингвистика”, 1959, 2 (9).

96. Фрумкина Р.М., Применение статистических методов в языкознании. ВЯ, 1960, 4.

97. Фрумкина Р.М., Статистические методы изучения лексики, Москва, 1964.